Էջմիածին



ՌՆԸ
ԺԶ ՏԱՐԻ

Մարտ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Գ.

1959



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Վարդապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ	3
ԴԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ.— Դարձ դեպի լուսավոր կյանքը	7
Ցարնելից	10
Լույս	10
Նայեցաց սիրով	11
Քաղվածքներ Գեւորգյան Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից	12
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	14
ԻՒՐԱՅՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՀՆՐԻՀՅԱՆ.—Սուրբ Սարգսի տոնակատարությունը Թբիլիսիում	16
Վեհափառ Հայրապետի ճորելյանը Սփյուռքում	19
ԴԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԵՍՅԱՆ.—Գրիգոր Տաթևացի	25
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ.— Նեւսես Շնորհալու Նրգերը	29
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ.— Ակնարկ հայ կրոնական մամուլի վրա	37
Հ. Գ. ԽԱԼԹԱԽՉՅԱՆ.— Արձանագրությունները հայկական ճարտարապետության ստեղծագործության կոմպոզիցիայում	44
Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ.— Մշակավանք	53
Նկարիչ Բոգդան Սալթանովը Մոսկվայան գինապալատում	58
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.—Համաստեղ, «Աղոթարան»	60
Հանգիստ արժանապատիվ Տ. Հովհաննես Բանանա Տեր-Հարությունյանի Պողոսյանց	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1959 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՒՄ

Տորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի փետրվար 10-ի նիստին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցում «մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչության հարցը»:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ Մայր Աթոռում կազմեց Վարդապետական ընտիր հանձնաժողով, ընտելու համար ընդհանրապես և ի մասնավորի Մայր Աթոռի միաբանների ներկայացրած գրավոր աշխատանքները, վարդապետական աստիճան ստանալու համար:

Վեհ ու բարձր են ենչում ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ անունն ու կոչումը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցում, առանձին կարևորությամբ տեղ են գրավում «վարդապետք եկեղեցւոյ» կամ «սուրբ հարք» կոչված այն վարդապետները, որոնք առաքելական շրջանից մինչև միջին դարերի վախճանը հռչակվել են հիմնականում իրենց աստվածաբանական գրություններով, և որոնք միաժամանակ եղել են բազմակողմանիորեն զարգացած, գիտուն անձնավորություններ, մշակված մտքեր իրենց ժամանակի չափանիշով և հռչակված սրբեր իրենց առաքինազարդ կյանքով և վարքով, և պատասխանատու դեմքեր եկեղեցու նվիրապետության:

Հայ եկեղեցին ունի այսպիսի վարդապետների մի ցանկ «հերոտասան վարդապետք» անվան տակ, որն սմանչելի մի համայրություն է արևելյան և արևմտյան քրիստոնեական մտածողության, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Կոստանդնուպոլսի և Հռոմի Աթոռների: Հայ եկեղեցու կողմից ընդունված այդ վարդապետներն են Ռեթեոս Արեևացին, Դիոնիսիոս Արիսպագացին՝ երկուսն էլ առաքելական դարի դեմքեր և Աթենքի հայրապետներ, Սեղբեստրոս՝ Հռոմի հայրապետ, Արանաս՝ Ալեքսանդրիայի հայրապետ, Կյուրեղ Երուսաղեմացի, Եփրեմ Խուրի, Բասեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Աստվածաբան, Կապադովկիայի երեք նշանավոր հայրեր, Եպիփան Կիպրացի, Հովհան Ոսկեբերան և Կյուրեղ Ալեքսանդրացի: Համաքրիստոնեական համբավ ունեցող այդ «եկեղեցւոյ վարդապետաց» ցանկի վրա մեր Տոնացույցը ավելացրել է նաև զուտ հայ վարդապետների մի ցանկ «թարգմանիչ վարդապետք» անվան ներքո, ըստ հետևյալի. Մեսրոպ, Եղիշե, Մովսես Քերթող, Դավիթ Անհաղթ (չորսն էլ Ե դարից), Գրիգոր Նարեկացի (ԺԱ դար) և Ներսես Շնորհալի (ԺԲ դար), ինչպես նաև Հովհան Օձնեցու (Ը դար), Հովհան Որոտնեցու (ԺԴ դար) և Գրիգոր Տաթևացու (ԺԵ դար) անունները:

Հայ եկեղեցու վարդապետների այս ցանկը լրիվ չէ: Մեր եկեղեցու Ջեռնադրության Մաշտոցում կա օտար ու հայ «եկեղեցու վարդապետներ»-ի մի ուրիշ ցանկ, որի մեջ մտել են Տոնացույցի վերոնիշյալ «հերոտասան վարդապետներ»-ը, առավել Գրիգոր Մանչլացոցն և Հակոբ Մծբնա հայրապետները: Մաշտոցի ցանկից դուրս են մնացել, մեզ անծանոթ պատճառով, Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին: Թարգմանիչ վարդա-

պետներից նիշված են Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը: Ըստ Մաշտոցի՝ Հայ Եկեղեցու վարդապետներն են Մ. Լուսավորիչը, «որդիք և բոռունք Լուսաւորչի», Հովհան Օձնեցի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի:

Համագրելով Տոնացույցի ու Ձեռնադրության Մաշտոցի տվյալները, կազմվում է «Հայ եկեղեցու վարդապետներ»-ի մի ցանկ, ըստ հետևյալի. Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ղազար, Դավիթ Անհաղթ, Մովսես Քերթող, Հովհան Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի: Այս վարդապետները միաժամանակ Հայաստանյայց եկեղեցու տոնելի սրբեր են: Այս ցանկը ևս ամբողջական չէ: Թովմա Մեծոփեցու մոտ կա Հայ եկեղեցու վարդապետների մի այլ ցանկ, որի մեջ նիշվում է նաև Ստեփանոս Սյունեցին: Անհասկանալի է մնացել Ստեփանոս Սյունեցու տոնացույցում չանցնելը, թեև նա Հայաստանյայց եկեղեցու հոգեկիր, նրեշտակակրոն և գիտնական վարդապետներից մեկն է, նշանավոր իր գիտությամբ, նմտությամբ, բարեկարգական գործունեությամբ, սուրբգրական վաստակով: Ստեփանոս Սյունեցու դեպի սրբացում առաջին քայլն առնված է, նա որպես «Հայ եկեղեցու վարդապետ» մտել է Հայսմավուրքի մեջ:

Շատ ցանկալի է, որ առաջիկա ազգային-եկեղեցական ժողովներից մեկում, Ապրիլյան նահատակների նիշատակի սրբացման կապակցությամբ, վերանայվի նաև «Հայ եկեղեցու վարդապետներ»-ի տոնելի ցուցակը, նրա մեջ ընդգրկելով նաև այլ նշանավոր նայ վարդապետների, որոնք թեև Տոնացույցի մեջ չեն անցել պաշտոնապես, բայց անխափան նիշատակվում են սուրբ պատարագի ընթացքում, ինչպիսի՝ են Հովհաննիսյանցը և Միմեոնյանցը, Մովսես Տաթևացի, Գրիգոր Պարոնտեր և Գրիգոր Շղթայակիր պատրիարքներ, հատկապես Երուսաղեմի Պատրիարքության թեմերում, ինչպես նաև արժանավոր այլ վարդապետների անունները:

Մեծ է մեր եկեղեցու մատենագրության, աստվածաբանության, արվեստի և մշակույթի պատմության մեջ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ վաստակը: Նրանց աստվածաբանական բարձր կարողությունները, ուսուցչական-մանկավարժական գործունեությունը, կազմակերպչական հզոր ոգին, Ազգային եկեղեցու համար ցույց տված նախանձախնդրությունը, վարչական, մատենագրական արդյունքները իրապես մեծ են:

Վարդապետության դերությունը Հայ եկեղեցու կյանքում կատարել է չափազանց կարևոր գործ: Այս մասին շատ հատկանշական է Վարդան Այգեկցու հետևյալ առակը. «Ընթանցին զմէկ աշխարհական ի մեղս և բերին առ սարկաւագն, և սարկաւագն ասաց. թէ երէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն, առ նա տարէք. և տարին. և երէցն ասաց. թէ եպիսկոպոսն աստ է, առ նա տարէք. և տարին. և եպիսկոպոսն ասաց. թէ կաթողիկոսն աստ է, առ նա տարէք. և տարին. և կաթողիկոսն ասաց. վարդապետն աստ է, առ նա տարէք. և տարին. և վարդապետն եդ կանոնս և արժանացուց ապաշխարութեամբ...»:

Հայ եկեղեցու վարդապետության դերության դերը, ինչպես «ներքին եկեղեցական, դատական, մշակութային, նույնպես և արտաքին հարաբերությունների բնագավառներում հնգայական է եղել»: (Տե՛ս Լ. Խաչիկյանի «Գլաձորի համալսարանը և նրա սահերի ավարտական ատենախոսությունները», «Պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. XXIII, էջ 4264):

Պատահական չէ ուրեմն այն հանգամանքը, որ Ե դարից սկսյալ Հայ եկեղեցին լուրջ ուշադրություն է նվիրել դեպի այն հոգևոր նեմարանները, դպրեվանքերը, համալսարանները ու ակադեմիաները, «աստվածային գիտութեան բացեալ աղբիւր»-ները, որտեղ պատրաստում էին Հայ եկեղեցու ապագա վարդապետներ: Մխիթար Գոշը (ԺԳ դար) իր «Դատաստանագիրք»-ով կանոնադրել է ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ («Յաղագս դատաստանաց վարդապետաց»), իսկ Գրիգոր Տաթևացին (ԺԵ դար)՝ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՅՈՒԹՅԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ («Գիրք գաւազան տալոյ աշակերտացն ընշմարիտ բանին քարոզութեան՝ որ է չորս աստիճան»):

Զարգացած, հավատավոր, հայրենասեր և առաքինի եկեղեցական նոր սերունդների՝ Հայ եկեղեցու ապագա վարդապետների՝ պատրաստության հարցը միշտ էլ դիտվել է լրջությամբ, կազմակերպվել է շերմ հոգատարությամբ, որպես Հայ եկեղեցու կենսունակության, ինքնուրույնության, ազգային նկարագրի անաղարտ պահպանման էական հարց:

Հայ եկեղեցու վարդապետները իրենց սուրբ ձեռքերում են պահել Հայ եկեղեցու ուղղափառության, ինքնուրույնության պաշտպանության սրբազան դրոշը, զինված աստվածաշնչական, Ս. Գրոց ուսմունքով, աստվածաբանական գիտությամբ, զրաված նաև փիլիսոփայության, գեղարվեստական գրականության և բնական գիտությանց նվաճումներով:

Հայ եկեղեցու այս նշանավոր վարդապետները, ռաբունիները, դպրապետները, նստած

«ի վերայ բարձր և անարկու ամբիոնի բարձունարանին» կամ «յաթոռ վարդապետութեան Հայոց», բխեցրել են «Գետարէն աստուածային իմաստութիւն» և լուսավորել են գիտությամբ և Ս. Գրոց ուսմամբ «զազգս Հայոց և զամենայն աշակերտեալսն»:

Հայ եկեղեցու այդ վարդապետները և նրանց աշակերտները կազմել են Հայ եկեղեցու գոյության, պատմության ՀԱՎԵՐԺԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՇՂԹԱՆ, ե դարից մինչև մեր օրերը: Հայ եկեղեցու մեծանոչակ այս վարդապետները իրենց վանական ու մասնագիտական կրթությունը ստանում էին ժամանակի մեծանամբավ վանքերում, ապրում էին Հայրենի երկրի կյանքով, մասնակցում ժամանակի կրոնական, եկեղեցական, քաղաքական անցուդարձերին և դարուց ի դարս փայլում Հայ եկեղեցու երկնակամարի վրա իբրև «արեգակ, որ լուսաւորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս Հայաստան աշխարհի»: Մեր վարդապետները միաժամանակ խորապես ուսումնասիրում էին բնագիտական, մաթեմատիկական, փիլիսոփայական և այլ իմաստասիրական գիտություններ, նաև երաժշտություն, գրչության արվեստը, նկարչություն և մանկավարժություն:

Կրոնական ու իմացական կենտրոնները, ինչպիսի էին Էջմիածնի դպրոցը, Սյունյաց վարդապետանոցը, Նարեկա վանքը, Գլաձորի ու Տաթևի և այլ անվանի համբավավոր համալսարաններ, գիտության և հավատի օջախներ, կոչվել են մերթ «երկրորդ Աթէնք պանծալի, մայրաքաղաք ամենայն իմաստից, իմաստութեան տուն, կամ Յիսուսական համալսարան»:

Կրթական-իմացական հոգևոր այդ կենտրոններում միշտ եղել են «հոյլք կամ պարք աշակերտաց», «արանց ամբոխութիւնք», որոնք, իրենց վարդապետ ուսուցիչների «շուրջ բակ բոլորեալ», լսել են «ամենայն իմաստութիւնք», մի օր դառնալու համար մեր եկեղեցու և մատենագրության սպասավորներ ու մշակներ, ապագա վարդապետներ:

Մեզ հասած բազմաթիվ մատենագրական փաստեր, ձեռագրեր, հիշատակարաններ վկայում են այն մասին, որ միջնադարի հայոց բարձր տիպի դպրոցներում լավ հիմքերի վրա էր դրված ներքին և արտաքին գիտությունների դասավանդությունը, վանական երկաթյա կարգապահությունը և ուսանողության համար սահմանվել էր բնությունների, ստուգումների՝ «համար տալոյ» կանոնը: «Այս սովորության համաձայն, ուսանողները մի շարք գիտությունների իմացության համար, հատկապես իմաստասիրական, հարտասանական և այլ արտաքին ու կրոնական գիտությունների վերաբերյալ հանդես էին գալիս գրավոր ատենախոսություններով: Ատենախոսությունը ուսման դասընթացի այս կամ այն շրջանի անցման, փոխադրման և ավարտման համար վճռական հանգրվաններից մեկն էր հանդիսանում: Գլաձորում ատենախոսությունները հատկապես եղել են ավարտական քննությունների եզրափակիչ էտապը, և այդ միջոցով ուսանողները հանդես էին բերում իրենց գիտելիքները, պատրաստությունը, հրապարակախոսական շնորհքն ու կարողությունները:

...Այս ատենախոսությունների մեջ ուսանողները հանդես են բերել իրենց իմացությունը բազմաթիվ գիտելիքներից՝ հատկապես փիլիսոփայությունից, տրամաբանությունից, հոգեբանությունից, պատմությունից, գրականությունից, պոետիկայից, աստվածաբանությունից և բնական մի շարք գիտություններից:

Ժե դարի սկզբներին Տարեի դպրոցում, Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ, մոտավորապես երեսուն տարի ուսուցանում էին փիլիսոփայություն, հարտասանություն, իմաստասիրական երկերի մեկնություններ, յուծմունքներ, պատմություն, քերականություն, քերթողական արվեստ, մանկավարժություն (դաստիարակություն), հոգեբանություն, մաթեմատիկա, երկրաչափություն, աստվածաբանություն, մարդակազմություն, երաժշտություն (երգեցողություն), նկարչություն, գրչության արվեստ և աստվածաբանական առարկաներ»: (Տե՛ս Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X—XV դարեր)», Երևան, 1958 թ., էջ 192, 387):

Անա այսպիսի բարձրագույն դպրոցներում սովորած և ինքնուրույն աշխատանքների մեջ կոփված շրջանավարտները, մեր ապագա վարդապետները, ուսուցիչներ, քահանաներ ու արքեպներ, բարձրագույն կրթության տիրացած, բազմակողմանիորեն զարգացած, մտնում էին ժողովրդի մեջ, զգայուն կերպով արձագանքում ժամանակի հարցերին և ծառայում եկեղեցուն և ժողովրդին:

Անցյալում մեր հոգևոր ակադեմիաների շրջանավարտները հիմնականում զբաղվում էին քահանայագործությամբ և ուսուցչությամբ, իսկ ավելի աչքի ընկնող շրջանավարտները ստանում էին ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, որը մի տեսակ ուսուցչական-գիտական աստիճան էր: Ուսանողության համար ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ բարձր կոչում էր՝ «վասն անուան փառաց և կոչման վարդապետին»:

Այս պատճառով մեր եկեղեցու հայրապետները և եռամեծ վարդապետները հանախ են անդրադարձել մասնավոր և ծայրագույն

վարդապետական գավազանի իշխանության տվչության կարևորությանը: Ինչպես նայտնի է, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, մասնավոր ճանդիսությամբ և արարողությամբ էր տրվում «Բանի սպասաւոր, պատի և աստեճան մասնաւոր վարդապետութեան»: Դրժբախտաբար սակայն միշտ չէ, որ սրբությամբ է պահպանվել նայրապետորի այդ նարգը: Հաճախ եղել են խախտումներ և աճուրդներ ևս ստացել են վարդապետական աստիճան: Այնուամենայնիվ մեր նայրապետերն ու վարդապետները, որպես Հայ եկեղեցու կարգի և կանոնի նախանձախնդիրներ, պայքարել են այդ խորթ երևույթների դեմ և նրահանգել են միայն «ստուգապես» արժանավորներին տալ վարդապետական գավազանի իշխանություն:

Եվ այս մխիթարական իրողությանց և անցյալի պայծառ օրինակների լույսի ներքև, ինչքա՞ն ողորմելի է թվում մեզ մեր օրերի ոտեկոուլս Աեթիլիասի «եպիսկոպոսներ»-ի և «վարդապետներ»-ի ձեռնադրությանց արշավը, երբ նույնիսկ չեն նարգվում նվազագույն կանոնները և ավանդությունները պահանջված տարիքի, նոգևոր-գիտական պատրաստության, փորձառության և վաստակի վերաբերյալ:

Արդյո՞ք ժամանակը չէ՞ սանձ դնելու անպատասխանատու և անկարգ այս արարքներին:

Վենափառ Հայրապետը Հայ եկեղեցու նախանձախնդիր վարդապետներից մեկն է, որ ցանկանում է վերականգնել մեր օրերում ևս, եկեղեցական բարեկարգական այլ ձեռնարկումների նետ, նաև վարդապետական գավազանի տվչության կարգը: «ՄԵՆՔ ԿՓԱՓԱԳՈՒՆՔ ԱՐԱԳ ԹԱՓՈՎ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՔԱՀԱՆԱՆԵՐ: ԴՈՒՔ ՇԱՏ ԼԱՎ ԴԻՏԵՔ ԵՎ ԿՏԵՍՆԵՔ, ԹԵ ԻՆՉՔԱՆ ՄԵԾ Է ԿԱՐԻՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՆԵՐՈՒ: ՄԵՆՔ, ԱՅՈ, ԿՐՂՋԱՆՔ ՇԱՏ ՎԵՂԱՐՆԵՐ ՏԵՍՆԵԼ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ. ԲԱՅՑ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ Է ՄԵՋ ՀԱՄԱՐ ԳԻՏՆԱԼ, ԹԵ ԻՆՉ ԿԱ ՎԵՂԱՐԻՆ ՏԱԿ: ԱՅՍ ՈՂԻՈՎ Է, ՈՐ ՄԵՆՔ ՊԻՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՎԻՆՔ ԱՅՍՏԵՂ:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ, ԱՄԵՆ ԲԱՆԵ ԱՌԱՋ ՏԱԳՆԱՊՆ Է ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԸ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԸ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԻՆ»:

Ինչպես երևում է այս տողերից, Վենափառ Հայրապետը, ամենայն իրավամբ միշտ շեշտը դրել է մեր նոր նոգևորականության կոչման գիտակցության, խոր և բազմակողմանի զարգացման, բարոյական նկարագրի կազմության վրա:

Պանիրեի նպիսկոպոսական ժողովը իր է նիստում որոշեց, որ «Վանքերե դուրս, թեմերու մեջ կուսակրոն քահանա ձեռնադրվելիք անձը պետք է նախ վանքի մը կողմե միաբան ընդունվի, երբա այդ վանքը, ատեն մը ուսանի, ծառայե և ենթարկվի վանական կարգապանության և ապա նույն վանքին մեջ ալ ձեռնադրվի»:

Խստությամբ պետք է պահպանել նաև այն հին կարգը, ըստ որի վարդապետական աստիճանների տվչությունը պետք է լինի ՏՎՅԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ պատկան Աթոռի պետի նավանությամբ և հրամանով, եթե նույնիսկ թեկնածու նոգևորականը առաջնորդական կամ այլ վարչական պաշտոնով գտնվում է իր միաբանությունից դուրս:

Հայ եկեղեցու բարեկարգության, բարգավաճման ամենանիմնական ազդակներից մեկն է դաստիարակումը և պատրաստումը ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՃՇՄԱՐԻՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ, որոնք մեր օրերում ևս կարողանան բարձր պահել Հայ եկեղեցու ուղղափառության սրբազան ջահը և գիտական-մշակութային մակարդակը, և առաջնորդել Հայ եկեղեցին դեպի շինություն և ծաղկում:



ՔԱՐՈՋ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՐՁ ԴԵՊԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԿՅԱՆՔԸ

(Անառակի կիրակին)

«Կորուսեալ էր և գտաւ»:
(ՂՈՒԿԱՍ ԺԵ 3)

Ա

Երբ ծկեղեցու հայրերը գեղեցիկ կերպով կարգավորել են ժամապաշտության գործը, երգերն ու շարականները, հին ու նոր կտակարանների ընթերցվածները, որպես մի-մի փոքրիկ ամբողջություն, կապելով դեպքերի, տոների կամ որոշ գաղափարների հետ։ Այս վերջին կարգավորությունը, հատկապես, աչքի է ընկնում Մեծի պահոց կյուրակիների ընթերցվածների դասավորության մեջ. ընթերցվածների ոմանց անունով էլ կոչված են կյուրակիները։ Այս օրվա կյուրակին Անառակի կյուրակի է կոչվում այն պատվական առակի անունով, որ անառակ որդու դարձի պատմության է վերաբերում։ Ընթերցողների հիշողության մեջ վերակենդանացնելու և մեր խոսքի հասկացողությունը դյուրացնելու համար՝ տալիս ենք առակի համառոտ բովանդակությունը։

Մի մարդ երկու որդի ուներ։ Կրտսերը հորից ստանալով իրեն հասանելիք ժառանգության բաժինը, գնաց օտար աշխարհ, և շվայտությամբ վատնեց յուր ստացած ամբողջ հարստությունը։ Նորա շար բախտից այդ երկրում սով սկսավ և նա ստիպվեցավ, հրեայի համար ամենից անարգ գործը, խոզաբուծություն հանձն առել, յուր սնունդը հոգալու համար։ Բայց նույնիսկ խոզերի առաջ թափած մնացորդներից էլ բաժին չէր հասնում նորան։ Ցուր ամենածանր նեղության մեջ հիշեց հոր հացից տունը, բազմաթիվ ծառաներով, և որոշեց գնալ հոր ոտներն ընկնել, որ անարժան լինելով որդի կոչվելու, ընդունե որպես մեկը յուր ծառաներից։ Անառակ որդին երբ մոտեցավ և հայրը լսեց նորա գալուստը, ընդառաջ գնաց, գրկեց ու համբուրեց, պատվիրեց նոր զգեստ հագցնել, պարարտ եղներից մեկը մորթել և ուրախության խնջույք պատրաստել, ասելի այս որդի իմ մեռեալ էր և նկեաց, կորուսեալ էր և գտաւ։

Մեծ եղբայրը, երբ դաշտից տուն դարձավ և իմացավ պատճառը ուրախության, յուր դժգոհությունը հայտնեց հորը։ «Այսքան ժամանակ քեզ հետ եմ և հավատարմությամբ իմ որդիական պարտավորություններս եմ կատարում, մի ուլ անգամ չտվիր, որ ընկերներիս հետ ուրախանամ, իսկ քո այս որդին, որ հարստությունդ անառակությամբ վատնեց, պարարտ եղը մորթեցիր նորա համար։ Բայց հայրը մեղմությամբ պատասխանեց. «Որդյակ, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ իմս է, քոնն է, բայց քո այս եղբայրը մեռած էր և կյանք ստացավ, կորած էր գտնվեցավ։

Բ

Այս պարզ, բայց պատկերավոր, սրտառուչ և գեղեցիկ առակի մեջ ամփոփված է ավետարանական քարոզության ամենամեծ գաղափարներից մեկը, երկնավոր Հոր անսահման գթությունը դեպի մարդկային հոգին և նորա բարձր գնահատությունը։ Այս միևնույն գաղափարը մեր Տերը այլևայլ ձևերով արտահայտել է յուր քարոզությունների մեջ. երկնավոր Հայրը գթության կատարելություն է, որին պիտի հետևեն մարդիկ. Նորա խնամքին են ենթարկված բոլոր մարդիկ, որոնց գլխի մազերն անգամ համրված են Նորա կողմից։ Եթե երկրավոր հայրերը, որ չար են, պակասավոր, իրենց հաց խնդրող որդուն քար չեն տա և ոչ ձուկ խնդրողներին՝ օձ, որչափ ևս առավել երկնավոր և բարի Հայրը։ Մարդկային հոգին, անձը թանկ է և արժեքավոր Աստուծո համար։

Բայց այդ միևնույն գաղափարները ավելի շեշտված և ավելի պայծառ կերպով արտահայտված են այս օրվա ընթերցվածի մեջ։ Քրիստոսի մերձավորությունը մաքսավորներին և մեղավորներին, որոնք գալիս էին Նորան լսելու, բամբասանքի նյութ էր դարձել փարիսեցիների և դպիրների կամ սադուկեցիների համար, և խեթ աչքով էին նայում, որ Նա ուտում, խմում է, նստում, կանգնում նրանց հետ։ Ուրիշ անգամ Նա ասել էր արդեն, թե «ոչ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղաւորսն» (Մատթ. Թ 13), այժմ բացատրում է Ցուր միտքը ավելի պարզ, առակավոր կերպով։ Հովիվը հոտը թողնում և փնտռելու է գնում յուր կորսված ոչխարը, և երբ գտնում է, ուրախանում է։ Կինը, որ կորցրել է յուր տաս դրամներից մեկը, որոնում է տան ամեն անկյունները և երբ գտնում է, ուրախանում է ինքը և ուրախակից անում յուր դրացիներին։ Այսպես ամեն մի կորած հոգու գյուտը, ամեն մի մեղավորի դարձը ուրախության պատճառ է հրեշտակների և Աստուծո համար երկնքում։

Անառակ որդին երբ եկավ, հայրը նորան չհանդիմանեց, քննության չենթարկեց, թե ինչպես վատնեց յուր հարստությունը, ինչպես անառակ կյանք վարեց, այլ գրկաբաց ընդունեց նորան, համբուրեց, ուրախացավ և խնջույք սարքեց։ Բավական է, որ վերադարձել է մոլորված որդին, բավական է, որ հասկացել է յուր սխալը և դարձի եկել, մեղությունից հարություն առել, փրկված է նորա թանկագին հոգին, «կորուսեալ էր և գտաւ»։ Մնացածները երկրորդական են։ Լայնախոհ, ներողամիտ և սիրող երկնավոր Հոր պատկերն է դծագրված այստեղ դեպի մարդը, դեպի մարդկային թանկագին հոգին։ Մարդասիրության, անձի կամ հոգու գնահատության ամենաբարձր արտահայտությունը բոլոր կրոնների և մարդկության պատմության մեջ, և բոլորովին տարբեր, մեր սովորական մտածողության և հասկացողության չափանիշներից։

Մեր տիրոջ կոչումը Փրկիչ բառով է սահմանված, Փրկիչ բարոյական մտքով։ Նա չէր եկել նյութական կամ արտաքին, քաղաքական կամ տնտեսական հասկացողությամբ փրկություն բերելու։ Նորա կոչումը շատ ավելի բարձր էր, հավիտենական։ Նա եկել էր ավելի թանկ բանի համար, հոգիների փրկության և նրանց արժեքի բարձրացման համար. «խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն Նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մատթ. Զ 33)։ Արդարության գաղափարը Ավետարանի մտքով ոչ միայն հակադրություն չէ քաղաքական ճշմարիտ ազատության և ժողովրդական կյանքի բարօրության, այլև նրանց հիմքը պիտի լինի։ Մարդկային հարաբերության մի նոր չափանիշ էր բերել, սիրո և եղբայրության, հոգիների հավասարության և գնահատության գաղափարը։ Մի է Աստված, և նա երկնավոր Հայրն է ամենքի։ Հոգիների մեջ ազգի և սեռի խտրություն չկա, արտոնյալ և իրավազուրկ չկա։ Բոլորն էլ հավասարապես թանկ են Աստուծո համար և թանկ պիտի լինեն իրար համար («Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քոյ»)։ Եվ որովհետև թանկ է ամենայն հոգի կամ անձն, ուստի և կորուսյալի գյուտը կամ դարձը ուրախություն է Աստուծո համար։ Բայց ոչ միայն այդ, այլև պետք է կորուսյալի հետևից գնալ, փնտռել և գտնել նորան։ Այս է պատճառը, որ քրիստոնեության առաջին դարերից՝ բարի հովիվը գտած ոչխարը ուսին՝ նյութ է դարձել արձանագործության։ Հոգիների ազատության կամ փրկության, նրանց բարձրացման համար է եկել Քրիստոս. Աստված մեղավորի մահը չի կամենում, այլ նորա դարձը և կյանքը։ Այսպես են ըմբռնել և հասկացել եկեղեցական մեծ հայրերը. ըստ Աթանասի Քրիստոս մարդացավ, որպեսզի մարդը աստվածանա։

Ասացինք, թե տարբեր են այս մտքերն ու ըմբռնումները մեր սովորական հասկացողություններից։ Մենք ուրիշների մեջ, շատ հաճախ, միայն պակասավոր կողմն է, որ տեսնում ենք, փոքր պակասություններն իսկ խոշորացույց ապակիով դիտում, մինչդեռ պետք էր նախ դրական կողմերը որոնել և ըստ այնմ դատել։ Սովորական, լավ մարդիկն անգամ, որոնց տիպն է այստեղ ավագ որդին, հավատարիմ յուր որդիական արտա-

քին պարտականությունների կատարման մեջ, չի տեսնում կարևորը, երբ հաշիվներով է մոտենում խնդրին։ Նորա համար էական չէ, որ եղբայրը տուն է դարձել, այլ որ հայրը ըստ արժանվույն չէ գնահատել յուր հավատարմությունը, յուր կարծիքով, իսկ «փարիսեցիներ ու սադուկեցիներ» միայն արտաքինն են տեսնում ու դատում, ուրիշի աչքի շյուղն են տեսնում, իրենց աչքերում գերան լինելով, «շնացող կնոջ» մեջ միայն քարկոծման արժանին, հպարտության և գերազանցության բարձունքից նայելով, առանց անդրադառնալու դեպի իրենց պակասությունները։ Բայց Տերը թափանցում է նորա հոգու խորքը և այնտեղ տեսնում է առողջ, բայց թմրած հատկություններ, որ զարթնելով, աճել և ամրողջ հոգին կենդանացնել, կերպարանափոխ անել կարող են, բոլորովին հակառակ վճիռ է տալիս. «Ես դատապարտեմ, երթ, յայսմհետէ մի՛ մեղանչեր» (Յովհ. Ը 10)։ Կյանքի մեջ, երբեմն, ներողամտությունը դեպի հանցագործը ավելի դրական արդյունք է ցույց տալիս, քան պատիժը, որին արժանի է, միայն մարգարիտը խոզի առաջ չպիտի ձգել։ Ներողամտությունն էլ ամեն մարդու հատուկ չէ, այդ մեծ և բարձր հոգիներին է հատուկ և նրանք զգում են, թե որտեղ պետք է գործադրել։

Գ

Դիտե՞լ եք լեռների բարձունքներից ավելի հեռավոր տարածությունները։ Ձորերն ու դարավանդները միայն ձեր շուրջն են. քանի հեռուն եք նայում, այնքան հավասարվում են անհարթությունները և գեղեցիկ, ակնապարար դաշտավայրի փոխարկվում։ Մոռացե՛ք եսական և անձնական անհավասարությունները ու տեսակետները։ Սովորեցեք բարձունքից դիտել մարդկային կյանքն ու գործերը, և եթե մի քիչ էլ թափանցեք ուրիշի հոգու խորքը և համեմատության դնեք ձեր ներքին աշխարհի հետ արդարության զգացումով, այնտեղ մեծ գեղեցկություններ կտեսնեք։

Արդարև գեղեցիկ է մարդկային հոգին, ամենամեծ հրաշալիքը տիեզերքի մեջ, ինքն էլ մի տիեզերք։ Իզուր չէ «ներքին աշխարհ» կոչվել, մի մեծ աշխարհ է նա, մեր մտքով և զգացմունքով, մեր հույսերով և ձգտումներով, մեր երևակայությամբ և թռիչքներով, մեր սիրով և կարեկցությամբ, մեր առաքինություններով և բարի գործերով, մեր բարեպաշտությամբ և խղճի ձայնով...։ Հասկանալի է, թե ինչու մեր Տերը մարդկային հոգին կամ ներքին աշխարհը արքայության վայր է ճանաչել, «արքայութիւնն ի ներքս ի ձեզ է»։ Բայց նա՝ այդ հոգին՝ մի դժոխք կարող է դառնալ յուր նախանձով, ատելությամբ, չարությամբ, եսականությամբ, շահամոլությամբ և այլ բացասական կրքերով։

Գալարագեղ բուրաստան դարձրեք այդ հոգին, զարդարված սիրուն, ակնապարար, հոտավետ ծաղիկներով, նմանեցեք իմաստուն վաճառականին, Տիրոջ խոսքի համեմատ, որ վաճառում է ամեն ինչ և թանկագին մարգարիտը գնում։ Այդ թանկագին մարգարիտը ձեր ներքին աշխարհն է, ձեր հոգին։ Ամենայն ինչ անցավոր է, երկրորդական, Գործադրեցեք ձեր մեծ ու փոքր ունակությունները, ձեր գիտությունը, ձեր արվեստը, ձեր գրիչը, ձեր լեզուն, ձեր ստացվածքը, որպեսզի ձեր հոգին դառնա անգին մարգարիտ, պայծառ, լուսավոր և աստվածանման։ Ամենափոքր բարիքն էլ, մինչև ծարավին մի բաժակ ջուր մատուցանելը, անտես չի մնա Աստուծո աչքից։ Ըստ չափու և ըստ կարողության, բերեք ձեր աշակցությունը հանրության բարոյական շենքի կառուցման մեջ, նախ ձեզնից սկսած և ապա ընտանիքից մինչև Եկեղեցու, ազգության և Հայրենիքի ոլորտները։ Այս է Աստուծո արքայության տիրապետության ուղեգիծը երկրիս վերա։

Մարդկային հոգու, անձի արժեքավորումը հիմքն է այս բոլորի։ Անձնավորությունը սուրբ է, մի՛ մոտեցեք նորան երկաթի ձեռնոցներ հագած. մեծ վիշտ է պատճառում մեզ, տեսնելով մեր ժողովրդի մեջ երկպառակության, իրար սևացնելու, իրար հակառակելու հոգին մինչև բացարձակ թշնամություն։ Այդ ոչ քրիստոնեական է և ոչ ազգասիրական, այլ միակողմանի մոլորություն, և նույնիսկ հիվանդություն և սխալ հասկացված հայրենասիրություն։ Ամենայն մոլեռանդություն և չափազանցություն վնասակար է, որից պետք է խուսափել։

Գնահատել մարդկային հոգին, ուրիշի անձը, պատիվը, քրիստոնեական պարտավորություն է և բարեկրթության պտուղ։ Դեպի լույս և կյանք ընթացե՛ք՝ Տիրոջ շավիղով, Ավետարանից եկած ճառագայթներով առաջնորդված։

«Շնորհք Տհառն եղիցի ընդ ձեզ, ամէն»։

(«ԴԵՊԻ ԼՈՒՅՍ ԵՎ ԿՅԱՆՔ»,
Անթիլիաս, 1947 թ.)։



ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿԱՆՈՑԻՑ

ՑԱՐԵԻԵԼԻՑ

ԵՐԳ ԱՐԵԻԱԳԱԼԻ

Ցարեելից մինչ ի մուտս,
Ի ճիւսիսոյ և ի հարաւոյ,
Ամենայն ազգ և ազգիք,
Ցօրհնութիւն նոր օրհնեցէք զԱրարիչն արարածոց,
Որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք արդարոց,
Փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն,
Ցառաւօտս լուսոյ, զառաւօտ խաղաղութեան
Քրիստոս գովեցէք ընդ Հօր և Հոգւոյն,
Որ ծագեաց զլոյս գիտութեանն իւրոյ ի մեզ։

ԼՈՑՍ

ԵՐԳ ՁԿՆԻ «ԱՍՏՈՒԱԾ, ԱՍՏՈՒԱԾ ԻՄ» ՍԱՂՄՈՍԻ

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս,
Բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր,
Ի դասուց լուսեղինացն օրհնեալ։
Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լոյս, ի լուսոյ ծագումն, արեգակն արդար,
Անճառ ծնունդ Հօր Որդի,
Ցառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր,
Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լոյս, ի Հօրէ բղխումն, աղբիւր բարութեան,
Հոգիդ Սուրբ Աստուծոյ,
Մանկունք եկեղեցւոյ ընդ երեշտակս զքեզ բարեբանեն.
Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լոյս, երեակ և մի անբաժանելի Սուրբ Երրորդութիւն,
Զքեզ ընդ երկնայնոցն
Երկրածիններս միշտ փառաւորեմք.
Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

ՆԱՑԵԱՑ ՍԻՐՈՎ

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

Նայեաց սիրով Հայրդ գրած
Ի քո ստեղծեալ գործս ձեռաց
Եւ զբանակս հրեշտակաց
Տուր պահապան մեզ տկարաց,
Փրկեա զանձինս ի փորձանաց,
Ի խաւարի շրջող դիւաց.
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Քեզ ահեղ անսկզբան,
Մեռնող անճառ Որդի և Բան,
Որ արարեր զտիւ գործոյ
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ,
Տուր ի ննջել աչաց մարմնոյ,
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ:
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Քաբուն հոգւոց բանաւորաց,
Աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց,
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց.
Լոյս տուր աչաց սրտից մերոց,
Ի գիշերաց առ քեզ կանխել,
Ընդ երեղինացն օրհնաբանել.
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Մուրբդ սրբոց երրորդութիւն,
Զմեզ մարդեա քեզ բնակութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առագաստի
Հանգչել ընդ քեզ ի յանկողնի.
Տուր զհայցուած բարեկամին
Զփոխ երից նկանակին.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Երկնի լոյս ստեղծեր
Զտիւ և զգիշեր բաժանեցեր.
Մագեա մեզ, Տէր, ի գիշերի
Զհառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աչ քո հովանի.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Միրոյ քո հուր արկեալ յերկիր
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ,
Զմիտս բոցով քո վառեսցէ.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց,
Ի զգայական ծածկեալ լուսոյ,
Որ վասն մեր եղար ի գրի
Եւ երնջեցեր ի տապանի,
Առ մեզ ննջեա արքուն բնութիւն,
Հերքեա զչարին ներգործութիւն.
Զի ի տուընջեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլռելի:

Քիդ լուսոյ անստուերի
Պաղատանքք կամք առաջի,
Որ փակեալ դրամբք յերեկոյին
Երևեցար մեռասանին,
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք,
Տէր և Աստուած զքեզ դաւանեմք.
Էջ և առ մեզ յերեկոյիս,
Եւ տուր զողջոյն քո ի հոգիս:

Քամեալքս զքեզ, Տէր, աղաչեմք,
Մեր յօգնութիւն նայեա հայցեմք.
Պահապանդ Իսրայէլի,
Անձանց մերոց լեր հովանի,
Օրեսն առ մեզ խաղաղարար
Եւ ննջեսցուք անխռովաբար.
Զի ընդ առաւօտս կանխեսցուք
Օրհնել զքեզ ընդ Հօր Հոգւով:

Գոչման փողոյն Գաբրիէլի,
Որ ի վերջնումն գիշերի,
Լսել արա զմեզ արժանի,
Եւ աջակողմն օդեաց դասի,
Անշէջ վառեալ լոյս լապտերաց,
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Զի ընդ փեսայիդ ի յառագաստ
Հարսունք հոգւով մտցուք ի փառս:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ



ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1959 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի զեկուցումը 1959 թվականի ընթացքում Մայր Աթոռում և նրա հողամասից դուրս կատարվելիք շինարարական աշխատանքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ քննության, հաստատեց 1959 թվականի համար նախատեսված շինարարական աշխատանքները և որոշում ընդունեց հանձնարարել շինարարական գրասենյակին և Մայր Աթոռի տնտեսական վարչության՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար Մայր Աթոռի 1959 թվականի շինարարական ծրագրի կատարումը։

1959 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում քննության առավ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի մարմարե խաչկալի գեղարվեստական քանդակման ծախսերի հարցը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով հանձնարարվեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետին՝ աշխատանքային պայմանագիր կնքել քանդակագործ Արա Հարությունյանի հետ և հետևել աշխատանքների գեղարվեստական կատարելության, Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի գործակցությամբ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴի սույն նիստում Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը զեկուցեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու նորոգման աշխատանքների մասին։

Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու նորոգման աշխատանքները, որոնք սկսվել են 1958 թվականին, շարունակվելու են այս տարի, գարնան և ամռան ամիսներին։ Նախատեսված է սրբատաշ քարերով պարսպապատել եկեղեցու բակը և բարեկարգել և ընդարձակել Ս. Մեսրոպի դամբարանը։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կազմվեց Վարդապետական քննիչ հանձնաժողով հետևյալ կազմով. գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արրահամյան՝ վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, գերաշնորհ Տ. Սնեկ եպիսկոպոս Ազնավուրյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, պրոֆ. Առաքել Առաքելյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, Արթուն Հատիտյան՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի։

Վարդապետական քննիչ հանձնաժողովի պարտականությունն է քննել վարդապետական աստիճանների տվչության համար ներկայացված գրավոր աշխատանքները և զեկուցել Վեհափառ Հայրապետին։

1959 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Գ. Քեհյայանի զեկուցումը Մայր Աթոռի ներքին թեմերի 1958 թվականի բյուջեի կատարողականի և 1959 թվականի նախահաշվի հաստատման մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ քննության, հաստատեց ներքին թեմերի 1958 թվականի բյուջեի կատարողականը և 1959 թվականի բյուջեի նախահաշիվը՝ ըստ թեմերի։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՕՐԸ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Քելամյանը և քարոզեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը «Ողորմեա ինձ Աստուած» Սաղմոսի բնաբանով։

Սուրբ Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում սկսվեցին Մեծ պահոց հատուկ Արևագալի ժամերգությունն ու երգերը։

Արևագալի հանդիսավոր ժամերգության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը Մեծ պահքի ընթացքում, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, Մայր Տաճարում կկատարի Արևագալի երգերը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԹ, ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ, Օրվա մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը «Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Հարությունաբեղա Մատենյանը «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւրոյ (Ծննդոց Ա 27)» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանում, ժամը 3.30,-ին, դասախոսեց Ա. Զոհրաբյանը «ՍՍՌՄ-ի 7-ամյա պլանը» թեմայի շուրջ։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 21-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը Հոգևոր ճեմարանում խոսեց ուսանողությանը «Հայ հոգևորականը պետք է լինի հավատավոր, լուսամիտ և հայրենասեր» թեմայով։

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը միշտ երախտագիտությամբ և շնորհակալությամբ է լսում իր Հոր՝ Վեհափառ Հայրապետի դասախոսություններն ու հայրական հորդորները։

Դասախոսության վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Նրա եկեղեցասիրական և հայրենասիրական դաստիարակիչ հորդորների համար։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ, ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը «Զի այս որդին իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ, և սկսան ուրախ լինել» (Ղուկաս ԺԵ 24) բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև վերջերս Սիրիայից ուսանելու համար Մայր Հայրենիք ժամանած հայ երկսեռ ուսանողների խումբը։

Սուրբ պատարագի ավարտին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուսանողների խմբին։ Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, հետաքրքրվեց նրանց ուսանողական կյանքով, հորդորեց սովորել անձանձրույթ, գիտություն ամբարել, հետագայում օգտակար լինելու համար հայ ժողովրդին։

Ի դիմաց ուսանողության, Սամվել Սալիպյանը կարդաց հետևյալ սրտագին ուղերձը, ուղղված Վեհափառ Հայրապետին.

«Շնորհազարդ Հայրապետ.

Հայրենադարձ հալեպահայ ուսանողներս մեծապես երախտապարտ ենք Հայրենիքի

կառավարության, որ մեզ իբր ուսանող ընդունելով, հնարավորություն տվավ մեր ուսումը շարունակելու մեր պաշտելի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մեջ։ Միածամանակ երանելի առիթը ընծայվեցավ մեզ տեսնելու հայ ժողովուրդի դարավոր հավատքի լույսի կեդրոն և ներկայի անխախտ միասնականության կոթող հանդիսացող Ս. Էջմիածնի Մայր Տաճարը և անոր արժանավոր Հովվապետը։

Էջմիածինը՝ Հայ Եկեղեցվո միակ կեդրոնը՝ տեսնելու իղձը Սփյուռքի մեջ ամեն մի հայու տարիներու երազն է եղած։

Արտասահմանի հայության և մանավանդ Սուրիո հայերուն ջերմ զգացումներն ու հույզերը կբերենք Ձեզ, մեր սիրելի՝ Վեհափառ։

Մենք արտասահմանի հայ ուսանողության կողմե անհուն երախտագիտություն կհայտնենք Մեր Մայր Եկեղեցիին՝ որ Սփյուռքի և Հայրենիքի միջև դարերու ընթացքին հոգեկան կապի ոսկե կամուրջ հանդիսացավ, շնորհիվ իր արժանավոր հայրապետներուն։

Երախտագիտություն կհայտնենք նաև Ձեզ, Ձեր սուրբ ջանքերուն համար, հօգուտ Հայ Եկեղեցիին և ժողովուրդի միասնականության։

Արտգինս Ձերդ Վեհափառության կմաղթենք արեշատություն և կորով, նորանոր նվաճումներ կատարելու Հայ Եկեղեցիին ներս և հայ ժողովուրդի համար։

Վեհափառ Հայրապետը, ակնբախ հուզված Իր հայրենադարձ որդիների սիրո և հավատարմության զգացմունքներից՝ դեպի Եկեղեցին և Հայրենիքը, օրհնեց բոլորին և ցանկացավ, որ նրանք բոլորը լինեն հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու արժանավոր զավակներ։

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը սիրիահայ ուսանողներին նվիրեց խաչեր և Իր մակագրությամբ հնգեյլանական գրքեր։

Նույն օրը, հետ միջօրեի ժամը 3-ին, Մայր Աթոռ, Ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետին այցելեց ՍՍՌՄ-ի շախմատի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը իր հարգելի տիկնոջ հետ։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռի օժանդակ ճարտարապետների հանձնաժողովի նիստը, քննության առնելու համար նկարիչ Հրաչյա Ռուխիկյանի՝ Վեհափառ Հայրապետի պատվերով պատրաստած Հայաստանի պատմական վանքերի և եկեղեցիների մատիտանկարների ալբոմը։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Վեհարանում կայացավ նկարիչների խորհրդակցություն, Մայր Տաճարի վարագույրների ուրվագիծ (էսքիզ) պատրաստելու կապակցությամբ։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի Վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը մեկնեց Թրիլիսի, Ս. Սարգսի տոնը (հին տոմարով) Վրաստանի հայոց թեմում անցկացնելու, պատարագելու և քարոզելու համար։ Սրբազան հորը ընկերակցում էր Գ. լսարանի ուսանող բարեշնորհ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը։

Սրբազան հայրը Մայր Աթոռ վերադարձավ մարտի 4-ին, շաբաթաբաթի օր։

❁❁❁

ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 3-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի նիստը։ Նիստում զեկուցեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, թեմի 1958 թվականի եկեղեցական-վարչական գործունեության և 1959 թվականի թեմական խորհրդի առաջ կանգնած հարցերի մասին։

Նորին Ս. Օծությունը նիստի վերջում Իր հայրական գոհունակությունը բարեհաճեց հայտնել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանի եռանդուն պաշտոնավարության, թեմական խորհրդի արդյունավետ գործունեության և քահանայից դասի պարտականության անձնվեր կատարման առթիվ։

Նիստի վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և մաղթեց արդյունավետ գործունեություն 1959 թվականի թեմի եկեղեցական, վարչական, տնտեսական գործունեության կապակցությամբ։ Ապա Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետին, թեմական խորհրդի եկեղեցական և աշխարհական անդամներին և քահանայից դասին։





ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

1959 թվականի փետրվարի 26-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Վրաստանի հայոց թեմի առաջնորդական ժամանակավոր փոխանորդ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի հրավերով, Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի դիխավորությամբ մեկնեցին Թբիլիսի՝ տեղի հայ հավատացյալ ու եկեղեցանվեր ժողովրդի հետ միասին տոնելու Ս. Սարգիս զորավարի տոնը։

Ուղևորվելուց առաջ մի պահ մտանք եկեղեցի և աղոթեցինք։

Ապա Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելու համար Վեհարան բարձրացավ սրբազանը։ Վեհափառը օրհնեց նրան և բարի ճանապարհ մաղթեց։

Առավոտյան ժամը 10-ին ճամբա ընկանք դեպի Թբիլիսի՝ մեզ հետ տանելով Վեհափառ Հայրապետի ողջույնները Վրաստանի հայոց թեմի հավատացյալ հայ ժողովրդին։

Երևանն է։ Լայն ու երկարաձիգ պողոտաները ծածկված են ձյունով։ Դեմուդեմ կանգնած առավոտյան արևի տակ, գեղեցկորեն փայլում են բազմահարկ, հսկա բնակելի շենքերը։ Հակառակ ամիսներից ի վեր նստած ձյան, փողոցները հորդում են բազմությամբ, ոմանք շտապում են գործի, ուրիշները՝ դպրոց և համալսարան։ Քաղաքը շնչում է իր առօրեական կյանքով։

Երևանից դուրս՝ դեպի Սևանա լիճ տանող ճանապարհով, ինքնաշարժը սլանում է ձյունածածկ ծառուղիների միջով։ Հայրենի չքնաղ բնությունն է մեր հայացքի առջև։ Ինքնաշարժը սկսում է դանդաղ բարձրանալ միշտ դեպի վեր։ Հայրենի երկրի բարձրաբերձ լեռներն են ահա՝ իրենց զմրուխտ անտառներով, խոլ գետերով ու դրավիչ թովչությամբ։ «Հայաստան, երկիր դրախտավայր»,— ինչպես ասել է բանաստեղծը։

Մտնում ենք վրացական սահմաններ։ Նույն հմայքն ու թովչությունը, նույն գեղեցկությունը այստեղ ևս։ Շարունակում ենք մեր ճանապարհը և արդեն մոտեցել ենք Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Թբիլիսիին։

Կանգ ենք առնում հայոց Ս. Գևորգ եկեղեցու ավագ դռան առջև։ Հոծ բազմություն է բակում։ Մեզ ընդառաջ են գալիս Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, եկեղեցու ծխատեր քահանաներ, թեմական խորհրդի անդամներ։ Եկեղեցում հավաքված են բազմաթիվ հայ հավատացյալներ։

Հնչում են զանգերը Ս. Գևորգ եկեղեցու։ Զգեստավորվում են քահանաներն ու դպիրները և դեպի եկեղեցի են առաջնորդում սրբազան հոր՝ «Հրաշափառ Աստված» և ապա «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականներով։

Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետը, հանուն Վրաստանի հայոց թեմի, ողջունում է սրբազանի բարեհաջող ժամանումը։

Սկսվում է երեկոյան ժամերգությունը։ Կատարվում է միաժամանակ Տյառնընդառաջի նախատոնակի արարողությունը, սրբազանի հանդիսադրությամբ։

Հետ ժամերգության սրբազանը բարձրանում է Ս. Խորան և այնտեղից վար իջեցնելով վառված մոմը, վառում է փոքրիկ սեղանի վրա դրված յոթնաջահյան աշտանակը։ Միևնույն ժամանակ հաղթականորեն հնչում է «Քրիստոս Փառաց» շարականը։ Թբիլիսիի ավանդապահ հայ ժողովուրդը

սրբությամբ է պահում այն գեղեցիկ սովորությունը, որը մեր եկեղեցական գեղեցկագույն ավանդություններից մեկն է։ Հավատացյալները իրենց ձեռքում ունեն մոմեր կամ ջահեր. նրանցից յուրաքանչյուրը մոտենում է յոթնաջահյան աշտանակին, վառում է իր ձեռքի մոմը կամ ջահը և ամենայն զգուշությամբ վերադառնում իր տունը, որպեսզի այդ օրը վառված մոմը կամ ջահը լուսավորի ընտանեկան օջախը։ Այս սովորությունը նկատի ունենալով է, որ Հայ Եկեղեցու սուրբ հայրերը այս ծիսակատարությանը տվել են նաև «Ճրագալույց» անունը։

Փետրվարի 27-ն է։ Առավոտյան ժամը 9-ին սկսվում է ժամերգությունը, որին հաջորդում է սուրբ պատարագը։ Պատարագիչն է արժանապատիվ Տ. Զարեհ քահանա Բասմաջյանը, որն ըստ օրվա պատշաճության քարոզում է։

Երեկոյան դեմ եկեղեցին հորդում է հավատացյալների հոծ բազմությամբ. իրոք որ սեղ գցելու տեղ չկա։ Եկեղեցասեր բազմությունը (մեծ մասամբ ուխտավորներ), շտապում է հասնել ուխտավայրը, ներկա լինելու Ս. Սարգսի նախատոնական արարողությանը։

Ս. Սարգսի տոնը Վրաստանի հայության սիրելի և ժողովրդական հինավուրց տոնն է։

Շաբաթ առավոտ է։ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում ժամը 9-ին սկսվում է առավոտյան ժամերգությունը։ Եկեղեցում, բակում և նրա շրջակայքում խոնված է ուխտավորների և հավատացյալների բազմությունն։

Գերաշնորհ Հայկազուն սրբազանը, որ այդ օրվա պատարագիչն է, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է դեպի եկեղեցի։ Հնչում են եկեղեցու զանգերը։

Ժամը 12-ին սկսվում է սուրբ պատարագի հոգեզմայլ արարողությունը։ «Խորհուրդ խորին»-ից մինչև «Հայր Մեր»-ը երգվում է սուրբ պատարագը հավատացյալների մասնակցությամբ, վեհությամբ ու հանդիսավորությամբ, հոգեկան անհուն մխիթարությամբ լցնելով հավատացյալների սրտերը։

Քարոզի պահին պատարագիչ սրբազանը հաղորդում է Վեհափառ Հայրապետի օրհնությունները, ողջույններն ու բարեմաղթությունները, և քարոզում են համբերությամբ «Ներով ստասցիք զոգիս ձեր» բնաբանով (Ղուկ. ԻԱ 19)։ Նա հանգամանորեն պատմում է Ս. Սարգսի, նրա որդու՝ Մարտիրոսի և տասնչորս զինվորների կյանքի և նահատակության մասին։

Սրբի կյանքի վառ օրինակով քարոզիչը ընդգծեց համբերատարության առավելությունները անհատական, ընտանեկան, հասարակական և նույնիսկ պետության կյանքում, միաժամանակ ցույց տալով անհամբերատարության վնասները, առաջացրած չարիքները կյանքի բոլոր բնագավառներում։ Սրբազանը հստակապես կանգ առավ այն հանգամանքի վրա, թե ինչպես նույնինքն Քրիստոս, իր երկրավոր կյանքում, դարձավ համբերության գերագույն օրինակը, մանավանդ իր չարչարանքի ամենադաժան րոպեներին։ Որպես եզրակացություն, սրբազանը կոչ արեց հավատացյալներին՝ իրենց մեջ զորացնել համբերատարության ոգին։

Սրբազան հոր այս ջերմ զգացմունքներով հագեցած քարոզը լսվեց խոր հետաքրքրությամբ։

Քարոզից հետո պատարագի արարողությունը շարունակվում է հանդիսավորությամբ։ «Ո՞ր կազմեցեր» շարականի երգակցությամբ հարյուրավոր ուխտավորներ և հավատացյալներ դալիս են «հաղորդուիլ արեամբն Յիսուսի»։

Հավարտ սուրբ պատարագի սրբազան հայրը նույն հանդիսավորությամբ առաջնորդվեց առաջնորդարան, որտեղ ընդունեց շատերին և զրուցեց նրանց հետ։

Շաբաթ երեկո է։ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում երեկոյան ժամը 5-ին սկսվում է կիրակմտի ժամերգությունը։ «Լոյս զուարթ»-ն է, հոգեներոգ ու վերացնող մեղեդին։ Երգող քահանան կարծես իր հոգու լարերի վրա է նվագում։

Կիրակի առավոտ է։ Ժամը 12-ին սկսվում է սուրբ պատարագի արարողությունը։ Պատարագիչն է արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը։

Օրվա քարոզիչը դարձյալ սրբազանն է։ Նա իր քարոզի համար բնաբան էր ընտրել օրվա Ճաշու Ավետարանից. «Ես եմ հացն կենաց, որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւատայ ի՛ս՝ ոչ երբեք ծարաւեսցի» (Յովհ. Զ 35)։ Սրբազանը առանձնակի խանդավառությամբ խոսեց կենաց հացի մասին։ Նա նախ բաղդատականը արեց նույն օրվա Ավետարանի այն պատմության, ըստ որի առաքյալները Քրիստոսին էին որոնում շաբաթունակ ժողովրդի հետ միասին, որովհետև նրանք կերել էին հրաշքով բազմացած հացերից, ինչպես իրենց նախահայրերը կերել էին անապատի մանանան և խմել ժայռից բխած ջուրը։ Բայց նրանք մեռան։ «Իսկ այն հացը և ջուրը, որ Ես տալու եմ,—ասաց Հիսուս,— արժանավորապես ճաշակողը և ըմպողը մեռնելու չէ հավիտյան»։

Ապա սրբազանը, անդրադառնալով հոգևոր կարիքներին, ընդգծեց հոգին նույնպես սնուցանելու անհրաժեշտությունը, մի բան, որն առավել ևս զորացնում է մարդուն, կենդա-



նացնում և արժանացնում հավիտենական կյանքին։

Կիրակի առավոտյան ժամը 10-ի գնացքով Թբիլիսի է ժամանում Մայր Աթոռի Պերագույն Հոգևոր խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանը։ Նրան դիմավորում են հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետը, քահանա հայրերը և թեմական խորհրդի անդամները։

Պրոֆ. Արարատ Ղարիբյանը եկել էր Թբիլիսի, գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի և թեմական խորհրդի հետ համախորհուրդ, թեմի գործունեությունը ավելի հաստատուն հիմքերի վրա դնելու ու կանոնավորելու համար։

Կիրակի երեկոյան ժամը 4-ին տեղի ունեցավ թեմական խորհրդի նիստը, որին ներկա էին նաև գերաշնորհ Հայկազուն սրբազանը, պրոֆ. Ա. Ղարիբյանը, առաջնորդական ժամանակավոր փոխանորդ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Մարգայանը, խորհրդի եկեղեցական և աշխարհիկ անդամները։

Ժամը 8-ին Վրաստանի հայոց թեմական խորհրդի կողմից ճաշկերույթ է տրվում ի պատիվ սրբազան հոր և պրոֆ. Ա. Ղարիբյանի։

Բաժակաճառեր փոխանակվեցին սրբազան հոր, պրոֆ. Ա .Ղարիբյանի և թեմական խորհրդի անդամների միջև։

Ճաշկերույթից հետո պրոֆ. Ա. Ղարիբյանը շնորհակալության խոսք ասաց և հաջողություն մաղթեց թեմական խորհրդի անդամներին՝ իրենց եկեղեցական աշխատանքում։ Հարգելի պրոֆեսորը ժամը 10-ին գնացք առնելով վերադարձավ Ս. Էջմիածին։

Մարտի 2-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի հետ այցելեցինք վրաց ժողովրդի սրբություն սրբոց և Վրաց Եկեղեցու կենտրոնատեղի Մցխեթայի վանքը։

Մցխեթայի վանքը տանող ճանապարհը եղերված է մշտադալար եղևնու ծառերով։ Ճանապարհի աջ կողմը հորդահոս Կուր գետն է, որն անցնելով Մցխեթայի վանքի մոտից, շտապում է հասնել Վրաստանի սիրտը։ Հեռվից երևում է Մցխեթայի վանքի պատմական գմբեթը։ Հասնում ենք վանքը շրջապատող հինավուրց, բարձր պարիսպների առջև։ Ներս ենք մտնում։ Մեր աչքերի առջև կոթողվում է վանքի լայնանիստ ու աստիճանաձև հոյակապ կառույցը։ Վանքը խորհրդավոր վեհություն է սփռում ավելի քան 900 տարիների հեռավոր անցյալից։

Ինչ դեր որ խաղացել է Ս. Էջմիածինը հայ ժողովրդի կյանքում, Հայ Ազգի ճակատագրական օրերին, նույնը կատարել է նաև Մցխեթան՝ վրաց ժողովրդի կյանքում։ Նրանք թեև հարվածներ են ընդունել ու կողոպտվել են միշտ, բայց այսօր երկուսն էլ կանգուն, լուսատու կենտրոններ են։

Մցխեթայում մեզ ընդունում է վանքի միաբան վարդապետներից մեկը։ Վերջինս մեզ ծանոթացնում է վանքի պատմությանը և ճարտարապետական մնայուն արժեքներին։ Վանքում հյուրասիրվելուց հետո, ժամը 1-ին վերադառնում ենք Թբիլիսի և այցելում ենք նաև Թբիլիսիի հայոց Ս. Էջմիածին եկեղեցին և մայրաքաղաքի այլ տեսարժան վայրերը։

Մարտի 2-ին, երկուշաբթի օրը, ժամը 2-ին Հայկազուն սրբազանը հարգանքի այցելություն տվեց Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պր. Շալուտաշվիլուն։

Մարտի 3-ի առավոտն է։ Մեկնելու ենք Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Թբիլիսիից, հրաժեշտ տալով մեր սիրելի հավատացյալներին։ Ս. Գևորգ եկեղեցում քահանաների դասն ու թեմական խորհրդի անդամները սրբազանին են սպասում։ Սրբազանը մտնում է եկեղեցի, աղոթում և իր օրհնությունները բաշխում բոլորին։

Ժամը 10-ին շարժվում է մեր ավտոմեքենան, ողջերթի բարեմաղթությունների տակ։

Մարտի 3-ի երեկոյան ժամը 5-ին հասնում ենք Մայր Աթոռ։ Իջման Սեղանի առջև աղոթում ենք բարեհաջող ճանապարհորդության համար։ Ապա սրբազան հայրը բարձրանում է Վեհարան, Վեհափառ Հայրապետին հաղորդելու համար Թբիլիսաբնակ հայ հավատացյալների սիրո և հավատարմության հավաստիքները։ Սրբազան հայրը պատմում է նաև իր տպավորությունների մասին։

Սրբազան հոր և իմ հիշողության մեջ վառ կմնան Թբիլիսի ուխտագնացության օրերի տպավորությունները։

ԺԻՐԱՅՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՃԵՐԽՃՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ ԻՐ ԳԱՀԱԿԱԼԸ

Կան հաստատություններ, կան երկեր, կա հավատք, կան զգացումներ, որոնք կտեսնեն, կանգուն կմնան միշտ, կուրծք տալով դարերու իսկ, անգամ բոլոր փոթորիկներու՝ ոչ թե սակայն, գիպվածի մը, բախտի մը շնորհիվը, այլ որովհետև իրենց հատուկ իմաստը ունին՝ հիմնված ըլլալով կարգ մը ազգային իրականություններու և ճշմարտության համաձայն, և կդառնան, այսպես, անհրաժեշտություն մը։

Ինչպես Ս. Էջմիածինը՝ հայ կյանքին մեջ։ Իր ոճը հայկական է. կզանազանվի ուրիշ բոլոր ժողովուրդներու տաճարներեն։ Իր ներսն ալ հայկական է։ Իր պատմությունը, եթե նույնիսկ առանձին առնվի, նման է Հայ Ազգին անցյալին, կյանքին, ապրումին, իր երեսին որ կողմեն ալ դիտվի։ Հայն է ան. հայուն դեմքը կներկայացնե, անոր հետ շփոթվելու աստիճան։

Այս տաճարը, դարերու ընթացքին, իր պատմության, իր ցավերուն ու վերքերուն, իր պայքարներուն, մաքառումներուն, հույսերուն պատճառով՝ միայն կրոնական, միայն զուտ կրոնական հանգամանքին մեջ չի ներկայանար. շատոնց այսպես է ան։ Այո Տաճարը է նաև բարոյական ու միանգամայն ազգային կեդրոն մը։ Բարոյական՝ վերապրումի, անվհատության կամքը անեղծ պահելու համար. ազգային՝ հայ ժողովուրդին դեմքը անարատ շարունակելու համար։ Իր ամբողջական հավատքը կկազմե այս բոլորը։ Հայկին ավանդությունը. Տիգրան Մեծի փառքը՝ հելլենական շրջանեն ժառանգված, իր մեջ վառ պահված են, և նույնիսկ զանոնք գուրգուրալից սիրով մը մշակելով, հաջորդ սերունդներուն փոխանցելու համար՝ առանց վհատության, գիտակցորեն։

Ես չեմ տեսած իրավ հայ մը, որ չսիրե Ս. Էջմիածինը։ Վավերական հայը չի կրնար իր դեմքը փոխել։ Այս դեմքը դարերու ընթացքին կերտված է։

Կզանազանվի հայ Էջմիածինը։

Իր քարոզած, պաշտպանած կրոնքը՝ քրիստոնեությունը, իրն է, ու անձնական այլևայլի նմանիր ուրիշին. այլևս ազգային ու միայն իրը ըլլալու աստիճան։

Բայց ի՞նչպես, հարցուցին շատեր՝ դուրսեն, ու հարցուցինք մենք ալ, ի՞նչպես Էջմիածինը կրցավ ծովամույն չըլլալ, վերապրիլ՝ հալածանքներու, բաժանումներու, դավերու, արշավանքներու, անոթության, ամեն տեսակի փոթորիկներու՝ իր դարավոր ծնունդեն է վեր։ Բերդ մը չէր ան, ոչ ալ բանակ ուներ ինքզինքը պաշտպանելու համար։ Տաճար մըն է ան, անզեն։ Կարելի էր զայն դյուրավ քանդել. բայց իր թշնամիները չկրցան քանդել զայն։ Հրաշքի մը արժեքը ունի այս։ Եվ այս հրաշքը պատահեցավ։ Որովհետև Էջմիածինը չլքեց իր հայկական դեմքը, պահեց զայն անօրինակ նախանձախնդրությամբ։ Մեր պատմությունն է որ կերևա հոն, մեր պատմությունն է որ ապրեցավ հոն, Ս. Էջմիածնի Տաճարին մեջ։

Հայը չուրացավ զայն։ Պիտի չուրանա։ Մեր, ակնածանք, երկյուղածություն, հավատք ունի այս Տաճարին հանդեպ։ Չի սիրեր որ դպչին իր դեմքին։ Տառապած է՝ զայն պահելու համար, ու ոնով պատվախնդիր է։ Իր սերը, իր հույսը, իր զոհողությունը անսասան մնացին անոր հանդեպ։ Փառքի թե սուգի օրերուն, հավասարապես։

Եվ հայը իրավունք ունեցավ։ Էջմիածինը այսօր կանգուն է, ավելի ամուր՝ իր ներկայությամբ, ավելի հուսալից իր ապագայով։ Մեր ամբողջ պատմության մեջ՝ իր գոյության, իր պաշտպանության «պարիսպները» երբեք այսքան ամուր չեն եղած։

Անցյալին՝ մեր կաթողիկոսները քաղաքականություն կվարեին, երբեմն թագավորեն ավելի։ Հաճախ երկվություն կստեղծվեր այս պատճառով, ն որմե կտուժեր մեր երկիրը։ Հասկնալի է։ Հայաստանն իր անկախությունը կորսնցնելե հետո, տիրող օտար պետությունները հայ կղերը միայն ճանչցան որպես մեր ժողովուրդին միակ ներկայացուցիչը։ այս ալ օտար տիրապետության հետևանքներեն մին էր։ այն ատեն հայ եկեղեցականը կատարեց ներկայացուցչի իր դերը։ Այսօր, սակայն, Հայաստան իր կանոնավոր պետությունը ունի։ Ս. Էջմիածինը ստացավ իր բուն դերը՝ կրոնական և մշակութային։ Սա շեշտով, նաև, թե իր կրոնքն ու մշակույթը հայկական են։ Զուտ և միայն հայկական։ Ուրիշ որևէ կրոնքին մեջ չի մտներ, ոչ ալ ուրիշ մշակույթին։ Առանց քաղաքականություն ընելու։ Ասով, սակայն, իր աշխատանքը չէ պակասած, ոչ ալ իր օգտակարությունը՝ ի նպաստ իր ժողովուրդին։

Եվ այս օգտակարությունը պիտի ծավալի անով, մանավանդ, որ Ս. Էջմիածնի ստացած ապահովությունը որքան իրական, այնքան աննախընթաց է։ Իր ներքին ու արտաքին անդորրությունը իրեն թույլ պիտի տա անդադար աշխատելու, իրագործելու համար այն հոյակապ առաջադրությունները, որոնց մասին խոսեցավ իր ներկա Գահակալը, Նորին Ս. Օծություն Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսը, Իր անդրանիկ կոնդակին մեջ իսկ։ Անոր բովանդակությենեն հայտնի է, թե մեր Ընդհանրական Հայրապետը գիտե Ս. Էջմիածնի Գահին դերը, պարտականությունները, բարոյական իշխանությունը։

Երբ այս տողերը լույս տեսնեն, արդեն տոնված պիտի ըլլան, Ս. Էջմիածնի մեջ, Իր ծննդյան հիսուներորդ և Իր գահակալության երրորդ տարեդարձները։

Եգիպտահայությունը առիթը ունեցավ զինքը լսելու, ճանչնալու։ Զգաց, թե մեր Հայրապետին խոսքը Իր սիրտին մեջեն կուգար, նշմարեց, թե Իր դեմքը հստակ էր և Իր ծառայելու կամքը՝ անկասկածելի, աննկուն։ Եվ միշտ հայու դեմքով։ Եվ գիտակից բարձրությամբը, կարևորությամբը այն պաշտոնին՝ զոր Իրեն հանձնած է Իր ժողովուրդը։ Ուստի և Սփյուռքի հայ ժողովուրդը՝ տակավին ցիրուցան, իր նայվածքը, իր հույսերը իրեն կուղղե, իր ամբողջական հավատքով։

Վեհափառ Վազգեն Ա Ընդհանուր Հայոց Կաթողիկոսին անդրանիկ կոնդակը լայն, բեղուն ծրագիր մը հաղորդեց։ Այս ծրագրին կարևոր մասը կկազմե Հայ Եկեղեցիին կանոններ ու Սահմանադրություն մը տալու աշխատանքը։ Կենսական է այս, արդարև։ Վերջին սայթաքումներեն, տագնապներեն դոնե ոմանք տեղի չէին ունենար, եթե մեր եկեղեցին օժտված ըլլար որոշ, ընդունված կանոններով։

Ս. Էջմիածնի Գահակալը ունի հարկ եղած կարելիությունները՝ Իր ծրագրին գործադրությանը մեջ հաջողելու։ Կուտա ամեն հույս։ Իր Գահին հմայքը, իշխանությունը, Իր անձնական պատրաստությունը, Իր սերը դեպի ժողովուրդը, գրավականներ են այս մասին։

Առաքյալի մը պես կխոսի, առաքյալի մը պես կտպավորե։ Եվ միշտ հայու դեմքով։ Կժպտի, կամ կտխրի Իր ցավեն։ Վստահ է, թե Իր Գահը բարձր է, անսասան, ու բոլորը Անոր շուրջը, քովը պիտի հավաքվին։ Գիտե, թե Տաճարը՝ որուն բարձրագույն դիրքը Իրեն հանձնեցին, անսահման է սիրո մեջ։ և Իր գիրկը կրնա ընդունիլ Իրեն դիմող բոլոր հայերը։

Բայց մանավանդ մեր Ընդհանրական Հայրապետը գիտե հայուն անցյալը, հայուն պատմությունը, կզանազանե հայ դեմքը։ «Մուսա-դաղի քառասուն օրերը»-ին վրա հրատարակած Իր ուսումնասիրությունը, Վեհափառ հեղինակին գրական վստահելի ճաշակեն, հմտությունեն զատ, ցույց կուտա ծանոթությունը, զոր ունի հայ դեմքին, հայ նկարագրին վրա։ Ուստի, չեմ խորհիր, որ զարմացած ըլլա, երբ միանգամայն սեր ու հարգանք, վստահություն հայտնեցին և հայտնեն Իրեն, Իր ժողովուրդին մեջեն։

Հոբելյանական տոնի օրերուն, պիտի ուզեի հիշատակել և ընդգծել, թե Վազգեն Ա մեր կաթողիկոսներուն ամենեն երջանիկն է։ Այս պարագան նկատի ունիմ նաև մեր ժողովուրդին համար ալ։ Եվ այս երջանկությունը կուգա ամենեն առաջ և ամենեն ավելի՝ ապահովության գոյությենեն, մանավանդ անոր համար, որ անդորրությունը կարելիու-

թյունը պիտի տա աշխատելու, շինելու, վերելքը շարունակելու։ Ապացույցը կա արդեն։

Աշխարհի չորս կողմերեն, հայեր սիրով, որդիական հարգանքով շնորհավորեցին իրենց Ընդհանրական Հայրապետը Իր կրկնակ տոնին առթիվ, ու ներկայացուցին իրենց մաղթանքները Իրեն և Ս. էջմիածնին. այսօր, այս երկուքը նույնացած են իրարու հետ։ Անոնք ուրախ էին այս առթիվ, բոլորն ալ, և արդարորեն հպարտ ներկայով, մինչ նոր հույսերով լեցուն՝ ապագային համար։

Երջանիկ ենք «Ջահակիր»-ին միջոցով անոնց միանալու, կատարելու համար, մենք ալ, մեր սրտագին շնորհավորություններն ու մաղթանքները, այս առթիվ։

ՍՏԵՓԱՆ ՇԱԶՊԱԶ

(Կահիրե, «ՋԱՀԱԿԻՐ», 20—31 հոկտեմբերի, 1958 թ., № 96—99)

ՄԵՐ ՍԻՐՈՒՅՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԵՐԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՆՈՐ ԳԱՀԱԿԱԼԻՆ ՀԱՆԳԵՊ

Անհուն սեր ունի հայ ժողովուրդը իր սրտին խորը հավատքի, լույսի և հույսի վեմ Ս. էջմիածնի հանդեպ։ Համայն հայության Սրբություն Սրբոցն է ան, կառուցված մեր Տիրոջ ցուցմունքով, ըլլալու համար Հայ Եկեղեցվո Հոգեոր Գերագույն Պետին Գահատեղին...։

Մեր երկրորդ Լուսավորիչը՝ Գրիգոր Հայրապետ տեսավ այդ լույսը և պատմեց ցնծությամբ հավատացյալ Տրդատ մեծ արքային։ Մշտազո և մշտավառ է այդ լույսը, անոր շողերով լուսավորված և արբեցած սուրբերն էին, որ ամուր ժայռի վրա հաստատեցին աստվածային սուրբ կրոնքը, տվին մեղի դիր ու գրականություն, արվեստ և մշակույթ և մանավանդ պահեցին ու պահպանեցին երկար դարեր, դժնդակ պայմաններու մեջ, հայաստեղծ այդ թանկագին հարստությունները, որոնցմե հայ միտքը՝ ինչպես մեղրալից փեթակներեն՝ կքաղե իր հոգիին սնունդը։

Բախտավոր եղած է հայ ժողովուրդը, որ հաջողած է բաղմեցնել Լուսավորչի պաշտելի այդ Գահուն վրա իր ընտրելագույն դավակները, որոնք իբրև ճշմարիտ առաջնորդներ և արի հովվապետներ, հայուն դժխեմ ճակատագրի դավագույն այդ ժամանակներուն, սփոփած ու խնամած են նաև զայն, տեր ու պաշտպան կանգնած անոր, շատ անգամներ իրենց կյանքերուն իսկ գնով։

Բախտավոր ենք դեռ ավելի և մենք, ներկա սերունդը, որ ունեցանք Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի պես մեծագործ Հայրապետ մը։

Հայ ժողովուրդը սկիզբի օրերեն իսկ նախազգացական առողջ բնազդով սիրեց զինքը, վստահեցավ Անոր, և մեծ հույսեր կապեց Անոր։

Գահակալության երեք տարիներու շատ կարճ ժամանակամիջոցին երբ ճանչցավ դայն Իր կյանքին, խոսքերուն, սրբատառ կոնդակներուն և կատարած գործերուն ընդմիջեն, ուրախությամբ հաստատեց, թե չէր սխալած իր ընտրության մեջ։

Ես կհավատամ, թե Աստուծո կամքն էր, որ միջամտեց, երբ աշխարհի չորս ծագերեն էջմիածին ժամանած Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի պատգամավորներ, միախորհուրդ և միաձայն, իրենց քվեները կեդրոնացուցին Անոր արժանավորագույն անձին վրա։

Ս. էջմիածնի սիրովը վառ կրոնաշունչ հավատացյալն է, որ կխոսի Իր ներսեն, երբ կպատգամե. «Մեր գոյության տեսականացման և գործադրումին միակ ճանապարհը հավատի ճանապարհն է, որ կանցնի Ս. էջմիածնեն և որ մեզ կկապե մեր ավանդություններուն և սրբություններուն»։

Իր բոլոր գավակներուն սրտացավ Հայրն է, որ կհորդորե մանավանդ Սփյուռքը. «Ավելի փութաջորդիվ և շրջահայեցությամբ և անաղմուկ կերպով վարեմ ձեր եկեղեցական ազգային կյանքը. այնպես ըրեմ, որ Սփյուռքը ճանչցվի որպես շինարար տարր»։

Մեծ հայրենասերի քաղցր ձայնն է, որ կհնչե մեր ականջներուն. «Լի հավատով, ճույսով և լավատեսությամբ, կոչ կուղղենք հայ ժողովուրդին մնալ հավատարիմ մեր պապերու հավատին, երկյուղածությամբ պահպանենք մեր նվիրական ավանդությունները, մեր մեծասքանչ լեզուն և հայ մշակույթի արժեքները»։ Եվ ասիկա՝ նպատակ ունենալով Սփյուռքի մեջ կենդանի պահել մեր ժողովուրդի ինքնագիտակցությունը, հայկական շունչը, հայրենասիրությունը և մեր ազգային արդար իղձերուն իրականացման սրբազան ուխտը։

Աննման է մեր Վեհափառը, Իր լավատեսության ոգիով, շատեր թերես կտարակուսին, կքննահավատին, որ Անոր այնքան ընդարձակ և շքեղ ծրագիրները ամբողջությամբ կրնան հաջողիլ։

Բայց ինքը Իր տեսիլքներու պահերուն, հոգիի աչքերով, արդեն իսկ մարմին առած, իրականացած կտեսնե զանոնք բոլորն ալ, նման Եղեկիել Մարգարեին, որուն Աստված ցույց կուտար դաշտերու մեջ ցրված մարդկային անհամար ոսկորներ, որ իրարու կու-

գային, կմախք կկազմեին և հարություն կառնեին։

Բայց որպեսզի արագընթաց թափով ի պուխ հանվին հայուն մեծության և երջանկության համար հղացված այդ հսկա ծրագիրները, նվիրական հրամայական պարտականություն կիյնա մանավանդ հայ արտասահմանին՝ գործակցիլ Վեհին, դյուրացնել Անոր աշխատանքը։

Շատ բան կախված է մեզմե. լինել կամ չլինելու խնդիրն է դրված հրատապորեն. կամ այլասերումի զանազան ճանապարհներով պիտի հյուծինք և մեռնինք և կամ սթափելով մեր անտարբերութենեն, թոթափելով մեր թմբիրը՝ գանք ինքնագիտակցության, լծվինք համառ աշխատանքի և ծանր զոհողություններու գնով ապրինք հայ և մեռնինք հայ, Սփյուռքի մեջ, կամ երթանք Հայրենիք։

Եթե հիվանդը հուսահատ է, եթե կպակսի հավատքը, ապարդյուն կմնան բուժումի բոլոր աշխատանքները։

Հարազատ հայը պետք է խորապես ըմբռնե, թե իր ազգային պատիվը, ճակատագիրը իր ձեռքին մեջն է, եթե ուզե՝ ցեխին մեջ կնետե և կսևցնե, եթե ուզե՝ բարձր կպահե և կփայլեցնե զայն։

Յուրաքանչյուր հայ քարերեն մեկն է հայ ցեղի հինավուրց և փառավոր շենքին. եթե փրթի անկե և զատվի՝ ոտքի կոխան կըլլա և կփչանա, եթե անտաշ և փտած քար մըն է, կավրե ամբողջության գեղեցկությունը և կվնասե շենքին տոկունության։

Պետք է ըլլանք լավ շինանյութ և ընտիր քարեր՝ Հայ եկեղեցվո և հայ ժողովուրդի շենքին վերակառուցման համար, մեր նոր օրերու շինարար վարպետ և որմնադիր մեծագործ Հայրապետին ձեռքին մեջ։

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՇԱՔԱՐՅԱՆ
(Կահիրե, «ՋԱՀԱԿԻՐ», 20—31 հոկտեմբերի 1958 թ., № 96—99)։

ՀՈԲԵԼՅԱՐ ՎԵՀԱՓԱՌԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդյան հիսնամյա և օծման երրորդ տարեդարձի տոնակատարությունները առիթ մը ևս կընծայեն, որպեսզի անդրադառնանք այն վեհ ու սուրբ գործին, որ հառաջ կտարվի Ս. Էջմիածնի մեջ. անդրադառնանք մանավանդ այդ գործը կատարողին։

Ինչպիսի՞ գործ սակայն։ Հոգիներու փրկության գործը։ Սկսած մեր Տիրոջ կողմե, կազմակերպված Իր Առաքյալներուն միջոցով և անընդմիջաբար շարունակված առաքելատիպ հայրապետներու կողմե։ Այսօր այդ գործը հառաջ կտանի Ս. Հոգին շնորհներով զարդարված Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոս։

Մենք հաճախ, առօրյա գործերու բերումով, կմոռնանք մեր հոգևոր սնունդը, մեր հոգևոյն փրկության համար մեր փույթը, որ մեր մտածման առանցքը պարտի ըլլալ։ Սակայն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա անխոնջ աշխատող մըն է, կանուխ առավոտեն մինչև ուշ գիշեր անդադար կգործե։ Այս աշխատանքը մեկ և գլխավոր դրդապատճառ ունի—Աստվածային գիտությամբ լուսավորել հայ ժողովուրդի գավակներուն միտքն ու հոգին։

Թե՛ Հայրենիքի և թե՛ արտասահմանի մեջ, Վեհափառին կաթողիկոսանալեն ետք, ականատես եղանք, ականջալուր եղանք այն կորովի ու անհերկյուղ գործին, որ տարամերժորեն Նորին Ս. Օծություն Վազգեն Կաթողիկոսինը եղավ, հիշված բոլոր երեսներուն վրա հավասարապես։

Հասկնալի կդառնա նաև սիրեցյալ Վեհափառին պաշտամունքի բարձրացած սերը հանդեպ Ս. Էջմիածնին, որ խորհրդանիշն է մեր հավատքին։ Բախտավոր եղավ արտասահմանի մեկ մասը և հատկապես եգիպտահայությունը, որ կրցավ լսել Ընդհանրական իր Հայրապետին կենդանի խոսքը։ Բախտավոր է հայությունը ամբողջ, որ նախախնամական կարգադրությամբ մը ընտրված է հաթոռ Ս. Գրիգոր Լուսավորչի Վազգեն Ա-ի նման Կաթողիկոս մը։ Անոր ձայնը հաճախ պիտի լսե իբրև գրավոր կամ կենդանի խոսք, իբրև մխիթարանք, խաղաղության հրավեր, խրախուսանք, շրջահայեցություն ու հավատքի կոչ, ընդհանուր թերահավատության ժամանակաշրջանի մը ընթացքին։ Անոր ձայնը պաղած հոգիներու համար ջերմացնող հավատքի շողն է։

Վազգեն Վեհափառը Հավատքի մարդն է։ Այդ տեսանք մենք և կվկայենք։ Իր խնկաբույր պատմուճանեն արտածորող գրավչությունը հավատքի ուժն էր, որ ստուգիվ հրաշքներ կգործե, եթե անկե... մանանեխի հատիկի չափ ունենան մարդիկ։ Հավատքի, Սիրո և Հույսի Հայրապետը, որ նույն հոգին ունի, այն հոգին, որ երանելի հայրապետներուն է, որոնք անընդմեջ գծով մը առաքելական շառավիղեն կուգան, կանցնին հայոց պատմության կարմիր ու մութ էջերեն, հասնելու և հասցնելու համար իրենց հանձնված հոտը լուսավոր կայանին։

(Կահիրե, «ՋԱՀԱԿԻՐ», 20—31 հոկտեմբերի 1958 թ., № 96—99)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԳԻՍՈՒԹՅԱՆ ՊՐ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԱՆԻ ԽՈՍՔԸ

....Պատմական այս պահուն սակայն մեծ է մեր ցնծությունը, որովհետև պետք եղած ատեն, պետք եղած մարդը կկանգնի Ս. Էջմիածնի գլուխը, որուն փառքն ու ճակատագիրը գարերու ընթացքին նույնացած են Հայաստանի և հայ ժողովուրդի փառքին ու ճակատագրին հետ։

Այս է պատճառը, որ այն օրը, որ ծնավ և այն օրը, որ իր գահակալությունը տեղի ունեցավ, երջանիկ օրեր են հայության համար, որ բախտավորություն բերին անոր, և երջանկություն բերին անոր։

Այո, Աստված մեր երեսը նայեցավ, մեր Մայր Աթոռը օժտեց Վազգեն Կաթողիկոսի նման արժանավոր եկեղեցականով մը։

....Մարդու մը համար, որ հոգեկան և մարդկային ծանրակշիռ պատասխանատվություններ կստանձնե, իր հոգեկան փառքն է էականը, մարդիկ կան, որոնց համար փառքը կիտված է, որ կթափի առաջին պատահարեն իսկ. մինչ Վեհափառին փառքը կիտված չէ, այլ բարի, ազնիվ խմոր մը, էություն մը, որ իրականություններու և դեպքերու առջև ա՛լ ավելի կմեծնա և կազնվանա, որ իր անձով կպատվե և կբարձրացնի իր դիրքն ու տիտղոսը։

Ան այսօր կշինե, կկերտե իր հոգեկան պատկերին նմանությամբ, օգտվելով այն բացառիկ առիթեն, որ ստեղծված է Հայաստանի մեջ, Սովետական կառավարության քաղաքականության շնորհիվ։

Էջմիածնի մեջ Վեհափառը կատարեց ավելի հրաշալի գործ մը. այսօր դուք կմոտենաք Հայաստանի ձայնասփյուռին, համայնավար երկրի մը ձայնասփյուռին, և կիմանաք մեր եկեղեցական երգեցողությունները, իմանալու համար աշխարհի ամենեն վերացական կրոնքին փառաբանությունը, այնպիսի երկրե մը, որ ամենեն նյութապաշտն է, ամենեն իրապաշտը։

Վեհափառը կաշխատի ու կաղոթե, այդ աղոթքը աշխատանքի վերածելով։

Եվ ինչպե՞ս կարելի է համայնավար գործակալ անվանել այն Հայրապետը, որուն շնորհիվ այսօր մենք Հայաստանի ձայնասփյուռեն, երեք տարիե ի վեր ականջալուր կըլլանք ազգային թե եկեղեցական տոնախրմբությանց և կհրճվինք։ Վեհափառը ասով ընծայեց վայելք մը, որ երազել իսկ չէինը կրնար։

Վեհափառը ծաղկեցուց իր շուրջը և կվերակենդանացնե Հայաստանյայց Եկեղեցին. ահավասիկ ինչու համար հրաշալի բան մը տեղի կունենա հոն, հայ սրտերը կհրճվին ու ադոր հեղինակը Վեհափառն է։

....Մենք այս երկու տարեդարձներուն առթիվ ի՞նչ կրնանք նվիրել։ Անոնք որ ունին՝ կրնան ընծայել իրենց ոսկին ու արծաթը, իսկ բոլորս կրնանք և պետք է ընծայենք մեր սրտին ոսկին ու արծաթը, որպեսզի Ան իր անձայրածիր քարության մեջ ավելի զորանա, մեր հավատարմությունը, մեր սերը և մեր վստահությունը ունենա, որպեսզի շարունակե ծառայել իր հավատքին, իր Հայրենիքին և մեզի, որպեսզի մեր հավատքն ալ կանգուն մնա։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԱՆ

(Կահիրե, «ՋԱՀԱԿԻՐ», 20—31 հոկտեմբերի 1958 թ., № 96—99)

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ԽԱՂԱՂԱՍԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ

....Ս. Էջմիածինը շղթայի այն գլխավոր օղակն է, որ արտասահմանի հայությունը կկապե, անքակտելիորեն, Հայրենիքին՝ մեր ժողովուրդին դարավոր երազին, որուն իրականացման համար միլիոնով զոհ տվեր ենք։

Ահա այդ սրբազնագույն օղակին է, որ հայանուն մարդիկ իրենց քանդիչ հարվածները կիջեցնեն ի զուր։

Սակայն, Վեհափառ Հայրապետը, գիտակից խաղաղության ընձեռած բարիքներուն, գիտակից այն իրողության, որ հուրով ու սուրով սնանող մարդոց մահն է խաղաղությունը, անվրդով կշարունակե իր աշխատանքը, այդ օղակը ամրապնդելու իր աշխատանքը։

Վեհափառը, արտասահմանի իր հոտին տված իր այցելությամբ, վարակեց մեզ իր ջերմ հայրենասիրությամբ, անկեղծ ազգասիրությամբ։ Ինք ասուպի մը նման անցավ, բայց իր ետին անջնջելի հետք մը ձգեց, որուն հետևանքով, նախապես տատամսող ազգայիններ այսօր Ս. Էջմիածնի փարած են այնքան, որքան Անկե բաժնված են ամեն կարգի Կայեններ։ Եվ հանդիսավոր այս օրերուն, մենք Իրեն մեր մեծագույն նվերը տված կըլլանք, երբ հավատարիմ մնանք մեր Մայր Հայրենիքին, մեր Ս. Էջմիածնին, որովհետև, այդպիսով, խաղաղություն պիտի տիրե իր խռովահույզ սրտին մեջ և Իր տարած աշխատանքներուն հոգնությունը պիտի լզգա։

ԱՎԵՏԻՍ ՑԱՓՈՒՃՅԱՆ

(Կահիրե, «ՋԱՀԱԿԻՐ», 20—31 հոկտեմբերի 1958 թ., № 96—99)

ՆԱՄԱԿ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ*

«Էջմիածին» ամսաթերթին 1958 թվականի հոկտեմբեր—նոյեմբեր միացյալ թիվը սա պահում ձեռքիս մեջ և աչքիս առջևն է։ Կթղթատեմ դայն էջ առ էջ ու կկարդամ տող առ տող։

Որքա՜ն հոգեպարար և հրճվալի պիտի ըլլա Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետիսին երկնասլաց երգեն անմիջապես վերջ՝ այսօր, երգել նաև Ս. Էջմիածնի վերածննդյան, պարծանքի և փառավորության մեծ ավետիսը, երկրե երկիր, հոգիներե հոգի, վայելող ու տառապող սրտերե ներս՝ Հայ Ազգին հավատացյալ ժողովուրդին։

Միթե կրնա՞ն դեռ ըլլալ կույրեր, ուրացողներ, ուխտադրուժներ, ըսեմ դավաճանողներ հանդեպ հայ ազգային թե կրոնական կյանքին ու կենդանության հիմնաքարը եղող Ս. Էջմիածնի ավանդության ու սրբության։ Եթե կան ու պիտի ըլլան, այդպիսիներ կենդանի մեռյալներ են, ու հավիտյան կորածներ, պատժվածներ՝ նույնիսկ իրենց խղճին պատիժով։

Հաջորդաբար կթերթեմ ամսաթերթը։ Ամենայն Հայոց Հայրապետ, Սրբազնագույն Կաթողիկոս Վազգեն Ա-ի ծննդյան հիսնամյակին և գահակալության երրորդ տարեդարձին առթիվ եկեղեցական թե Մայր Աթոռեն ներս եղած արարողություններու ու հանդիսության շուրջ նկարագրությունները Սփյուռքի չորս ծայրերեն եկող եկեղեցականներուն թե աշխարհականներուն, հավատացյալ ժողովուրդին իր ներկայացուցիչ, սրտաբուխ խոսքերը հանդեպ Հայրենիքին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, նաև Ազգին սիրելի ու պաշտելի Հայրապետ Վազգեն Ա Կաթողիկոսի անձին ազգաշեն, կրոնաշեն գործունեության նկատմամբ։ Այս ճառերն ու խոսքերը ուրիշ բան չեն, եթե ոչ իսկական ու անշահախնդիր արտահայտություններ ողջ հայության սրտեն ու զգացումեն բխած, որքան ալ ըլլան անոնք հեռու, օտար հորիզոններու տակ։

Ինքզինքս երբեք դժբախտ պիտի չդգամ, որ այդ պատվական ու փառավորյալ հանդիսությանց օրերուն անձամբ ներկա չեմ եղած։ Ապրին «Էջմիածին» ամսաթերթն ու տպարանը։

Դեռ քանի կթերթեմ ամսաթերթը, քունս մոռցած, կկարդամ սրբազան հայրերու քարոզները, սեղանի ճառերն ու մաղթանքները, իրենց հարգանքի, երկյուղածության, հնազանդության անսպառ խոսքերը հանդեպ Աթոռին և Հայրենիքին, այնքան ավելի կհրճվիմ։ Գրեթե վերացած կհետևիմ Նորին Վեհափառության բոլոր արարողություններու և հանդիսավորություններու առթիվ, հայրական, կրոնական, հոգեբանական, դաստիարակչական հոգեշունչ և իմաստալի խոսքերուն, որոնք կրխին կարծես մասամբ աստվածային շնորհեն ու շունչեն։ Ապա ի՞նչ ըսել նաև դիտելով ա՛յն գեղեցիկ լուսանկարները, որոնց մեջ սրբազան հայրերն ու սիրելի եղբայրները իրար միացած, իրար մեջ շաղկապված, Նորին Վեհափառության հովանավորության և օրհնություններու ներքև, անմոռանալի օրեր և հիշատակներ կապրին։ Պետք չէ տարակուսիլ, որ Հայ Ազգին այս ազնիվ ու մաքուր զավակները անշուշտ իրենց հետ տարին իրենց իղձերը՝ ապրող եղբայրներուն ու քույրերուն իբրև ավետիսը Հայրենիքին ու Մայր Աթոռին վերածնունդին, քարոզելով և ըսելով միևնույն ժամանակ, որ «Եղբայրներ ու քույրեր, ահավասիկ Հայրենիքեն կուգանք, Ս. Էջմիածնեն կուգանք, հոն տեսանք, որ Հայ Ազգը կապրի ու պիտի ապրի հավիտյան իր Հայրենիքով և Կաթողիկոսական Աթոռով։ Այո, պիտի ապրի, որովհետև դարերու երազն ու բաղձանքը տեսակ մը աստվածային զորություն ու հրաշք, Արարատի գագաթեն վար իջավ դեպի հող՝ ծաղկեցնելու համար դաշտերն ու մարգագետինները, տաճարներն ու հոգիները։

Ի՞նչ է ուրեմն, եթե ոչ հրաշք...։ Ըլլալ հեռու, գտնվիլ օտար երկինքի տակ ու ապրիլ։ Հոգ չէ թե մեկ քանի օրերու համար, բայց սրտով միշտ ըլլալ Հայրենիքին հետ, ըլլալ Ս. Էջմիածնի հետ և ապրիլ Սրբազնագույն Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնություններուն տակ։

Ահա այս բոլոր ներշնչումները պահ մը կմղեն զիս, իբրև մեկը միլիոններուն մեջեն, գալ մասնակցելու համար հրավիրյալներու շարքին, ու սեղանին փառքի բաժակը ձեռքիս, ոտքի վրա, բարձրաձայն երգել և կոչել. «Խաղաղություն՝ հայրենի երկնքին, անսասանություն՝ Ս. Էջմիածնի դարավոր կառուցվածքին, Գահին ու Գահակալին, արևշատություն՝, երկա՞ր կյանք Հայոց ընտրյալ ու սիրեցյալ Հայրապետին՝ Նորին Վեհափառություն Վազգեն Ա Կաթողիկոսին։

Ի՞նչ կա ավելի վսեմ ու հոգեպարար, քան այն փառքն ու պարծանքը, զորս պետք է սնենա ամեն հայ անհատ, ըսելով՝ «Ես հայ եմ»։

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ

Բուֆրեշ, 15 հունվար 1959

* Այս սրտաբուխ տողերը գրված են խմբագրության ուղղված մի նամակից։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՊԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ*

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Տաթևացին ԺԵ դարու ամենանշանավոր եկեղեցական գործիչն ու մատենագիրն է։ Իր անունը լրացուցիչ ու անբաժան մասն է Որոտնեցիին ու Տաթևի դպրոցին։ Դպրոցի ուսումն ու ժողովրդականությունը կմեծնան շնորհիվ իրեն։ Ավանդապահ, գործունյա ու բազմագետ ուսուցիչն է՝ որ ամ գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր, և տուրնչեան աշակերտացն պատմէր»,— կգրե Առաքել Սյունեցի. «ընթերցման է պարապող, աշակերտաց է մարզող... ծածուկ բանից բացատրող։ Որոտնեցիի ամենաուաղանդավոր աշակերտներեն մեկն էր Գրիգոր Տաթևացին, որ իր ուսուցչի կենդանությանն իսկ եղավ Տաթևի համալսարանի ամբիոնին վարիչը և առավել ևս բարձրացուց դպրոցին փառքն ու անունը։

Կենսագրականը.— Գրիգոր Տաթևացին ծնած է 1346 թվականին Վայոց Ձորի մեջ։ Հայրը՝ Սարգիս, արճիշեցի, իսկ մայրը փարպեցի էր, որոնք ասպատակութենե փախչելով եկած հաստատված էին Վայոց Ձորի մեջ, ուր ծնավ Խութլուշահ։ Յոթնամյա ուսում ստանալե վերջ տասնհինգ տարեկան էր, երբ Տփղիսի մեջ հանդիպեցավ Որոտնեցիին, որուն աշակերտեցավ քսանութը երկար տարիներ։ Ամեն տեղ հետևեցավ իր ուսուցչին, միշտ անոր ներքողը հյուսելով։

Հովհաննես Որոտնեցի իր աշակերտին՝ Գրիգոր Տաթևացիի հետ անօրեն կեղեքիչներու ձեռքեն փախստական, կուգա Դարանաղի Սեպուհ լեռան Ս. Գրիգոր Լուսավորչի հանգստարանը, խոր ծործորի մը մեջ, ուր շինված էր նաև ձեռակերտ փայտյա փոքրիկ մատուռ մը և հոն ապահով զգալով, մնացին որոշ շրջան մը։ Գրիգոր Դարանաղցի կգրե. «Ու զԳրիգոր Տաթևացին՝ զլուսաւորիչն Աստուածաշունչ Գրոց և զլուծիչն արտաքնոց, որ մինչև յայնմ ժամանակին դեռ աւագ սարկաւագ եղեր և անդ ի դամբարանի Սրբոյն Գրիգորի ձեռնադրելով քահանայ և առնելով գաւազան իշխանական վարդապետութեան ի միում աւուրս[1]»։

---

* Հաճույքով հրատարակում ենք Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ և խոստումնալից հոգևորականներից Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանի «Տաթևյան դպրոցի գերը հայ մշակույթի պատմության մեջ և Գրիգոր Տաթևացին» վարդապետական ավարտական աշխատության մի գլուխ։— ԽՄԲ.։

1 Գրիգոր վարդապետ Կափախեցի կամ Դարանաղցի. Երուսաղեմ, 1915, էջ 399։ (Ըստ ոմանց Գրիգոր Տաթևացի քահանա կձեռնադրվի Երուսաղեմի մեջ 1373-ին, ինչ որ անհավանական կթվի ըլլալ)։

Իր կյանքին մեծ մասը անցուցած է Տաթևի մեջ, հոն աշակերտած է ու պաշտոնավարած, ուսկից ստացած է Տաթևացի հորջորջումը։ Իր մասին ամբողջական կենսագրական մը գոյություն չուներ։ Միայն վերջերս Լևոն Խաչիկյանի պրպտումներուն շնորհիվ, Երևանի մատենադարանի թիվ 6607 ձեռագրի 5ա և 6ա էջերեն հայտնաբերվեցավ Գրիգոր Տաթևացիի համառոտ կենսագրությունը, զոր կմեջբերենք ամբողջությամբ.

«Ի սմին աւուր՝ ի դեկտեմբերի Իէ (27), ննջումն ի հանգիստ երիցս երանեալ քաջ բարունապետին Գրիգորի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ։

Սքանչելի այրս Աստուծոյ էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջբերունի և մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ, ի գեղաւանէն Փարպոյ։ Ծնեալ յաշխարհին Վրաց, ի յամուրն Թմոգ, և սնեալ ի ձեռն հարազատ եղբօրն՝ ի տան Թագաւորին Դաւթի։ Եւ էր մանուկ գեղեցկատիպ, և ուշիմ, և լի Հոգւոյն պարգևօք։ Եւ յորժամ կամեցաւ մեծ փիլիսոփայն հայոց Յովհաննես Որոտնեցին գնալ յԵրուսաղէմ՝ ուրկրպագութիւն սուրբ տեղեացն, ետես զմանուկն Գրիգոր յառաջադէմ յամենայն զմանուկն։ Եւ էառ առ ինքն, և արար ըստ հոգւոյ որդի, և սնոյց ի բարին, և ուսոյց զամենայն իմաստս աստուածային զրոց և արտաքին սոփեստից։ Եւ տարեալ ի հանգիստ դամբարանի Սուրբ Լուսաւորչին, ի Սեպուհ ձեռն և ետ ձեռնադրել սարկաւագ, և յանուն Լուսաւորչին կոչեցաւ Գրիգոր (նրա մկրտութեան անունը եղել է Խութլուշահ— Լ. Ս.), և անուամբ և իրօք ելից զտեղի նորա՝ լուսատրելով իմաստութեան լուսովն զազգս Հայոց։ Եւ տարեալ յԵրուսաղէմ արար քահանայ, և դարձեալ բերեալ առ գերեզմանն Սուրբ Լուսաւորչին՝ արար վարդապետ՝ աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ տանն Աստուծոյ։ և բերեալ յաշխարհն Սիւնեաց, և զկնի մահուանն իւր ետ հրաման նստել յաթոռ մեծ համալսարանին Նսայեայ և բարունապետ Հայոց Մեծաց։

Եւ մեծարեցաւ և պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն, և յորդոյ նորին Միրանշայէն. և պատուեցաւ ազգս Հայոց յայլասեռիցն վասն ախորժ և իմաստալեղծ բանից վեհին Գրիգորի։ Այլ և արար գիրս յոգնիմաստք ընդդէմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայք, և արար բանս խրատականս, և իմաստ, և հանճարս, և իմաստնացոյց զազգս Հայոց քան զամենայն ազգս, և ուղղեաց զկարգս և զսահմանս եկեղեցւոյ։ Եւ էր անդադար յընթերցումն և ի գրել աստուածային իմաստից, և անձանձիր ի յաղօթս և անպարապ ի ծնրադրութիւնս, աղքատասէր և օտարասէր. առատ ի տուրս աղքատաց, խարազնազգեստ մարմնով և խոնարհ հոգւով և ծննդական մտօքն. հասակաւ երկայն, դիմօք պայծառ, տեսակ արժանի գոռոզութեանն, հերօք խարտեաշ, մուրօք առատ, միշտ պահեցող, յոյժ արտասուող, պատուող տանից, սիրող սրբոցն և բանից [նոցա]։ Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքն Տաթևոյ ի դեկտեմբերի Իէ (27), և թաղեցաւ ի տանի մեծ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և եղև դասակից և պատուակից նորին, ի թուին ՊՄԸ (1409). ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, օրհնելոյն յաւիտեանս, ամէն. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն»[2]։

Գրիգոր Տաթևացիի կյանքի ու գործունեության առանձին դրվագներու ուսումնասիրության, ինչպես նաև մահվան թվականի ու ամսաթվի համար շատ մեծ արժեք կներկայացնեն վերոհիշյալ համառոտ կենսագրականը։ Ակնհայտ է, որ իր ավագանի անունը եղած է Խութլուշահ։ Եվ թե Հովհաննես Որոտնեցին մասնավոր աշխատանք տարած է իրեն համար՝ աստվածային գիրքերու և օտար իմաստասերներու գրվածքներուն իմաստները պարզաբանելով։ Իր հետ տարած է Երուսաղեմ ու անկե գացած են Դարանաղ և սարկավագ ձեռնադրված է Սեպուհ լեռան Ս. Լուսավորչի դամբարանին մեջ, ապա քահանա, և հանուն Լուսավորչի վերակոչված է Գրիգոր։

Խութլուշահ, քանի մը վաղամեռիկ զավակներե ետք, ուխտի զավակ եղած է։

Ասկե առաջ հիշեցինք, որ 15 տարեկանին, այսինքն 1361-ին, կհանդիպի Հովհան Որոտնեցիին, Տփղիսի մեջ, ու անոր կաշակերտի։

1373-ին իր մեծահռչակ ուսուցչին հետ կերթա Երուսաղեմ։

Վարդապետական գավազանի իշխանությունը կստանա Երզնկայի մեջ, իսկ ծայրագունությունը՝ 1387-ին Ապրակունիսի մեջ, իր ուսուցչեն։ Հովհան Որոտնեցի իր վախճանումեն առաջ, 1388-ին, ձկոչեաց զմեծ վարդապետն (Գրիգոր) և զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա... և եդ զԳրիգոր ամենեցուն գլուխ և ուսուցիչ»[3]։

Իր հոգևոր եղբայրներն ալ ցանկացած են, որ ինք ըլլա Որոտնեցիի հաջորդը։ «Եւ յաջորդեաց յաթոռ նորա (Յովհաննու) քրիստո-

---

2 Լ. Ս. Խաչիկյան, «Չորս դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 103—104։

3 Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 33։

սածաալ աղբիւրն և անմուտ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթեւացի հաւանութեամբ և կամօք մեծ վարդապետին Սարգսի... և համշիրակ և եղբարց իւրոց՝ Յակոբայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին և Գէորգայ Երզնկացւոյ, և ամենայն աշակերտաց գնդին» և ուրիշներու։

Տաթեւացի Ապրակունեաց վանքի մէջ մեծ հռչակ հանեց և դարձաւ «վարդապետն ամենայն հայոց, երկրորդ լուսաւորիչն և աստուածաբանն», «զեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց հնոց և նորոց»[4]։

Սակայն Տաթեւացի երկար չի մնար Ապրակունիսի մէջ, սովը և նյութականի պակասը կստիպեն զինք ելլ, որ իր աշակերտներով հեռանա Աստապատեն Տաթև 1390 թվականին, ուր շարունակեց իր ուսուցչական գործունեութիւնը՝ մինչև 1408 թվականը։

Գրիգոր Տաթեւացին հմուտ էր լատիներեն լեզվին և լատին աստվածաբաններու «սկոլաստիկ ոճին», Ս. Գրոց և աստվածաբանական գիտութեանց կողքին հմուտ էր նաև հունաց արտաքին փիլիսոփայական դպրոցներուն և աշխարհիկ գիտութիւններուն։ Ան իր դարաշրջանի նշանաւոր գիտնականներեն մեկն է, ըլլալով ճշմարիտ հոգևորական և աստվածաբան։ Իր աշակերտները դինք հետևյալ մակդիրներով կոչած են «... մեծ և անուանի քաջ հռետորն, բարունապետաց բարունապետն, և վարդապետաց վարդապետն... որ եղև երկրորդ լուսաւորիչ ազգիս Հայոց, և իբրև զարեգակն ի միջօրէի պայծառացեալ լուսաւորեաց զՍկեղեցիս Հայաստանեայց»[5]։

1390-են վերջ, երբ Տաթեւացին Ապրակունեաց վանքը թողով, Տաթև հաստատվեցավ, հայրենի գավառներեն բազմաթիվ աշակերտներ խմբվեցան հոն, իրեն աշակերտեցան նաև Որոտնեցիի վերջին աշակերտները, որոնք են Մխիթար Տաթեւացի, Հովհաննես Հերմոնեցի, Գալուստ Վաղանդեցի, Սիմեոն Սյունեցի, Հակոբ Բոստացի, Գրիգոր Այրարատեցի, Գրիգոր Ջուղայեցի, Ավետիս Աստապատեցի, Ծղիս Ոձոփեցի, Հովհաննես Վաղանդեցի, Յովհան Շամախեցի, Յովհաննես Կապանցի մականվանյալ Կարմիր, Մատթեոս Ուխտեցի, Մկրտիչ Փայտակարանցի և Ստեփանոս Թավրիզեցի[6]։

Տաթևի դպրոցը իր օրով ծաղկման գագաթնակետին հասավ և շրջան մը գիտութեան ծարավ և հոգևոր կյանքի գոհացում ու հաճույք առթող վայրը Տաթևի վանքը եղավ, Հովհան Որոտնեցիի և Գրիգոր Տաթեւացիի վարդապետարանը։ Ամեն կողմե գունդգունդ ուսումնածարավ աշակերտներ կփութային Տաթև, կուսավորվելու հոգվով և մտքով, լուսավոր մեծ վարդապետին քաղցրական վարդապետության, «զի առաքելանման բղխէր ոշնորհս՝ Հոգոյն Աստուծոյ, և նա թեթեւ շարժէր զլեզու նորա առ ի վարդապետել զրանն ճշմարտութեանն»։ Ժամանակակիցներեն մեկը հետևյալ պատկերով կնկարագրե անոնց գնացքը. «Հայոց տներ-ից սկիզբ առած վտակները (աշակերտները), վերածվում էին հորդ գետերի ու հոսում դեպի Տաթև»[7]։

Հոս է որ մեծ մանկավարժը կերտեց իր նախանձելի համբավը պատկառազդու հեղինակությամբ։ Ունեցավ 80-ի մոտ աշակերտներ, վարդապետ, քահանա, կրոնավոր և սարկավագ, եկած Սյունիքի զանազան կողմերեն, ինչպես նաև Եկեղյաց, Արարատյան, Ջուղայի, Աստապատի, Շամախի, Կապանի, Գանձասարի, Փայտակարանի, Թավրիզի և Արճեշի կողմերեն, որոնց մեծ եռանդով կուսուցաներ շուրջ 20 երկար տարիներ, 1390—1409 թվականներուն։ Այս աշխատանքը կրնար այնպիսի ատեն մը, երբ «ոչ գոյր անդորրութիւն և ոչ հանգիստ խաղաղութեան»։ Հաճախ Տաթևացի, աշակերտներու գլուխը անցած, գաղթած է ապահով վայրեր. «Թոնաւորն Յուսուփ, տէրն Թաւրիզու, էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանէ, վասն բարեխօսութեան նոցա եկն. և նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետին։ Կարա-Կոյունլու Յուսուֆն է, որ Լենկթիմուրի մահեն ետք վերականգնած էր իր տերությունը 1405—1420։ Տաթևացի, ստիպված, հալածական կփախչի Արճեշ։

Այժմ տեսնենք Տաթևի դպրոցի մեջ ավանդված կրթական ծրագիրն ու ուսման մեթոդները։

Կրթական ծրագիրը և ուսման մեթոդները.— Անվարան Օրբելյանի նման պիտի կրկնեինք նույն գրվատական խոսքերը Տաթևանցիի օրով ևս. «Եթե էր այնուհետև տեսանել զտունն զայն իբր մայրաքաղաք բազմաժողով, քանզի և շինեալ կայր բազմութիւն երգոց և ամբոխութիւն իբրև հազար արանց, որոց մշտաջան աղօթքն բարձրացեալ էր առաջի Աստուծոյ, և կայր կանգուն յերկրէ յերկինս իբրև սիւն հրեղէն»[8]։

4 Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 50։

5 Նորայր եպիսկոպոս Պողարյան, «Ցուցակ ձեռագրաց», Դ հատ., Երուսաղեմ, 1956, էջ 112—113։

6 Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 50։

7 Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարան, ձեռագիր № 3276, էջ 27ա և 136բ։

8 Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն Տանն Սիսական», հատ. Բ, էջ 56։

Տաթևի դպրեվանքը եղավ այն մեծ հաստատությունը, որ լուսատրեաց զարգաց մեր ճշմարիտ և ուղղափառ դաստանութեամբ և հաւատով»[9], Դարեր շարունակ պահեց, պահպանեց և զարգացուց հայ մշակույթը։ Հայ մշակույթի և արվեստի կրթության կազմակերպման գործի մեջ շատ մեծ դեր ունեցավ Որոտնեցիի և Տաթևացիի անզուգական դպրոցը։

Գրիգոր Տաթևացիի օրով առավել ևս պայծառացավ Տաթևի դպրոցը։ Ան հմուտ էր հին եկեղեցական և հայկական գրականություններուն, ուսումնասիրած էր հունական փիլիսոփաներու գործերը, ինչ որ Արևմուտքի մեջ ևս կընեին, ծանոթ էր ունիթոռներու մեջ ընդունված գրականության։ Գիտեր նաև լատիներեն լեզուն։ Դպրոցին մեջ կսորվեցներ հայոց գրականությունը, Հին և Նոր Կտակարաններու մեկնությունը, սուրբ հայրերու գրվածքները, «զԳիրս արտաքին իմաստասիրացն», «լուծմունք արտաքին գրոց», որ Պղատոնի, Արիստոտելի, Փիլոնի և Պորփյուրի գրվածքներն ու անոնց բացատրություններն են։ Այս նյութերեն զատ կվարժեցներ նաև հրաժշտություն, ճառասացություն և գրչության արվեստները։

Երևանի Մատենադարանի ձեռագիրներեն թիվ 7823-են քաղված հետևյալ հատվածեն կհայտնվի, որ Տաթևի համալսարանը ուներ երեք ուսումնարաններ, «ի միումն ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս՝ քաղցրալուր ձայնի եղանակաւ, մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա։ Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւնս։ Եւ ի միումն՝ զներքին և զարտաքին գրեանս ի մասնաւորի՝ զՀին և զնոր Կտակարանս, ներքին և արտաքին մեկնութեամբ և թարգմանութեամբ»[10]։

Ահա թե ի՞նչ կգրե այդ մասին Ա. Խ. Մովսիսյան. «Երեք ուսումնարանները Տաթևի համալսարանի երեք ֆակուլտետներն են։ Ինչպես մենք տեղեկանում ենք վերոհիշյալ հիշատակարաններից, այդ ուսումնարաններում դասավանդվող առարկաները Սյունյաց դպրոցին ծանոթ, այդ դպրոցի սիրված ու փայփայված գիտություններն են եղել։ Ինչպես տեսանք, առաջին ուսումնարանում ուսուցանում էին նախկին երգիչների երաժշտությունը, ուրեմն և՝ տեսություն, և՝ երգեցողություն, այս արվեստը այնքան էր մշակված Տաթևի բարձր դպրոցում, որ երկրի բոլոր կողմերից՝ գյուղերից ու քաղաքներից գալիս էին այնտեղ երաժշտական կրթություն ստանալու։ Անշուշտ, այստեղ մեծ տեղ էր տրվում եկեղեցական երաժշտությանը։

Երկրորդ ուսումնարանում ուսուցանում էին «զանազան նկարչութիւնս», դիմանկարչություն, տեսարանների (պեյզաժ) նկարահանություն, մանրանկարչություն, ծաղկանկարչություն, գրքերի գեղարվեստական ձևավորումը, ծաղկազարդումը, նաև գրչության արվեստը՝ գեղագրությունը, որ այս դպրոցի ամենասիրելի առարկաներից մեկն էր։

Երրորդ ուսումնարանում ուսումնասիրում էին գլխավորապես հումանիտար, հասարակական գիտությունները, ինչ որ այդ ժամանակ կոչվում էր արտաքին գիտություն, որի մեջ մտնում էին փիլիսոփայությունը, ճարտասանությունը, քերականությունը, պոետիկան, տրամաբանությունը, դաստիարակությունը կամ մանկավարժությունը։ Այստեղ էին ուսուցանվում նաև ներքին գիտություններ՝ մայրենի լեզուն, գրականությունը, պատմությունը, տնտեսությունը և այլն։ Ինչպես տեսանք, այս ուսումնարանում ուսուցանվում էին Հին և Նոր Կտակարանները, կրոնական գրքերը, ապա անտիկ աշխարհի մի շարք փիլիսոփաների աշխատությունները, հատկապես Արիստոտելի, Փիլոնի, Պորփյուրի և այլն, սրանց աշխատությունների մեկնություններն ու թարգմանությունները։ Այս ուսումնարանում ուսումնասիրվում էին բնական մի շարք գիտություններ, հատկապես մարդակազմություն, տարրաբանություն (քիմիա) աշխարհագրություն, աստղաբաշխություն, ապա տոմարագիտություն և թվաբանություն»[11]։

Տաթևի դպրոցի դասընթացքներու կից ամենաանհրաժեշտ առարկաներեն մեկն ալ գրչության արվեստի ուսուցումն էր։ Հիշատակարաններեն քաղված բազմաթիվ հիշատակություններ կան, որոնք կփաստեն, թե Գրիգոր Տաթևացին, գրչության արվեստին նկատմամբ, հմուտ գիտնական մըն է։ Գեղեցկագիր մեկը եղած է, մանավանդ հոդ տարած է գեղեցիկ և ուղիղ գրելու, անսխալ և ճիշտ գծագրելու, գիրերը համաչափ պահելու, ճարտարորեն սղագրելու, կըրճատելու և տողադարձելու մեջ։ Բազմաթիվ գրիչներ հիացմունքով ու պարծանքով կխո-

---

9 Թովմա Մեծոփեցի, «Պատմութիւն», էջ 33։

10 Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958 թ., էջ 132։

11 Ա. Խ. Մովսիսյան, հիշված աշխատությունը, էջ 132—133։

սին իր մասին և իրենք զիրենք «անարժան» և «համբակ» կնկատեն։ Անոնցմե մեկը այսպես կգրե. «Գեղեցկայարմար դրուատով ունէր յինքեան զամենայն արուեստ զրչութեան, քանզի զարդարեալ էր սա ի մեծ վարժապետէն Գրիգորէ...»[12]։

Գրիգոր Տաթևացին իր ուսուցչին՝ Հովհան Որոտնեցիի նման մասնավոր խնամք կտաներ Միջին դարու հայ բարձրագույն դպրոցներու մեջ ամենաշատ սիրված այս ճյուղին վրա։ Ինք իր կրթական գործունեության շրջանին հասցուցած էր հարյուրավոր գրիչներ, գրագիրներ և գրչության արվեստի մեջ անմրցելի վարպետներ։

Գրչության արվեստի մեջ նշանավոր կդառնա Գրիգոր Խլաթեցի Մերենցը (1350—1425), որ «Տիւ և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... և յիսուն ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»[13]։

Գրիգոր Խլաթեցի է նաև գրող. «Բազում երգս զանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան»։ Գրած է բազմաթիվ թուղթեր՝ ուղղված զանազան մարդոց։ Անոնցմե կմնա «Յիշատակարան աղէտից», որ ուսանավորով հորինված պատմություն մըն է. Հայաստանի 1386—1422 տարիներուն պատահած թշվառություններուն նկարագրականը, որոնց ինք ականատես եղած է։ «Զներից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և զվկայիցն, որ կոչի Յայսմաւուրց՝ սակաւարան և անվթար շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էած»։ Իր կազմած «Յայսմաւուրք»-ի մեջ ան ավելցուցած է փրեն ժամանակակից նահատակներու պատմությունը։ Ինքն ալ 1425-ին շարչարվելով նահատակված է Բզնունյաց դավառի Ցիպնա վանքին մեջ, քուրդ ցեղապետի մը ձեռքով։

Գրչության արվեստի կողքին զարգացավ մանրանկարչությունն ալ։ ԺԴ դարու առաջին կեսի նշանավոր մանրանկարիչներն են Թորոս Տարոնեցին (Մշեցի) և Ավագը։ Երկուքն ալ Գլաձորի սաներ են։ Իսկ նույն շրջանին Կիլիկիո նշանավոր նկարիչներն էին Թորոս Ռոսլին և Սարգիս Պիծակ։

Գույնզգույն, թանկարժեք ներկերով անոնք կնկարեին ծաղկաձև, թռչնաձև, ձկնաձև և կենդանաձև դիպաստաներ։ Ոգևորելի նկարներով կզարդարեին ամբողջ էջերն ու լուսանցքները։ Մանրանկարներու նյութը դիպաստվորապես բուսական և կենդանական աշխարհն ու երկրաչափական զարդերը կհանդիսանային, ինչպես նաև սուրբի պատկերներն ու կրոնական տեսարանները։

ԺԴ դարու երկրորդ կեսին և ԺԵ դարուն զգալիորեն կնվազի գրչության արվեստը, իր բովանդակությամբ արմատական փոփոխություններ կկրե, կրոնական հոգևոր շարժառիթները (motif) իրենց տեղը աստիճանաբար կզիջին աշխարհիկ կյանքի շարժառիթներուն։ Նկարներու մեջ ավելի հաճախ տեղ կգրավեն աշխարհականներու, իշխաններու, ռամիկներու, նկարիչներու, բժիշկներու, արհեստավորներու, վարդապետներու, ձկնորսներու, հովիվներու և այլ աշխատանքային տեսարաններ ցուցանշող պատկերներ։

Տաթևացիի ձեռնարկներու արդյունավորության մեջ երկու գլխավոր կետեր նկատողության արժանի են։ Առաջինը՝ իր ուսումնական ծրագիրը, որ հետևյալն էր. ա) ներքին ուսումնք. բ) արտաքին ուսումնք. գ) քարոզի և բեմբասացության վարժություն. դ) ընտիր գրչագրության և առատ ընդօրինակության զարկ տալ. ե) կուսակրոն և ամուսնացյալ եկեղեցականներուն տալ՝ հավասարապես եկեղեցվո պաշտոնեութենն պահանջված ուսումը։ Իսկ երկրորդը՝ պայքարի մարդը, ավանդապահ հայոց գիտության, հարատևող և նվիրյալ եկեղեցական։ Իր քեռորդին Առաքել Սյունեցի կգրե. «Գրիգորիոս՝ վաճառական անգին մարգարտին, որ զամենայն անցաւոր և զանոտի՝ դիւրագին վաճառեաց և առ ոչինչ համարեցաւ, և միայն զմարգարիտն Քրիստոս առ ինքն ընկալաւ»։

Տաթևացին վանական է, գործիչ, նկարիչ, բեմբասաց, փիլիսոփա, վերլուծող, բանաստեղծ, հեղինակ և լեզվագետ։

Տաթևացիի հետ դպրոցի վերելքի համար աշխատեցան Հովհաննես, Գրիգոր, Առաքել, Սարգիս, Բարսեղ, Կիրիոն, Մերուն, Կիրակոս, Հովսեփ, Հակոբ, Վարդան, Գևորգ, Մատթեոս և այլ հեղինակավոր դեմքեր, որոնք նախկին սաներն էին Տաթևի բարձր դպրոցին, որոնք հետագային դարձան պաշտոնակիցները մեծ վարդապետին։

Ասոնք հասցուցին գիտակից և ուսյալ վարդապետներու փաղանգ մը, որոնք գացին տարածելու Ավետարանի լույսն ու նախնյաց ոգին հայ ժողովուրդի մեջ։

Բարեկարգիչ հոգևորականը.— Տաթևացին ոչ միայն գրչով ու քարոզությունով մեծ ծառայություններ մատուցած է Հայաստանյայց Եկեղեցվույն, անոր դավանությունն ու ավանդությունները պաշտպանելով, այլ նաև բարեկարգություններ հիմնուած է։ Վար-

12 Հ. Անասյան, «Հայոց անձնանունների բառարան», հատ. Ա, էջ 602։

13 Թովմա Մեծոփեցի. «Պատմութիւն», էջ 35։

դապետական մասնավոր իշխանության և ժայրագույն վարդապետության կանոնը Գրիգոր Տաթևացին կպարտի Հայաստանյայց Եկեղեցին։ Ահա թե ինչ դիտակցություն ունեցած է ան Հայ Եկեղեցվո բեմի մասին։ Սյունյաց դպրոցին մեջ արդեն շատ դժվար էր բեմ դրավել, երկար աշխատություն և փորձեր պետք էին քարոզելու իրավունք ձեռք բերելու համար։ Տաթևացի Սյունյաց դպրոցի այս ավանդությունները կարգի կանոնի վերածեց և ավանդեց մեր Եկեղեցիին։ Իր այս արժանիքը բավ է Գրիգոր Տաթևացին տալու համար մեծ վարդապետներու շարքին մեջ կարևոր տեղ մը։

Սովորություն է վարդապետական վկայագրաններու մեջ հիշել իրարմե գավազան ստացողներու շարքը։ Վերջին դարերու վկայագրաններ միշտ նախ Գրիգոր Տաթևացիի անունը կգրեին, և անոր աշակերտներեն զանազան ճյուղեր կկազմվեին։ «Նախ՝ Գրիգոր Տաթևացին, նորին աշակերտ Դանիէլ, նորին՝ Յովհաննէս Համշէնցին. նորին՝ Յորդան Գրիգոր Արճիշեցին. նորին՝ Ներսէս, որ Մատաղ ասի. նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրդոտ Յովհաննես Ոստանցին. նորին՝ Բարսեղ Գաւառցին... սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւայ, զորոյ մակ անուն Բեղլու ասեն, զի մեծ էր բեղն։ Սորին աշակերտ Մելքիսէթ Երևանցի, ի գեղջէն՝ որում անուն էր Վժան»[14]։

Անոնց հաջորդող բոլոր վարդապետները Գրիգոր Տաթևացիի հարազատ ու բարոյական սերունդը կնկատվին։

Տաթևացին իր բազմազբաղ վիճակին մեջ ատիթ ունեցավ վարչական գործերու ալ միջամտելու։ Աղթամարի կաթողիկոսական վիճակի մեջ, ժե դարուն ճիշտ սկիզբները, Տաթևացի իր աշակերտներով, որոնց թիվը 90-ի հասած էր, երբ Մեծոփ կգտնվեր, դիմում եղավ իրեն, որ առաջը առնե պատահարներուն և վերջ մը տա երկպառակությանց։ Տաթևացի Մեծոփա վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի հետ ժողով գումարեց և Աղթամարի կաթողիկոսության դերը վերջացած նկատեց։ Թեմականներու փափագն ալ այս էր։ Հակոբ կաթողիկոսին տեղեկագրվեցավ այս կարգադրությունը, որ իր հավանությունը տվավ ու կոնդակով մը վավերացուց, բայց այս բոլոր ջանքերը ի դերև եկան։

Մեծ ուսուցիչը.— Գրիգոր Տաթևացի դրեթե իր ամբողջ կյանքը ուսանելով և ուսուցանելով անցուց։ Քարոզելու և վարդապետելու իշխանությունը Որոտնեցիեն առնելով, անոր մահեն ետք, 1386-ին, առաջնորդ կարգվեցավ Տաթևի վանքին։ Նախքան պաշտոնը ստանձնելը, երկու տարի (1388—1390), Ապրակունիսի վարժարանին մեջ պաշտոնավարեց, ապա անցավ Տաթև (1390—1408), ուր երկար տարիներ մնաց առաջնորդության պաշտոնին մեջ, ունեցավ բազմաթիվ աշակերտներ, որոնց մեջ կհիշվին տասնհինգ ավելի անվանի վարդապետներ։ Ասոնց մեջ նշանավոր է Մխիթար Տաթևացի, որ հիշատակարաններու մեջ մեծ rաբունապետ կոչումով կհիշվի հաճախ (1406—1426)։ Տասներկու ուրիշ աշակերտներ ալ Մեծոփեն կուգան, որոնց մեջ Թովմա՝ Լենկիմուրի արշավանքներուն անվանի պատմիչը և վաթսուն այլ քահանաներ։

1406-ին, երբ վասպուրականցիները Տաթև կուգան ու կլսեն Տաթևացին, կհիանան անոր առատահոս և պերճախոս դասախոսությանց վրա։ Մեծոփեցին կգրե. «ապշեցոյց զամենեսին առաւել քան զիմաստունս հելլենացւոցն»[15]։

1407-ին հիշված է որպես տեղապահ։ «Աթոռոյս Սիւնեաց»։

1408-ին հսկեր «յաթոռ վարդապետական և աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս»։

Բռնակալ Յուսուֆի ժամանակ, երբ վերջինս մեծ սուրբին բարեխոսությունը նկատի չունենար, «ի հալածմանէ անօրինաց», առնելով իր աշակերտները մոտ ութսուն հոգի, պահ մը կխորհի Երուսաղեմ երթալ, առանձնանալով այս աշխարհեն և հոն «դաս ասել», բայց չկարենալով իրագործել իր ծրագիրը, կտեղափոխվի Արճեշ՝ Մեծոփա վանքը, 1409-ին, ուր Հովհաննես Մեծոփեցին փութաց Տաթևացիի ընդունելության, «և դնացեալ դէմ ընդ առաջ հոգևոր ծնողին իւրոյ, և բերեալ յանապատն իւր հանգոյց զնա»։ Այդ տարին Տիրուհվո Սուրբ Կուսին Տաճարի շինությունը ավարտելով, նավակատիքի հանդիսությանց իր ալ մասնակցությունը կբերե։ Իր Քարոզագրքին մեջ Հայաստանը նվաճողներուն կնմանցնե փուշերով ամրացուցած ցանկապատի մը, որ կպատսպարե ու կպաշտպանե այգին, այսինքն՝ Քրիստոնեական Եկեղեցին։ Կքարոզե հնազանդիլ տիրողներուն, որովհետև «այժմ քրիստոնեայք ի ներքոյ բռնաւոր իշխանաց խաղաղութեամբ ունին զիւրեանց եկեղեցականութիւնն»[16]։

Տարի մը Մեծոփա վանքի մեջ իր աշակերտներուն կուսուցանե «զհամբերութիւն

---

14 Առաքել Դաւրիժեցի. «Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 391։

15 Թովմա Մեծոփեցի. «Պատմութիւն», էջ 51։

16 Գրիգոր Տաթևացի. «Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր», Կոստանդնուպոլիս, 1741, էջ 452։

քաջ նահատակին Ցոփայ, և զդիրս գրչութեան Արիստակիսի և Մեծին Գէորգայ, և զՍուրբ Աւետարանն Յովհաննու։

Հռչակավոր վարդապետի դասախոսությունները այնքան անվանի էին, որ Գրիգոր Խլաթեցի չնայելով իր անցած տարիքին, մոտ վաթսունամյա հասակին, Արծկեի վանքեն գալով մինչև Մեծոփ, ունկնդիր կըլլար գիտնական վարդապետի դասախոսություններուն։

Մեծոփեցին շատ հետաքրքրական տեղեկություն մը կուտա, թե իր աշակերտները (Տաթևի), «զգաղտագողի կառնեն զինքս Մեծոփա վանքեն ու կփախչնեն Արարատյան գավառ, «առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգևոր հարազատ իւր։ Եւ մեք ամենեքին վարդապետք և աշակերտք գնացարառ նաս, նույնիսկ վանահայրը՝ Հովհաննես՝ բայց չեն հաշողիր վերադարձնել։ Խոսքը Մեծոփեցիին տանք.

«Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ՝ Յառաջագոյն քան զտոն Զատկին։ Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի։ Եւ մեք հլեալ զնացաք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք և գրոց աշակերտաւք, և հասաք նմա յերկիրն Այրարատեան, լայով, ողբով, արտասուօք, ազիողորմ կսկծանօք, և ոչ կարացաք դարձուցանել զնա։ Եւ անդ նտ մեզ հրաման վարդապետութեանն»[17]։

Բազմի կենտրոնական գրադարանի հայկական բաժնի թիվ 1 ձեռագրի միջին մասը, որուն բովանդակությունը Գրիգոր Տաթևացիի Քարոզագիրքն է, քարոզներէն մեկուն վերջավորության գրիչը՝ Մկրտիչ, հետևյալ անթվական հիշատակությունը թողած է[18]. «Ի մեհեկի ժե զմեծ բարբունապետն (խոսքը, անշուշտ, Տաթևացիի մասին է), ի սուրբ ուխտս Մեծոփու կու տանէին ի Տաթև, և մեծ տրտմութիւնք եհաս մեծի և փոքու, այլ ողորմութիւնն Աստուծոյ եհաս յոգնութիւն, Յոհաննէս վարդապետն երեր զրիրդաւագն և քրիստոնեայ տանուտերքն ամենայն և արգելեց, և եղն ուրախութիւն մեծ վարդապետաց և աշակերտաց ամենեցուն։ Յիշման արժանի առնէք զսուտանուս Մկրտիչ»[19]։ Հայտնի չէ, թե Տաթևացին ո՞րքան կմնա Սաղմոսավանքին մեջ։ Իր աշակերտներն ու քեռորդին՝ Առաքել Սյունեցին կուգան ու զինք կառնին Տաթև, ուր երկար չապրիր. դեպքեն 36 օր հետո հիվանդանալով կվախճանի, 1409 դեկտեմբեր 27-ին, անմխիթար սուգ ձգելով Հայ Ազգին վրա։ Ըստ ոմանց հայտնած տեղեկությանց՝ ան վախճանած է Հայոց ՊԵԹ թվին, այսինքն 1410-ին։ Հակասություն չկա, տարին հունվար 1-են սկսելու պարագային 1409-ին կհանդիպի, իսկ ըստ հայկական տոմարի օգոստոսի 11-են սկսելու պարագային՝ 1410-ին կզուգադիպի։

Մատթեոս վարդապետ, Գրիգոր Տաթևացիի մահվան և «Վրաստանի կոտորածի և գերեվարության ատեն, կարդացած է դամբանական մը, որ հետևյալ խորագիրը ունի. «Նորին Մատթէոսի վարդապետի ներբողեան ողբերգաբար, ոգեալ ի թաղումն երջանիկ բարունապետին Գրիգորի։ Ընդ նմին յիշատակեալ զողբս յալեաց կոտորածին, որ ի Վրացտուն՝ ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրց ի մի դիպեցաւ»[20]։

Ստորև քաղվածաբար կմեջբերենք հատված մը այդ դամբանականեն. «Եւ արդ, ուստի ներբողեցից զքեզ ճառս ողբերգականս,— ավարտում է նա դիմելով իր հանգուցյալ ուսուցչին,— քանզի թէ ընթանամ ի հրապարակս եկեղեցւոյն՝ ոչ գտանեմ զքեզ. և ի ժողովս բարի արանց, ուր հանապազ նստէիր՝ նոյնպէս և անդ ոչ երևիս. իսկ թէ ի գահոյս թագաւորական շտապեցայց, ուր հանապազ կանխէիր՝ և անդ ես խնդրեն զքեզ. իսկ թէ ի բնակութիւն ձեր ընթացայց՝ առ ընտանիս և սիրելիսն՝ և նոքա թերես ողբան զքեզ. իսկ թէ զմայրդ քո հարցանեմ՝ ի յողբալոյն ոչ կարէ պատասխանել ինձ. և թէ ի գրկեցութեանն քննեցից զքեզ՝ և նոքա յոգւոց հանեն. իսկ թէ յուսումնակիցսն քո ժպրհիմ՝ և նոքա ի սուգ են անհնարին վասն քոյին տեսութեան զրկելոյն... իսկ թէ զդասս գրոց աշակերտացն հարցանեմ՝ նոքա իբր զմոլի եղեալ են անտերունչ շրջելով ի մացառուտ վայրս փշոց, որք աւելի ինչ ոչ գտանեն, բայց միայն զխոցուածս հոգոց։ Վասն որոյ ի միտ ածեալ ոչ ուրէք երեիք ասա՝ յայսմ աշխարհիս, բայց միայն առ տենչալին ձեր Քրիստոս» (էջ 271բ—272ա)։

Գովասան Մեսրոպ վարդապետ այսպես կյափաբանեն.

«Զքան ոգեշահ իբրև արձան մեզ թողեր,
Կրկին տասսամբ և քառ թըւով կազմեցեր,
Ոսկի պսակ գլխոյ տոհմին մեր եդեր»։

Ուրեմն Հովհան Որոտնեցի վարդապետի մահեն վերջ գրած է 24 գրքեր։ Միայն «Մեկնութիւն կամ լուծմունք գրոց ինչ Արիստոտելիս»-ն 1383-ին գրած էր։

Գիտնական վարդապետը, որքան հսկա իր իմացականությամբ և բազմարդյուն իր գրական գործունեությամբ, այնքան համեստ է իր նկարագրով։ Որոտան կամ Գլաձոր գտնըվող ձեռագրի մը մեջ ինքն հետևյալը կգրե.

17 Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատությունը, էջ 101։

18 Հավանաբար 1409-ին գրված։

19 Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատությունը, էջ 94։

20 Անդ, էջ 119։

«Արդ, ես Թմբրամածն Գրիգոր, վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, և տրուպս բանին ի սպասաւորաց, սիրով միայն զանուն ստացայ, չանին ի գործն ոչ մխեցայ, յերես անկեալ աղաչեմ զպատահաւղսդ այսմ գծից յիշել բարի յիշմամբ զմեզ առաջի Քրիստոսի, զի որպէս և որչափ յիշէքդ, բազմապատիկ և ձեզ յիշեսցի. ամէն»։

Ուրիշ մը սակայն իր մասին կգրե. «Ես ոտս երջանիկ և երիցս երանեալ բազմերախտ հօրս մեր և երկրորդ արփիաւորի Հայկազեան սեռի Գրիգոր քաջ հռետորի և աստուածաբան վարդապետի, զոր այս խառն և խաւար ժամանակիս իբրև զարեգակն ի միջօրէի զայծառացեալ լուսաւորէ զնկեղեցի, ոչ ունելով հանգիստ մտաց և ոչ մարմնոյ. քանզի հանէ զգիշերն ի բուն[21] յազօթս Աստուծոյ ի յարտասուս բազմահոս. և լնու զկարօտութիւն բազմութեան եղբարցս, որ առ ոտս սորա են ժողովեալ, այլ և զբոլորս ազգիս, միշտ գնալով ի մեջ այլազգեաց՝ մեծամեծաց և փոքունց, զի ոչ գոյ իշխան և առաջնորդ բաց ի սմանէ»։

Տաճարի երկու դռներեն մեկուն առջև թաղած են Գրիգոր Տաթևացին և ավելի ուշ այդ գերեզմանին վրա տաճարաձև, սպիտակ քարերով, շինած՝ դամբարանը։ Հատակը ծածկված է խոշոր սալաքարերով, իսկ ներսի մասին բոլոր որմերը նկարազարդելու համար ծեփված է կրաշաղախով։

Առաքել Սյունեցի սրահի կամարներուն վրա արձանագրեր է. «Կամաւն Աստուծոյ ես Առաքել Սիւնեաց եպիսկ. կանգնեցի [զխաչս ի փրկութիւն] հոգո(յ) մեծ հռետորին և բարունապետին Գրիգորի, թվ. ՊՈԹ» (1410), իսկ 1787-ին Տաթևի առաջնորդներեն Տեր Հովակիմ, «Ի Ողուկ գաւառէ, յԱնգեղակոթ գեղջէ», մեծ վարդապետի գերեզմանին վրա, իրեն վայել մաքուր տաշած քարով, դամբարան մի շինել կուտա. «Սա չորս միմաքարս կանգնել ետ ի սուրբ աթոռս, զերկուսն ի մէջ տաճարին, առընթեր երկուց սեանց, զմին ի վերայ դամբարանի եօթնալոյս վարդապետի Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, զարդարուն խաչիւք քանդակեալ ի քարանց, և հոյսկապ յօրինուածով կոփածոյ քարամբք գեղեցկատես մատուռ իմն շինեալ, և զմիւսն ի մէջ ժամատանն»[22], վերջին երկրաշարժը սրահին հետ փլատակ դարձուցած է նաև մեծ վարդապետին դամբարանին վրա կառուցված սիրուն մատուռը։

Ու մինչև այսօր ուխտավորներ կերթան, կայցելեն եռամեծ վարդապետին մատուռ շիրիմը. մոմ կվառեն ու խունկ կծխեն, անոր սրբազան նշխարքը պարունակող ու մասունքը պարփակող նվիրական շիրիմին։ Ուխտավորներ երկյուղածորեն կծնրադրեն ու կհամբուրեն սուրբ քարը։ Ու երբ ասոնք կձգեն ու կհեռանան դամբարանեն, եռամեծ վարդապետի հոգին, պլպլացող մոմին նշույլին ներքև ու անուշահոտ խունկին վերածխության մեջ, կհրճվի անասելի բերկրանքով մը։

21 Ընդօրինակողը շփոթ գրած է՝ «զբոյին ի տունս»։

22 Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն տանն Սիսական», Բ հատ., էջ 285—286։

(Շարունակելի)

Դ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

«ՆՈՐԱՍՏԵՂԾԵԱԼ», «ԱՐԱՐՉԱԿԱՆ», ՀԻՇԵՍՑՈՒՔ Ի ԴԻՇԵՐԻ» ԵՎ «ՁԱՐԹԻ՛Ք, ՓԱՌՔ ԻՄ»

Շնորհալու չափածոյի զարդերն են կազմում մի քանի երգեր, որոնք չնայած շարականների կանոնների մեջ չեն մտել, բայց ժամակարգության մեջ ընդունված են և երգվում են եկեղեցում։ Դրանցից են «Այսօր անճառ»-ը, «Նորոգող տիեզերաց»-ը, «Աստուած անեղ»-ը, «Նայեաց սիրով»-ը, «Ի քէն հայցեմք»-ը, «Արարչական»-ն ու «Նորաստեղծեալ»-ը, «Ծիշեսցուք»-ը, «Ձարթիք, փառք իմ»-ը և ուրիշներ։

«Արարչական»-ը և «Նորաստեղծեալ»-ը յոթնօրյա արարչության մասին պատմող երգերի ամբողջություն են կազմում։

«Նորաստեղծեալ»-ը մի ինքնուրույն ուրախ, հաղթական երգ է, «Երգ առաջին աւուր միաշաբաթին և խորհուրդ արարչութեանն և ի Յարութեանն Քրիստոսի» վերնագրով։

«Նորաստեղծեալ»-ն երգվում է կիրակի օրերին, առավոտյան ժամերգության ժամանակ որպես վերջաբան։ Այս սքանչելի երգը Շնորհալին հորինել է «ի խորհուրդ արարչութեան առաջին աւուրն, ի պատիւ Քրիստոսի հարութեան։ «Նորաստեղծեալ»-ը բաղկացած է 6 տնից, որոնց սկզբնատառերը հոդում են ՆՆԵՍԷՍ։ Իսկ շաբաթվա մնացած լուր օրերի համար գրված է «Արարչական» էպիկական սքանչելի պոեմը։ «Արարչական»-ն ու «Նորաստեղծեալ»-ը, իրենց վսեմ բովանդակությամբ և բարձր արվեստով, մեկը մյուսին չի զիջում։ Այս երկու պոեմները կազմում են մի գեղեցիկ ներդաշնակություն՝ յոթնօրյա արարչության և շաբաթվա օրերի տոների խորհրդով ու դրա համար էլ երկուսը միասին կոչվում են Արարչական։

«Նորաստեղծեալ»-ի մեջ երգվում է առաջին օրվա՝ «Միաշաբաթ»-ի արարչագործության մասին, երբ ստեղծվել են երկինքը, երկիրը և լույսը։ Այս երգի բովանդակության մեջ Շնորհալին դրել է նաև հարության խորհուրդը, որ միաշաբաթի (կիրակի) առավոտյան լույս ծագեցավ աշխարհին. դա Քրիստոսն է, որը կոչվում է «Լոյս ի լուսոյ», «Անճառելի լոյս»։ Չնայած տիեզերքի չորս ներհակ տարրերը՝ հողը, ջուրը, կրակը, օդը, ըստ իրենց բնության, հակառակ են նաև երկնային անմարմին զորքերի հետ, բայց դրանք իրար հետ միաբանվում, կազմում են մի ներդաշնակություն, անպատում երրորդությունը հավիտյանս հավիտենից փառաբանելու համար։ Այսպես էլ սկսվում է երգը.

«Նորաստեղծեալ բանն յանէից՝
Ի սկզբանէ զերկինս երկնից.
Եւ զերկնային զօրս անմարմնոց՝
Իմանալեացն զուարթնոց.
Եւ զդալի տարերց քառից
Հակառակաց միաբանից.
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի»։

Երգի հայորդ մասի մեջ բանաստեղծը հրմտորեն կարողացել է միացնել աստվածաբանական միտքը շաբաթվա առաջին օրվա արարչագործության հետ։ Հայրը, Որդին և Հոգին կազմում են՝

«Երեքսրբեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ աստուածութիւն.
Լոյսն որ անեղ արարչական
Ասաց լինել լոյսն եզական.
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին։

Բանաստեղծության երրորդ տնում բացահայտվում է օրվա խորին խորհուրդը. իմանալի լույսը՝ Քրիստոսը, որը սովորական, մարմնական աչքերի համար անտեսանելի է, սակայն տեսանելի է մաքուր հոգիների համար։ Կիրակի օրն է ծագել մարդկության համար արդեն տեսանելի ու իմանալի հարության լույսի ճառագայթը.

«Բարունօրէն բացատրեացուք,
Զծածկեալ խորհուրդն ծանիցուք.
Զի լոյսն անտես իմանալի,
Մաքուր հոգւոց տեսանելի.
Ի սոյն ծագեաց միաշաբաթ,
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.
Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն,
Տուք օրհնութիւն յարուցելոյն...»։

Ըստ երգի՝ իմանալի լույս-փրկիչը Քրիստոս միաժամանակ ամբողջությամբ սեր է։ Նա սիրում է մարդկությանը և դրա համար էլ սիրով է խոնարհվում, և աշխարհի փրկության համար խաչ է բարձրանում, իջնում է մահվան գերեզմանը. բայց այսօր Նա հարություն է առել և փառաբանվում է հրեշտակների կողմից.

«Սէրդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար.
Նովին մարմնովն խաչեցար,
Ի գերեզման մահու եդար.
Այսօր յարեար աստուածաբար,
Ի հրեշտակաց քարոզեցար»։

Շնորհալին ամեն տան վերջում կոչ է անում բոլոր նրանց, որոնք փրկվել են հարության շնորհիվ, թե՝

«Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն՝
Տուք օրհնութիւն յարուցելոյն»։

Այնուհետև երգի նախավերջին և վերջին տներում երգվում է Քրիստոսի հարության մասին։ Բանաստեղծը կոչ է անում Սիոնի որդիներին, որ քնից արթնանան, լուսեղեն Հարսին՝ Եկեղեցուն ավետիք տան, թե քո Փեսան հարություն է առել, ահա գալիս է, որ քեզ փառքով պսակե, զարդարվիր, պճնվիր և էլ Փեսային ընդառաջ, արժանավայել նոր երգերով.

«Սիոնի որդիք զարթիք,
Հարսին լուսոյ տուք աւետիք.
Եթէ փեսայն քո յարուցեալ,
Ճաղթեաց մահու իշխանութեամբ.
Գայ պսակէ զքեզ փառօք,
Եւ ընդ առաջ պճնեալ զարդուք.
Երգեա երգ նոր յարուցելոյն,
Ննջեցելոց կենաց պտղոյն»։

Այս հանրածանոթ ու շատ սիրված երգի մեջ աչքի են ընկնում զգացմունքների ու մտքի ներդաշնակությունը, մեղմ ու գեղեցիկ. պարզ ու սահուն ոճը, երգի երաժշտությունն ու հատկապես տաղաչափությունը։ Այս երգի արվեստը բնորոշ է ընդհանրապես։ Չկան այն միապաղաղ, տաղտկալի կրկնություններն ու միօրինակությունները, ինչպես որոշ կարգի շարականներում։ Շնորհալին վարպետորեն կարողացել է համադրել արարչագործության, Քրիստոսի մարդեղության ու զավանաբանական մտքերը և այն դրսևորել է գեղարվեստորեն պարզ, ջերմ թափով։

«Նորաստեղծեալ»-ը նշանավոր է նաև նրանով, որ նրա ամեն մի տունն ունի իր հատուկ հանգը։

«Նորաստեղծեալ»-ը ներսես Շնորհալու երգերի պսակն է, ամենաջերմ երգը՝ ամենաբարձր արվեստով գրված։

Շաբաթվա մնացած 6 օրերին ընծայված է «Արարչական»-ը, որը ոչ պակաս արժեքավոր մի պոեմ է, բաղկացած 6 երգից, ամեն երգը՝ 6 տնից, այբուբենի կարգով գրված։

Պոեմի առաջին երգը նվիրված է երկուշաբթի օրվա արարչագործությանը։ Այս օրը «արար Աստուած զբաժանումն ջուրց, կէս մի թողեալ ի վերայ հողոյ և կէս մի վերացուցեալ ի յերկինս և զհաստատութիւն եդ ի միջի իրրև խտրոց երկուց ջրոցս»։ Այդ օրն են բաժանվել հողեղենների և հրեղենների աշխարհները. դրա համար էլ հենց առաջին երգի առաջին տան մեջ երգվում է.

«...Զջուրս ի ջուրցն բաժանեաց,
Հաստատութեամբ պարունակեաց.
Որով զաշխարհս հողեղինաց
Անչրպետեաց ի հրեղինացս»։

Այս երգի հետագա հինգ տները նվիրված են երկուշաբթի օրը արարչագործված «երկնային զօրացն և հրեշտակապետաց»։

«Գերագոյն իշխանութիւնք
Եւ անփոփոխ միշտ տէրութիւնք.
Անյաղթելի սուրբ զօրութիւնք,
Ի յԱրարչին փառատրութիւն»։

Երգի վերջում բանաստեղծը դիմում է բազմաչյա քերովբեներին և երկնային անմարմին դասերին թե՝

«...Աղաչեցէք զՏէրն ողորմած՝
Անտես չառնել զդործս ձեռաց.
Ընդ նոսին, որդիք լուսոյ,
Տուք օրհնութիւն երբեակ լուսոյնս»։

Երեքշաբթի օրվան ընծայված երգի մեջ գովերգվում են արարչագործության այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել այդ օրը՝ ըստ Հին Կտակարանի պատմության։ Երեքշաբթի օրը շուրը ցամաքում է երկրի վրա, բաժանվում են ցամաքն ու ծովը, աճում են տունկերն ու բույսերը.

«Յերրորդ աւուր զչուրսն զատոյց,
Զրոյսս և զտունկս բղխեցոյց»։

Երրորդ օրվա կամ Գ դարի հետ Շնորհալին կապում է առանձնապես ջրհեղեղը։ Ի դեպ՝ պետք է նշել, որ Ներսես Շնորհալին սիրում է ստեղծագործության ամեն «մի օրը» կապել համապատասխան որևէ «դարի» դեպքի կամ տեղի ունեցած որևէ իրողության հետ՝ վերցրած Հին կամ Նոր Կտակարանից։

Ուրեմն այս երգը ակնարկում է ջրհեղեղը և նոյը.

«...Իսկ ի չերրորդ գարուն դարձեալ
Զչուրցն հեղեղ ցամաքեցոյց.
Զնոյ տապանաւն իւր ապրեցոյց,
Զկենդանեաց սեռս աճեցոյց...»։

Երեքշաբթի օրն էլ նվիրված է մարգարեներին, իսկ մարգարեներից ամենամեծը համարվում է Հովհաննես Մկրտիչը, ուստի՝ այս օրվա երգը Շնորհալին կապում է նաև այդ մեծ մարգարեի հետ, որը տակավին իր մոր արգանդից երկրպագել է Քրիստոսին.

«Ժառանգին հոր սպասաւոր
Եւ յարդանդէ երկրպագող.
Կարապետ և Մկրտիչ,
Այնմ որ մեզաց մերոց քաւիչ...»։

Այս երգի մյուս տան մեջ Շնորհալին խոսում է Հովհաննես Կարապետի պաշտոնի մասին.

«...Առաքեցեր յառաջընթաց
Սուրբ զՅովհաննէս քարոզ կենաց.
Սորին հայցմամբն ամենակալ
Զպաղատանս մեր ընկալ...»։

Պոեմի չորրորդ երգը վերաբերում է չորեքշաբթի օրվա արարչագործությանը, «Դ դար»-ին և Աստվածածնի ավետյացը։ Ըստ շարականի, չորրորդ օրը ստեղծվել են լուսատուները, այն է՝ արևը, լուսինը, մոլորակները, աստղերը, սրանք կարգվել են երկնքում՝ լույս տալու և ժամանակը որոշելու համար։ Գրվածքի այս մասն առանձնապես գեղեցիկ է, ուր Շնորհալին խոսում է տիեզերական մարմինների և բնության երևույթների մասին.

«Խաւարն անգոյ և սկզբնածին
Հալածեցաւ յօրն առաջին.
Լոյսն այն պայծառ յօր չորրորդին
Յարեգական նիւթ հաւաքեալ.
Լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ
Եւ աստեղաց պարս յօրինեալ։
Որով օրհնի ստեղծողն էից
Ի բանաւոր պաշտօնէից...»։

Ըստ Հին Կտակարանի՝ «Դ դարս»-ում էր, որ հրեշտակն ավետեց Աբրահամին՝ Իսահակի ծննդի մասին, և դարձյալ Մարիամ Կույսին տրված ավետիքը եղավ նույնպես «ի չորրորդ օրս»։ Ահա այս մասին համառոտ այսպես է երգում բանաստեղծը.

«Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ՝
Զորրորդ գարուն Իսահակաւ.
Ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն՝
Ետ զաւետիսն կուսական.
Թէ լոյսն որ ոչ բովանդակի,
Ի քէն մարմնով պարունակի...»։

Հինգշաբթի օրվա երգը վերաբերում է հինգերորդ օրվա արարչագործությանը և կամ «Ե դար»-ին և Քրիստոսի առաքյալներին։ Հինգերորդ օրը ստեղծվել են ծովի ձկներն ու երկնի թռչունները։ «Ե դարս»-ում է, որ Մովսեսն առաջնորդում է իսրայելացիներին դեպի Ավետյաց երկիրը. իսրայելացիները այդ օրը փախչում են Եգիպտոսից, ճեղքում-անցնում են Կարմիր ծովը. իսրայելացիներին հետևող փարավոնը իր կառքով ու զորքերով խեղդվում է Կարմիր ծովում։ Այս բոլոր դեպքերը նույնպես խտացրած և շատ հակիրճ ակնարկում է Շնորհալին երգի հետևյալ տողերում.

«Ճառագայթեալ բանն ի Հօրէ,
Յօր հինգերորդն հրամայէ,
Բղխել ի ջրոց սեռս կայտառաց
Եւ թռչուրս օդականաց.
Իսկ ի գարուն հինգ մկրտին
Յամպն և ի ծովն Իսրայէլն հին...»։

Եվ որովհետև հինգշաբթին առաքյալներին նվիրված օր է, ուստի երգի մեջ Շնորհալին առաքյալներին էլ է կապել այս օրվա հետ.

«Մաքրապէս օրինակի
Առաքելոցն Քրիստոսի,
Որ ի ծովէն Տիբերական
Ի յերկնային կոչեցան,
Անցին ընդ ծով աշխարհական
Եւ ի հոգին մկրտեցան»

Այս երգի մեջ աչքի է ընկնում ծովը, որի հետ վերջին հաշվով կապվում են «ե դար»-ի բոլոր դեպքերը. ծովում գոյացան ձկները, իսրայելացիները անցան Կարմիր ծովի միջով, փարավոնը խեղդվեց ծովում, Տիբերական ծովից առաքյալները անցան աշխարհական կյանքի ծովը՝ մինչև մկրտվում են Ս. Հոգով։

Պոեմի վեցերորդ երգը վերաբերում է ուրբաթ օրվա ընթացքում ստեղծվածին, «Ք դար»-ին և Քրիստոսի խաչելությանը։ Ուրբաթ օրը Արարիչը ստեղծել է Ադամին և Եվային ըստ իր պատկերի և տեղավորել է դրախտում, Բայց նրանք ճաշակեցին արգելված պտուղը, օրինազանց եղան, դրա համար էլ արտաքսվեցին դրախտից և դատապարտվեցին տանջանքների ու մահվան։

Ուրբաթ օրն է խաչվել Քրիստոսը. այս դեպքն է հանդիսացել վեցերորդ երգի գլխավոր նյութը.

«Զհանդուրժեալ բնութեամբ բարւոյն
Ունել միայն զանճառ բարին.
Այլ ստեղծեալ զմարդ իւր պատկերին
Ի վեցերորդ առաւօտին.
Զորս ի դրախտին եդ վայելել,
Բայց ի պտղոյն մահու արգել»։

Այնուհետև բանաստեղծը երգում է Քրիստոսի խաչելությունը.

«Հօր հաճութեամբ ի մահ խաչին
Եկն կամաւ ի յուրբաթին.
Գառն զենաւ ի հին Զատկին
Փոխան զառանցն օրինակին...»։

Ապա երգը ամբողջովին խաչելության ու նրա հետ կապված դեպքերի մասին է խոսում, գլխավորապես փառաբանվում է խաչվող Փրկիչը, որ նա մարդասեր է, սերովբեների համար սոսկալի, քերովբեների համար ահավոր, որ նա վեհագույնն է «բնութեանց էիցս»։ Բայց «անպատում խոնարհութեամբ» խաչվում է մարդկանց մեղքերի համար։

Պոեմի վերջին երգը նվիրված է շաբաթվա յոթերորդ օրվան։ Շաբաթ օրը վերջացավ արարչագործությունը և եղավ հանգիստ։ Եվ վերջապես շաբաթ օրը պատկանում է ամենայն սրբոց և հատկապես մարտիրոսաց։ Հենց երգի առաջին տունը բնորոշում է ամբողջ երգը.

«Տէրն յետ ստեղծման արարածոց
Հանգեաւ յեօթն օրն ի գործոց.
Այն որ հանգիստ աշխատելոց
Եւ կամքն գործ է եղելոց.
Ուստի և մեզ յոյս հաստատուն
Եւ հանգստեամբն շաբաթուն,
Թէ աստ գործել զգործս Աստուծոյ,
Անդէն հանգչիլ ընդ Աստուծոյ»։

Ապա երգի մեջ բանաստեղծը անդրադառնում է նաև Քրիստոսի մահվան և թաղման մասին.

«...Յեօթներորդ օր հանգստեան
Իջյալ մարմնովն ի գերեզման...
Զկապեալ հոգիսն վերածեաց,
Զանանց հանգիստն պատրաստեաց»։

Իսկ ամենայն սրբոց և մարտիրոսաց մասին վերջում Շնորհալին երգում է.

«Փայլին արդարքն յարքայութեան
Եւ ճգնաւորքն ի հանգստեան.
Մարտիրոսքն պսակին
Եւ կուսանաց լապտերք վառին»։

Ամբողջ պոեմը գրված է պարզ ու պատկերավոր լեզվով։ Պոեմի մեջ գերակշռող տեղը բռնում է էպիկական մասը, ուր բանաստեղծը վարպետորեն միաձուլում է նաև երգերի գլխավորապես վերջում իր զգացմունքները, որը և կազմում է պոեմի հուզական-քնարական մասը։ Շնորհալին սիրում է իր երգերին ու մտքերին խորհրդավորություն տալ, ապա բացատրել՝ «ծածկեալ խորհուրդն ծանուցաւ»։ Պոեմի մեջ բանաստեղծը աստվածաշնչական մասի հետ շատ սերտ կերպով կարողացել է միահյուսել նաև մեկնաբանական, դավանաբանական կետերը՝ հենվելով Հին ու Նոր Կտակարանների պատմությունների և այլ աղբյուրների վրա։

Շնորհալու երգերի մեջ հանրահայտ են նաև «Ցիշեսցուք» և «Զարթիք փառք իմ» գիշերային երգերը, որոնք նույնպես շարականների կանոնների մեջ չեն մտնում։ Այս երկու նշանավոր երգերը Շնորհալին հորինել է Հռոմկլայի բերդի պահապան հայ զինվորների համար, որպեսզի նրանք փոխանակ այլազգի վայրապար երգերի, երգեն մայրենի լեզվով գրված հոգեշահ այս երգերը և արթուն մնան գիշերն ու հսկեն բերդը։

Կ. Գանձակեցին այս երկու երգի մասին պատմում է հետևյալը.

«... Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն. զի փոխանակ վայրապար ձայնիցն զայն ասասցին. որոյ սկիզբն է Սաղմոսն Դաւթի «Յի-

շեսցի ի գիշերի անուն քո Տէրոջ և այսպես խորհրդաբար ըստ կարգի «Զարթիք փառք իմ», որ այժմ ասի յեկեղեցի ի ժամ գիշերային պաշտամանն։

Այս երգերը ոչ միայն կրոնական, այլև ազգային հայրենասիրական բնույթ էլ են կրում։ Բերդի պահապան զինվորների համար գրված այս երգերը՝ հետագայում որպես հոգևոր հայրենասիրական երգեր մտել են եկեղեցի և դարձել գիշերային ժամերգության առաջին երգը։

Ջերմ զգացմունքով լեցուն ու թափով գրված «Զարթի՛ք, փառք իմ, զարթիք և ես զարթեալց յառաւօտուս, ալէլուիա» երգը բաղկացած է 10 տնից՝ ամեն տունը երկու տող։ Բոլոր տներն էլ սկսվում են «Զարթիք» բառով։ Այս երգով կոչ է անում Շնորհալին «ամենայնց վերին Սիոնի», լույսի որդիներին, Փրկչի արյամբ փրկվածներին, հոգևոր հարսներին՝ որ իմաստուն կույսերի պես վառած լապտերներով դիմավորեն Տիրոջը՝ գիշերային ժամին և վերջապես ամբողջ ժողովրդին, թե «Զարթի՛ք, նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին, ալէլուիա»։

Այն ժամանակ, վերածնության երևույթների ուժեղացմամբ, սկսել էր գրականության աշխարհականացումը։ Խոշոր բեկում էր կատարվում գրականության բովանդակության ու ձևի մեջ։ Արևելյան մայր Հայաստանում Սարկավագ վարդապետը արդեն ստեղծում էր արվեստի իր նոր տեսությունը, որ բանաստեղծը պետք է նմանվի բնությանը, նույնիսկ սովորի սարեկ հավից, երբ բնությունն ու իրական կյանքը գտնում էին իրենց արժեքը հատկապես բանաստեղծության մեջ, ներսես Շնորհալին էլ իր հոգևոր բնույթի երգերի մեջ մեծ տեղ էր տալիս նաև ազգային ու հայրենասիրական գաղափարներին։ Ամանոսի լեռների վրա Շնորհալին ոչ միայն վառ պահեց մեր միջնադարի բանաստեղծության ճրագը, այլև պայծառացրեց այն, որն իր ճառագայթներով լուսավորեց ու ջերմացրեց մեր բանաստեղծությունը երկար դարեր։

Սրանով չի վերջանում Ներսես Շնորհալուն վերագրված երգերի ու շարականների ցանկը։ Շնորհալու գրչին են պատկանում նաև հայ շարականների այլ զարդեր, ինչպիսիք են Առաքելոց, Մարգարեից, (Հովհաննես Մկրտչի, Հովնան մարգարեի) Հայրապետաց (Հակոբ Մծբնա, Անտոն անապատականի), Հրեշտակապետաց, Քառասուն Մանկանց, Ս. Սարգսի, Ս. Գևորգի, Ս. Թեոդոսի, Տրդատ Թագավորի, Վարդանանց և Ղևոնդյանց շարականները[1]։

Շնորհալու գրական վաստակը չքնաղ զարդն է կազմում անցյալի մեր հոգևոր ազգային մշակույթի ոսկե ֆոնդի։

---

1 Տե՛ս նաև մեր հոդվածները Ներսես Շնորհալու և նրա շարականների ու երգերի մասին «Էջմիածին» ամսագրի 1957 թ. № Թ-ում, 1958 թ. № № Ա-ում, Բ—Գ-ում, Ե-ում և Զ-ում։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՌԱՋԻՆ ԿՐՈՆԱԹԵՐԹԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՄԵՋ

Հայոց մեջ կրոնական թերթերը ե՞րբ են ծագում առել, որտե՞ղ են հրատարակվել դրանք, ի՞նչ ծրագրով են ղեկավարվել, ի՞նչ դեր են խաղացել այդ կրոնաթերթերը հայ ժողովրդի կրոնա-բարոյական դաստիարակության ու մշակույթի բարձրացման գործում, ի՞նչ գրական ժառանգություն է թողել կրոնական մամուլը։ Ահա հարցեր ու խնդիրներ, որոնք մինչև այժմ չեն ուսումնասիրվել ու վերագնահատվել ըստ արժանվույն։

Մեր համեստ նպատակն է մասամբ բավարարել այդ պահանջը, տալ կրոնական մամուլի համառոտ պատմությունը, միաժամանակ ընդգծելով կրոնաթերթերի մեր ազգային-եկեղեցական կյանքում խաղացած դերը և որդեգրած ուղղությունը։

Այս ուղղությամբ մեր կատարած աշխատանքը չի ընդգրկում ամենուրեք հրատարակված հայ կրոնական պարբերաթերթերի քննարկումն ու բնութագրումը։ Մենք ղեկավարվել ենք այն սկզբունքով, թե այդ կրոնական պարբերաթերթերից որո՞նք են կապված եղել անմիջականորեն հայրենի կյանքի հետ, ծնունդ առել, ընդունելություն գտել ու զարգացել Հայրենի հողի վրա կամ հայաբնակ վայրերում, և վճռական դեր են խաղացել մեր ժողովրդի կրոնալուսավորության, հայ մշակույթի զարգացման ասպարեզում և թողել են գրական-բանասիրական հարուստ ժառանգություն։ Այլ խոսքով, մենք կանգ կառնենք առավել այն կրոնական պարբերաթերթերի վրա, որոնք հանդիսացել են հայ կրոնական մամուլի գլխավոր ուղենիշները։

Հետաքրքրական է հայ կրոնական մամուլի անցած ուղին։ Հայտնի բանասեր Գ. Լևոնյանի «Հայ պարբերական մամուլը» աշխատության տվյալներով՝ Հայաստանում, Անդրկովկասում, Ռուսաստանում և արտասահմանի հայ գաղութներում մինչև 1934 թվականը հրատարակվել է 57 անուն կրոնական պարբերաթերթ, ըստ որում 25-ը Թուրքիայում, 11-ը Ռուսաստանում, 12-ը ԱՄՆ-ում, 3-ը Ֆրանսիայում, 2-ը Սիրիայում, 2-ը Եգիպտոսում, 1-ը Անգլիայում և 1-ը Իտալիայում։ Ինչ խոսք, որ 1934 թվականից հետո այլ վայրերում հրատարակվել են նաև մի քանի այլ կրոնական թերթեր։ Կրոնական պարբերաթերթերը ամենից շատ հրատարակվել են Թուրքիայում և դա պետք է բացատրել նրանով, որ վերջին ժամանակներում դավանաբանական վեճերը բուռն ու կրքոտ կերպով լայն ծավալ ստացան այդ երկրում, որտեղ Հայ Եկեղեցու դեմ պայքար ծավալեցին կաթոլիկներն ու բողոքականները։

Հայոց մեջ կրոնական առաջին պարբերաթերթը «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսաթերթն է, որ հրատարակվել է 1839 թվականին Իզմիրում, ապա 1853 թվականին տեղափոխվել է Կոստանդնուպոլիս և մինչև 1854 թվականը հրատարակվել է ընդմիջումներով յոթ տարի։

Այս ամսագրի շարունակությունն է կազմում «Ավետաբերա»-ը, որը 1855 թվականի հունվարի 3-ից սկսեց հրատարակվել որպես շաբաթաթերթ, իսկ 1861 թվականից վերածվեց ամսագրի։ «Ավետաբերա»-ը սկսած 1870 թվականից նորից հրատարակվեց որպես շաբաթաթերթ և իր գոյությունը շարունակեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը՝ 1915 թվականը։

Այս երկու պարբերաթերթերն էլ հանդիսացել են հայ բողոքականների օրգանները և ցանք չեն խնայել արևմտահայ ժողովրդի մեջ արմատավորելու բողոքականությունը։ Նյութապես ապահովված լինելով ամերիկյան միսիոներների դոլլարներով՝ այս պարբերաթերթերը ցանք են թափել երկպառակություն մտցնել հայ ժողովրդի մեջ և տարածել բողոքական գաղափարներ։ Այդ պրոպագանդան աշխատել են ծավալել նաև հայ երեխաների մեջ և այդ նպատակով հրատարակել են «Ավետարեր տղայոց համար» անունով մանկական ամսագիրը։ Վերջինս լույս է տեսել 1872 թվականին և առանց ընդմիջման շարունակել մինչև 1915 թվականը։ Լինելով անգլիական կրթության ջերմ կողմնակիցը և բողոքականության տարածողը, «Ավետարեր»-ը խորթ է եղել մեր իրականությանը։ Նա չի կարողացել հետաքրքրություն առաջացնել և ընդունելություն գտնել, որովհետև նա չէր հետաքրքրվում հայ ժողովրդի անցյալով ու ներկայի հրատապ խնդիրներով։

«Ավետարեր»-ի մասին «Արձագանք» թերթը գրել է հետևյալը.

«...Այս թերթը, ինչպես հայտնի է, պաշտպան է բողոքական քարոզիչների շահերին և դորա այսքան տարվա հարատևությունը հիմնված է ոչ թե բաժանորդագրության օգնության վրա, այլ միսիոներական ընկերության զոհաբերության վերա»։

Բողոքականների պրոպագանդան ու կրոնական պայքարը պատճառ հանդիսացան, որ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանը կոնդակի, հայտարարության, հորդորի և հուսկ ուրեմն կրոնական բանադրանքի ձևի տակ լուրջ պայքար ծավալի բողոքականների հրատարակությունների դեմ։

Օտարամուտ այդ կրոնական գաղափարախոսության դեմ պայքարելու համար Մատթեոս պատրիարքը (հետագայում կաթողիկոս), գերագույն ու հոգևոր ժողովների հավանությամբ, որոշում է Պատրիարքարանի անունով հրատարակել մի պաշտոնաթերթ։

Կոստանդնուպոլսում 1846 թվականին լույս է տեսնում Զամուրճյանի «Հայաստան»-ը, որը լուրջ պայքար մղեց բողոքականների «Ավետարեր»-ի դեմ։

«Ավետարեր»-ի դեմ պայքարելու համար հրատարակվում է նաև «Զոհաբեր» անունով հայատառ թուրքերեն շաբաթաթերթը 1855 թվականին, որը տարի ու կես լույս տեսնելուց հետո վերածվում է «Երևակ»-ի։ Հակադրվելով «Ավետարեր»-ին, «Երևակ»-ը, որոշ ընդհատումներով, 1857 թվականի հունվարի 1-ից շարունակվեց մինչև 1866 թվականը։

«Երևակ»-ի խմբագիր Հովհաննես Տերոյենցը (Զամուրճյանը) իր թերթը դարձրել էր պահպանողական վերնախավի օրգանը։

«Երևակ»-ը չկարողացավ թերթի իր բարձրության վրա կանգնել և որևէ արժեք ներկայացնող գրական կայուն ժառանգություն թողնել։

Թուրքիայում հայ կրոնական մամուլի պատմության մեջ առաջնեկության կարգով ուրույն տեղ է գրավում «Արծվի Վասպուրականը» ամսագիրը, որի խմբագիրն է եղել Մկրտիչ վարդապետ Խրիմյանը (հետագայում հռչակավոր Հայոց Հայրիկը)։

Ամենից առաջ «Արծվի Վասպուրականը»-ը միակ ամսագիրն է, որ հրատարակվել է Հայրենի հողի վրա և իր ոգեղությամբ ու դավանած գաղափարներով կապված է եղել իր ժողովրդի հետ, խոսել է իր ժողովրդի ցավերից ու պահանջներից, լսել է նրա ձայնը և ընթացել հայ գյուղացիության ու եկեղեցու շահերի պաշտպանության ճանապարհով։

Եվ պարծանքով պետք է նշել, որ «Արծվի Վասպուրականը»-ը իր գոյության ողջ ընթացքում՝ 1855 թվականից մինչև 1864 թվականը հետևողական կերպով ջատագովել է միատեսակ «ոգեղություն ու գաղափարախոսություն. Որ ժամանակի համար դա առաջադիմական ճիշտ գաղափարախոսություն է եղել։

Ի՞նչ նպատակ է հետապնդել սկզբում Կոստանդնուպոլսում ու ապա Վանում, Վարագա մենաստանի նորաստեղծ տպարանում հրատարակված այդ ամսագիրը։

Հենց առաջին տարուց ամսագիրը շեշտակի դրել է իր նպատակը.

«Անհրաժեշտ պետք է բոլոր քաղաքացի իշխանաց, որոնք կարող և ձեռնհաս են՝ բարիք ընելու համազգի գյուղացոց կրթության համար, ըստ ամենայնի հոգ տանել, վանքի դպրոց, ուսում, վարժապետ, աղգասիրություն միայն քաղաքացվո համար չէ։... Մեր նպատակն է հայրենակից գյուղարնակ եղբարց լուսավորության համար աշխատիլ»[2]։

1858 թվականին ամսագիրն էլ ավելի պարզորոշ է դնում թերթի հետապնդած պահանջները, որ եղրափակվում են հետևյալ հինգ կետերում։

Առաջին պահանջը այն է լինում, որ ամսագիրը լինի «Հանդես աստվածապաշտության», այսինքն տպագրվեն առաջին հերթին այնպիսի հոդվածներ, որոնք բովանդակում են «Որ ինչ առ ճշմարիտ կրօն աստուածապաշտութեան, որ առ հաւատս և Եկեղեցին Քրիստոսի վերաբերի և ձգտի առնել այսու զգաղցրութիւն բանիցն Աստուծոյ ի քիմս

1 Թիֆլիս, «Արձագանք», 1882 թ., № 21։

2 Վան, «Արծվի Վասպուրական», 1855 թ., № 5։

հայկածին մանկտուն, քան զմեղր քաղաքական և աղգասիրական բանից»։

Երկրորդ պահանջն է՝ դառնալ «Հանդիսարան հայրենաշէն առաքինեաց հայոց», այսինքն տպագրվեն այնպիսի հոդվածներ, որոնք դրվատում են հայ ժողովրդի պատմության մեջ անուն վաստակած հերոսների, «նախնի քաջագունքն մեր», որոնց պետք է հետևեն այժմ շատերը և իրենց հայրենազարդ գործերով անմահության դափնիներ վաստակեն։

Երրորդ պահանջն է ամսագրի ընթերցողներին ծանոթացնել «Հայրենի աշխարհագր» տեսարաններին, այսինքն տալ «Հին և արդի վիճակք քաղաքաց, դիւղից, գերդաստանաց, վանորէից, մենաստանաց, եկեղեցեաց, ժողովրդոց և համօրեն այլ հանգամանաց, որ առ աշխարհագրական տեղեկութեանս վերաբերին»։

Չորրորդ՝ դառնալ «բուրաստան բարոյական առաքինութեանց»։

Հինգերորդ՝ դառնալ «թանգարան հայկական դպրութեան», այսինքն որոնել ու գտնել Հայաստանի բոլոր անկյուններում և վանքերում գտնված «հնագիր մատենագրութիւնները» ու հրատարակել դրանք, որոնք «ավելի թանկ են քան ոսկին ու հազվագիտ ակունք»։

«Արծվի Վասպուրականը»-ը իր ժամանակի համար խոշոր առաջադիմական նպատակ է հետապնդում։

«Արծվի Վասպուրական» ամսաթերթը «իր հայրենասիրական ճառերով ոչ միայն Պոլսո, այլ հույժ հեռավոր տերությանց. ու քաղաքներու մեջ բնակած գաղթական հայոց թմրած. ու քնած ոգիները կարթնցնէ»։

«Մեծահռչակ Վարագա վանից Հռիփսիմյանց Ս. Նշանին ավագաթև հովանյաց տակ իր մշտնջենավոր բույնը հաստատած», թերթը հաջողություն է գտնում ոչ միայն Վանում, այլև Հայաստանի դրեթե բոլոր գավառներում ու Կոստանդնուպոլսում։

Եվ պետք է նշել, որ ամսագիրը սրբությամբ կատարում է հինգ կետերում շարադրված իր սկզբունքները, իր ընթերցողների մեջ վառելով հայրենասիրական կրակը։

Ամսագրի էջերում հետևողականորեն տրված են մեծ քերթողահայր Մովսես Խորենացու պատմության մեջ հիշատակված բոլոր հայ հայրենասերների կյանքի ու գործունեության նկարագրությունները, Հայրենի երկրի հիշարժան վայրերը (Վարագն ու իր եկեղեցիները, Վերին Վարագն ու Իշխանաց աղբյուրը, Շամիրամակերտը, Ակռիին, Վան-Տոսպի հռչակավոր վանքերն ու եկեղեցիները և այլն)։ «Հանդէս աստուածապաշտութեան և եկեղեցաշէն հարցն» խորագրի տակ տպված են Թադեոս առաքյալի, Գրիգոր Լուսավորչի և նրա որդիների ու թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Գրիգորիսի, Հուսիկի, Դանիելի, Մեծն Ներսես Պարթևի, Սահակ Պարթևի, Մեսրոպի, Սրբոց Թարգմանչաց անձնվեր աշակերտների՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Եղնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի պատկերներն ու գործունեության արդյունքները և այլն։

«Հանդէս հայրենաշէն առաքինեաց» խորագրի տակ դրված են Հայկ նահապետի, Արամ և Արա Արամյան նահապետների կյանքն ու գործունեությունը, Վասպուրական Արծվույն ասատարքն ու բարերարքը, Մեծն Տիգրան Երվանդյանի, Վաղարշակ Արշակունի թագավորի, Արշակ և Արտաշես թագավորների, Տիգրան Բ-ի, Արդար Արշակունու, Արտաշես Բ-ի, Տրդատ Արշակունու պանծալի կյանքն ու կատարած հայրենաշեն աշխատանքները և այլն։

«Բուրաստան բարոյական առաքինութեանց» խորագրի տակ ամսագրում տպագրված են բազմաթիվ իմաստուն առակներ ու պատմվածքներ (օրինակ՝ «Աշխարհս ծովի կնմանի, ով որ լողալ չի գիտեր՝ կխեղդվի», «Վարդ ու մացառ», «Զիք յաղթող դժուարութեանց աշխարհի, քան զհամբերութիւն», «Երկու շուն և գայլ», «Պառավն ու աղախինը» և այլն և այլն)։

Պետք է նշել, որ բացի մի շարք առաջնորդող հոդվածներից, որոնք գրված են մասամբ գրաբարով, ամսագրի լեզուն աշխարհաբար է, հասկանալի ու հարթ։

Ամսագրի խմբագիր Մկրտիչ վարդապետ Խրիմյանը 1860 թվականին բացակայում է Վանից, որի համար էլ վերջին տարիները՝ 1863—1864 թվականներին ամսագիրը խմբագրում ու հրատարակում է Վարագա ժառանգավորաց դպրոցի աշակերտ Գարեգին վարդապետ Սրվանձտյանը (հետագայում հռչակավոր բանահավաք ու գրող)։

«Արծվի Վասպուրական»-ը պրոպագանդել է նաև ազգային-ազատագրական գաղափարներ։ Նրա էջերում տպագրված բազմաթիվ հոդվածներում ու գրական պատկերներում տրված են հայ ժողովրդի ստրկական վիճակը անցյալում, թուրքական կոտորածները, հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը իր անկախության համար։ Ամսագիրը կոչ է անում չհուսահատվել, կազմակերպվել և ընթանալ միշտ առաջ։

«Մենք նոր-սերունդներ ենք,— գրում է ամսագիրը,— ուրեմն մեր պարտքն ու կամքը ճանաչենք։ Վեր Աստված կանչենք, վեր կենանք, շարժենք ու սկսինք մեր գործը, նորեն սկսինք... Բանանք մեր աչքերը, բանանք մեր գործքերը, միշտ դիմենք հառաջ, միշտ

արի ու քաջ, գործենք անվեհեր ու անձնվեր, գործենք անդադար թե՛ տիվ և թե՛ գիշեր[3]»։

Ամսագիրը լայն պրոպագանդա է մղել նաև հայ ժողովրդի միասնության, արևելահայ ու արևմտահայ հատվածների սերտ համագործակցության համար։ Նա խոշոր ջանք է թափել Արևելյան և Արևմտյան Հայաստանի զաղափարական, մշակութային կապի ստեղծման և ամրապնդման համար։ Այս ուղղությամբ ամսագիրը տպագրել է բազմաթիվ խոհական, լուրջ հոդվածներ։

Ամսագրի էջերում հանդես են եկել մեր անվանի գրողներն ու բանասերները՝ Ռաֆֆին, Գարեգին վարդապետ Սրվանձտյանը, Արսեն Թոխմախյանը, Պետրոս Մագաթյանը, Նահապետ Փիրղալեմյանը և ուրիշներ։ Կուռ ու լրվանդակալից բազմաթիվ հոդվածներ ու առաջնորդողներ է գրել ամսագրի խմբագիր Խրիմյան Հայրիկը։

Հայ կրոնական մամուլի պատմության մեջ և ոչ մի կրոնաթերթ չի դրսևորել կրոնի, հայրենասիրության, հայ ազատամարտի այնպիսի խիզախ գաղափարներ ու մտահղացումներ, որպիսին արել է «Արծվի Վասպուրականը»-ը իր գոյության ընթացքում։

«Արծվի Վասպուրական»-ի տաղանդավոր խմբագիր երիտասարդ Մկրտիչ վարդապետ Խրիմյանը պայքարել է նաև երկրում տիրող տգիտության ու խավարի դեմ։

Խրիմյանը խավարի դեմ պայքարելու համար առաջադրում էր երեք միջոց· ա) կենդանի խոսք, կենդանի քարոզ, բ) ազգու գրիչ և գ) տպագրական մամուլ։

«Արծվի Վասպուրական»-ը սոսկ վանական հրատարակություն չէր, այլ արծարծում էր հասարակական մարտական խնդիրներ։

Կգա՞ արդյոք մի օր,— ասում էր Խրիմյանը,— երբ մեր գյուղացին հանգիստ կերպով վայելի իր հալալ աշխատանքը և այս երկրում տիրե արդարություն և խաղաղություն։ Կգա՞ արդյոք մի օր, երբ մեր այս ձորերում, ուր միայն ավազակների հրացանների տրաքոց է լսվում, լսվի երկաթուղու շոգեկառքի սուլոցը և մենք էլ ունենանք հեռագիր, փոստ, դպրոցներ, համալսարան։

1860-ական թվականներին քաղաքական, տնտեսական, ազատամիտ գաղափարների զարթոնքի շրջանն էր Թուրքիայում։ Կոստանդնուպոլսից սկսած մինչև հեռավոր գավառներում հիմնվում են նոր դպրոցներ, տպարաններ, հրատարակվում են նոր թերթեր ու գրականություն, որոնց նպատակն է դինում զարկ տալ կրթության ու բարձր մակարդակի հասցնել մշակութային կյանքը։ Վանքերն էլ մասնակցում են այս ընդհանուր զարթոնքին։ Վանքերում բացվում են կրթարաններ, վարժարաններ, երկրագործական դասարաններ, Վարագա վանքում հիմնվում է տպարան, Մուշում բացվում է վարժարան, Արմաշում և Երուսաղեմում, որտեղ գոյություն ունեին վանական միաբանություններ, հրատարակվում են կրոնաթերթեր։

1864 թվականի օգոստոսի 1-ին Արմաշի միաբանությունը հրատարակում է «Հույս» ամսաթերթը, իսկ Երուսաղեմում՝ «Սիոն»-ը։

«Հույս»-ը տպագրում է կրոնա-բարոյական, պատմա-բանասիրական հոդվածներ, քննություն է առնում կրոնի ու հայ ժողովրդի պատմության նկատմամբ սխալ կարծիքները և լուսաբանում է բազմաթիվ հարցեր։

Արմաշի «Հույս» ամսագրի խմբագիրն էր Խորին եպիսկոպոս Աշըգյանը (հետագայում Կոստանդնուպոլսի պատրիարք)։ «Հույս»-ը փակվում է 1879 թվականին։

«Սիոն» կրոնական, գրական ու բանասիրական ամսագիրը Երուսաղեմի հայ Պատրիարքության պաշտոնական օրգանն է։

Ամսագիրը լույս է տեսել 1866 թվականին և 12 տարի հրատարակվելուց հետո դադարել է 1877-ին։

«Սիոն»-ի առաջին խմբագիրը եղել է Տիգրան Ռ. Սավալանյանը, որը հանդիսացել է իր ժամանակի կարող մտավորական ուժերից մեկը և աչքի է ընկել Սրբոց Հակոբյանց պատմական հաստատության մեջ։

Սավալանյանից հետո «Սիոն»-ի խմբագրությունը վարել է Մելքիսեդեկ վարդապետ (ապա եպիսկոպոս) Մուրադյանցը։

«Սիոն»-ը Երուսաղեմի միաբանության համար աղդակ հանդիսացավ ուսումնական ու գրական շարժում ստեղծելու ուղղությամբ։ Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի աշակերտներն անգամ ամսագրում տպագրեցին իրենց գրական առաջին փորձերը։

Երկարատև դադարից հետո, եղիշե Դուրյան պատրիարքի օրով, 1927 թվականին նորից սկսեց լույս տեսնել «Սիոն»-ը՝ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի (ապա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո) խմբագրությամբ։ Խմբագրին ուղղված պատրիարքական պաշտոնագրում հրահանգված է, որ բացի կրոնա-բարոյական նյութերից, «Սիոն»-ը «փոքր ի շատե պիտի ջանա մշակել նաև տոհմային հին մատենագրությունը, մանավանդ անոր էջերուն վրա ավելցնելով անծանոթ կամ անտիպ մնացած գործեր կամ դրվածքներ... Փափագելի է նաև՝ որ հայ եկեղեցագիտական և բանասիրական հարցերու վերաբերմամբ ալ «Սիոն»-ը ունենա իր կարևոր բաժինը»։

Նվ «Սիոն» ամսագիրը, հավատարիմ մնալով պատրիարքի պաշտոնական ցուցումին,

3 «Արծվի Վասպուրական», 1862—1863 թ., № 1, էջ 10—11։

լանը է թափել դրսևորելու նոր ուղղություն՝ ժամանակի պահանջների համաձայն, և դարձել է Սիյուռքի մեր լավագույն, բովանդակալից և փնտռված ամսագրերից մեկը։

«Սիոն»-ը պարտականություն է ստանձնում դառնալու «Ավետարան մաքուր սնունդ» դի և հստակ լույսիս, որի ակարոտությունը կա լաղակե այսօր մեր գաղութներու մեջ։ «Սիոն»-ը խոստանում է տալ ակրոնքի ներշնչումներեն զրկված, իրենց բնաշխարհեն տարագիր եղբայրներու... ներշնչումներուն կազդուրը։

«Սիոն»-ը պայքարում է գաղութներում հայոց լեզվի զարգացման ու մաքրության համար և խոստանում է դառնալ առաջամարտ քննադատ, որովհետև «հավատացած է, որ քննադատությունը կենսական ազդակ է հոգեկան ու մտավորական կյանքի բոլոր արտահայտություններուն ու արդյունքներուն մեջ, ինչպես նաև մեր ազգային, եկեղեցական, ընկերային, քաղաքական, ընտանեական գործունեության բոլոր գիծերուն վրա։

«Սիոն»-ը ունի բազմաթիվ բաժիններ՝ կրոնական, բանասիրական, գրական, եկեղեցապատմական, դիվան Ս. Հակոբա, կրոնապատմական, մատենախոսական, պատմական, հայրենախոսական, պաղեստինագրական և այլն։ Կրոնական մասը ամսագրի գլխավոր և ստվար բաժինն է կազմում։ Առանձնապես արժեքավոր են բանասիրական և մատենագրական բաժինները, որոնց մեջ գեղարվեստագիտական ու պատմական լիարժեք աշխատություններով հանդես են եկել Եղիշե Դուրյան պատրիարքը, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, Թորգոմ Գուշակյան պատրիարքը, Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանը (խմբագիր), Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանը, պրոֆ. Ն. Ադոնցը, Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունին, Նիկոլ Աղբալյանը, Արշակ Ալպոյաճյանը, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը, Գառնիկ Ֆնտրգլյանը, Հակոբ Օշականը, Շահան Պերպերյանը, Հ. Քյուրտյանը և Երուսաղեմի հայոց վանքի միաբանության լավագույն և խոստումնալից գրիչները, շահեկան և արժեքավոր ուսումնասիրություններով։

Ամսագրի էջերում աննշան տեղ չեն բռնում նաև թարգմանական նյութերը և կրոնական բանաստեղծությունները։

«Սիոն»-ից հետո, Թուրքիայում հրատարակված կրոնաթերթերից «Լույս» կիսամսյա հանդեսը արժանի է լուրջ ուշադրության։ «Լույս»-ը հրատարակվել է Կոստանդնուպոլսում 1874 թվականին և փակվել է 1885 թվականին։ Մինչև 1882 թվականը եղել է զուտ կրոնաթերթ, ապա վերջին երեք տարում որոշ չափով փոխել է իր բնույթը։

«Լույս»-ի խմբագիր-տնօրենն է եղել Հմայակ ծայրագույն վարդապետ Դիմաքսյանը, որ կարողացել է իր կիսամսյա հանդեսը դարձնել հետաքրքրական, տպագրելով, լուրջ կրոնական հոդվածներին զուգընթաց, բազմատեսակ ուսանելի նյութեր, որոնք այսօր իսկ հետաքրքրությամբ են կարդացվում։

«Լույս»-ի խմբագիրը հենց առաջին համարում շարադրել է թերթի ուղղությունը և հետապնդած նպատակը. «...Մտքի լույսով և Աստուծո երկյուղիվն միայն մարդս կրնա ինքզինք սանձահարել, և լույսով միայն կրնա ճանաչել ու կատարել իր պարտականությունները։ «Լույս»-ն ալ իբրև կրոնական հանդես մը այսօր ազգային հրապարակի վրա կերևի, որ իր պարտքերը կատարելու կուգա։ Եթե եկեղեցականաց պարտականությունը ժողովրդյան բարոյական օգուտները հոգալ և զանոնք ճշմարիտ հավատին մեջ պահելն է, այս նվիրական պարտականությունը այն ատեն միայն արժանարար կատարած պիտի ըլլանք, երբ անոր միտքը ըստ չափու կարողության լուսավորելու աշխատինք։ Միևնույն դիտավորությամբ է, որ «Լույս» անունով տույն փոքրիկ հրատարակության ձեռք զարկինք, որու նպատակն պիտի ըլլա ազգային ընտանեկան կենաց մեջ կրոնի, բարոյականության, ազգասիրության և այլն զգացմանց զարգացման համար աշխատիլ և մտքերը լուսավորելու ջանալ, սիրո, խաղաղության և միաբանության քարոզ լինել... Այս դուղնաքյա ձեռնարկության շարժառիթ ունեցած ենք ոչ թե անձնական մի փափագ կամ համբավատենչության զգացություն մը, այլ սիրելի ազգիս բարոյական հառաջդիմության և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո փառաց եթե կարելի է՝ դուրդն ինչ ծառայություն ընելու անշահախնդիր դիտավորությունը»։

Եվ պետք է երախտագիտությամբ նշել, որ Հմայակ ծայրագույն վարդապետ Դիմաքսյանն ամենայն բարեխղճությամբ կատարել է իր ստանձնած պարտականությունները և հասել է իր նպատակին։ «Լույս»-ը Թուրքիայի հայոց երկարատև կրոնաթերթերից մեկն է եղել, որ չերմ ընդունելություն է գտել ժողովրդական լայն խավերում՝ իր հետաքրքրքրական բովանդակության համար։

«Լույս»-ը 1875 թվականից, իր գտած ընդունելության համար, վերածվում է շաբաթաթերթի։

1888 թվականին Կոստանդնուպոլսում լույս է տեսնում մի նոր թերթ՝ «Հայ Եկեղեցի» անունով կրոնական շաբաթաթերթը, որի խմբագիր է նշանակվում Թոնեի համալսա-

4 Կոստանդնուպոլիս, «Լույս», 1874 թ., № 1, նախաբան։

բանի շրջանավարտ Թորոս վարդապետ Ջուղայեցին։ Այս հանդեսի բովանդակությունը զուտ կրոնական ու աստվածաբանական է, Ավետարանի հմտարից մեկնաբանություններով և տոների բացատրություններով։ Թերթը երկար կյանք չի ունենում և դադարում է 1888 թվականի նոյեմբերին։

1888 թվականի ապրիլի 9-ին Կոստանդնուպոլսում սկսեց հրատարակվել «Խոսնակ Հայաստանեայց եկեղեցւոյ» կրոնական շաբաթաթերթը, որ իր առաջին համարում հրատարակեց թերթի ծրագիրը, հաստատված Կոստանդնուպոլսի կրոնական ժողովի կողմից։ Թերթի ոգին էր Վահան վարդապետ Մինասյան Պարտիզակցին, որը կարողացավ տպագրվող նյութերի մեջ բազմազանություն մտցնել և ժողովրդական ոգով ու ձգտումով խմբագրել թերթը։ Դրա շնորհիվ այս կրոնական թերթը որոշակի ընդունելություն ու համակրություն գտավ ընթերցողների կողմից։ Վահան վարդապետը նույն տարում իր թերթի անունը փոխեց «Սոխակ Հայաստանեայց եկեղեցւոյ», իսկ երբ գժտվեց Կրոնական ժողովի հետ, սկսեց ինքնուրույն կերպով հրատարակել թերթը, սակայն կարճատև եղավ այն։ Թերթը դադարեց 1888 թվականին։ Այս շաբաթաթերթում տպագրվել են առաքելական կանոնների մեկնաբանման, կրոնական զգացումների զարգացման և բարոյակրթական շատ հոդվածներ։ Այն տեղ է հատկացված Պատրիարքարանի և եկեղեցական գործերի մասին տրված տեղեկություններին։

1895 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակվում է «Լույս» անունով կրոնական, գրական, բանասիրական և քաղաքական մի նոր շաբաթաթերթ, որի խմբագիր-տնօրենն է եղել Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյանը, իսկ արտոնատերը՝ Վահան վարդապետ Տեր-Մինասյանը։

«Լույս» շաբաթաթերթը, որ հրատարակվել է Կոստանդնուպոլսում 1895—1906 թվականներին, միատեսակ ուղղություն ու բնույթ չի ունեցել։

Մենք նշում ենք այդ շաբաթաթերթի այն տարիները, երբ հրատարակվել է գերազանցապես որպես կրոնաթերթ։

«Լույս»-ը սկզբից հրատարակվել է որպես կրոնաթերթ 1895 թվականից մինչև 1897-ը ներառյալ, որից հետո կոչվել է «նոր շրջան» և դարձել է գրական, գիտական, բանասիրական, քաղաքական շաբաթաթերթ։ 1905 թվականից մինչև 1907 թվականը նորից կրոնական թերթ, իսկ 1908 թվականին Ա. Անտոնյանի խմբագրությամբ վերածվում է զուտ գրական-գեղարվեստական շաբաթաթերթի։

Լինելով արևմտահայ լուրջ կրոնաթերթերից մեկը, «Լույս»-ը որպես այդպիսին կարողացել է հրատարակվել վեց տարի և իր շուրջ է համախմբել լավագույն ուժերի։

Ի՞նչ ծրագրով է ղեկավարվել այս պարբերաթերթը.

«Լույս»-ը պիտի մշակե գլխավորապես հայ եկեղեցագիտությունը իր բոլոր ճյուղերուն մեջ, սիրված ու փորձ, ձեռնհաս ու ժիր մշակներով՝ ըլլա եկեղեցական, ըլլա աշխարհական, առանց մոռնալու նաև ուրիշ հետաքրքրական նյութերը»։

«Լույս»-ի վերահրատարակման առթիվ Կոստանդնուպոլսի պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը խմբագրությանն ուղղված իր «Թուղթ օրհնութեան» մեջ գրում է հետևյալը. «...Մեր ժողովուրդը կրոնական է յուր զգացմամբ, բարոյական է յուր սկզբամբ. վստահ եմ, որ իրեն ըղձից հագուրդ տվող հրատարակության կյանքը կապահովվի, երբ այս այ ապահով կերպով շարունակե, և առաջին օրերուն բնական դժվարությանց դիմանա... Գրողներուն կհանձնարարեմ, ավելի ժողովրդին պետքին հետևիլ՝ քան իրենց ճաշակին, ավելի օգտակարին միտ դնել՝ քան հաճելվույն, խորշիլ անձնականություններե, հակառակություններե, ավելորդ խնդիրներե։ Նույնիսկ կրոնական կամ դավանաբանական նրբությանց մեջ չմտնել, այլ ավելի բարոյական ուղղության վրա քալել։ Ասոր հետ սորվեցնել հավատացելույն յուր դավանությունը, յուր արարողությունները և յուր կանոնները, բացատրել ընտանեկան սրբությունը, ծնողական և որդիական պարտքերը, հանրության անդամակիցներու փոխադարձ հարաբերությունները, դաստիարակության նվիրականությունը, կրթական պահանջները և դրական ուղղիչ և մաքուր ճաշակի պայմանները»։

«Լույս»-ին աշխատակցել են բազմաթիվ գիտնական վարդապետներ և եկեղեցականներ, բազմօգուտ հոդվածներով մեկնաբանելով կրոնական արարողությունները, կանոնները։ Պարզաբանված են քահանայական խնդիրները, քարոզի ծրագիրը, քարոզելու արվեստը, փոփոխությունները Հայ եկեղեցվո մեջ, կենցաղագիտությունը եկեղեցվո մեջ, չորս Ավետարանների ծագումը, Ս. Գրոց ընթերցվածները Հայ եկեղեցվո մեջ, միհրականությունը, ինչ է ներկայացնում արդի աստվածաբանությունը, հայ վանականության ծագման հարցերը, Հաղորդության, խորհուրդը, Գործք Առաքելոցը և այլն։

---

8 «Լույս», 1905 թ., № 1, էջ 7։

6 Նույն տեղում, էջ 4։

«Լույս»-ում տպագրված են մեծ թվով կրոնական բանաստեղծություններ, հատկապես Եղիշե եպիսկոպոս Դուրյանի, և հետաքրքրական աշխարհագրական-պատմական հոդվածներ օտար երկրների մասին։ Զգալի տեղ են բռնում և թարգմանական նյութերը։

Կոստանդնուպոլսի «Մասիս» հռչակավոր ու երկարատև հանդեսն ևս (1852—1903) որոշ տարիներում վերածվել է կրոնաթերթի։ 1888-ից մինչև 1892, ինչպես նաև 1896-ից մինչև 1908 թվականները «Մասիս»-ը եղել է արևմտահայ ժողովրդի կրոնաթերթերից մեկը և լավ ընդունելություն է գտել։

«Մասիս»-ի ուղղության ու բնույթի մասին Օրմանյան եպիսկոպոսը գրել է հետևյալը.

«...Մեր կրոնական թերթը բարձր խնդիրներով ծանրաբեռնել չենք ուզեր. բանգետ երևնալու հավակնությամբ դժվարին նյութերու մեջ չենք մտներ, գիտական ասպարեզի թևակոխելով արժանիքներ ստեղծել չենք փիրեր, մեր նպատակն է մեր ժողովրդյան օգտակար ըլլալ, կրոնք և բարոյական բացատրել, հավատք և եկեղեցի պաշտպանել։

Այս ծրագրով էլ թերթը ընդմիջումներով շարունակում է իր գոյությունը ինը տարի։

Թուրքիայում հայոց վերջին կրոնաթերթը «Տաճար» հանդեսն է, որը հրատարակվել է 1909 թվականի նոյեմբերի 15-ին և դադարել է 1918 թվականին։ Այդ ամսագիրը խմբագրել ու ղեկավարել են սկզբում Հմայակ քահանա Էքսերճյանը, ապա Գարեգին վարդապետ Խաչատրյանը (ներկայումս Թուրքիայի հայոց պատրիարք) Զարմայր քահանա (ապա վարդապետ) Կյոզլուրյանը և Լևոնդ ծայրագույն վարդապետ (ապա եպիսկոպոս) Դուրյանը։ «Տաճար»-ը սկզբում եղել է կրոնա-եկեղեցական կիսամսյա հանդես, իսկ 1910 թվականի հունիս ամսից վերածվել է շաբաթաթերթի՝ տնօրինությամբ և խմբագրությամբ Զարմայր քահանա Կյոզլուրյանի։

«Տաճար»-ի էջերում կրոնա-բարոյական և գիտական հոդվածներով հանդես են եկել Գարեգին, Պարգև, Կորյուն, Արտավազդ, Երվանդ և Տիրայր արմաշական վարդապետները, Լևոնդ ծայրագույն վարդապետ Դուրյանը, Հ. Մրմրյանը, Զարմայր քահանա Կյոզլուրյանը, Լևոն Էսաճանյանը, Գրիգոր Գալուստյանը, Արշակ Ալպոյաճյանը, Արիստակես քահանա Հիսարլյանը, Հակոբ Ալթունյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Գեվորգ ծայրագույն վարդապետ Ասլանյանը, Եղիշե վարդապետ Խաչատրյանը, Ատրուշանը, Վահան Խուդավերդյանը և շատ ուրիշներ։

«Տաճար»-ը իբրև շաբաթաթերթ հրատարակվել է ինը տարի շարունակ։

Մենք համառոտակի նշեցինք Թուրքիայում լույս տեսած այն հայ կրոնաթերթերը, որոնք ղեկավարվել են որոշակի ծրագրով և համեմատաբար երկար կյանք են ունեցել։

Կանգ չենք առել «Նոր ավետաբեր» (Հալեպ), «Ամենուն համար» (Խարբերդ), «Մոսնակ («Սոխակ») Հայաստանեայց Եկեղեցւոյ» (Կոստանդնուպոլիս), «Տաճար» (Կոստանդնուպոլիս), «Եկեղեցի Հայաստանեայց» (Կոստանդնուպոլիս, Մանչեստր), «Արձագանք ճշմարտութեան» (Փարիզ) և մի քանի այլ կրոնաթերթերի վրա, որոնք կարճատև կյանք են ունեցել։

Մեր ուսումնասիրության շրջանակից դուրս են մնացել նաև ԱՄՆ-ում հրատարակված ու ներկայումս հրատարակվող բազմաթիվ հայ բողոքական թերթերը։

Հայ բողոքականները Թուրքիայում հրատարակել են չորս անուն՝ «Շաբաթական պիտանի գիտելեաց» (Իզմիր), «Ավետաբեր» (Կոստանդնուպոլիս), «Դիտակ» և «Բիւրակն» (Կոստանդնուպոլիս), կրոնաթերթեր, որոնք երկարատև կյանք են ունեցել, որովհետև ապահովված են եղել միսիոներական ընկերությունների գոլյարներով, սակայն չեն կարողացել հաջողություն գտնել։

Հայ կաթոլիկները լույս են ընծայել միայն երկու կրոնաթերթ («Կաթուղիկե արձագանք»՝ Հռոմ և «Պատկեր»՝ Կոստանդնուպոլիս), որոնք նույնպես ընդունելություն չեն գտել։

Այլ են եղել պայմանները Կովկասում։ Այստեղ անհամեմատ սակավաթիվ են եղել հայ կրոնաթերթերը։ Կովկասում հայ բողոքականներն ու կաթոլիկները գործունեության շատ քիչ հող են ունեցել։ Կովկասահայերի մեջ կրոնաթերթերի սակավությունը հետևանք է այն բանի, որ կրոնադավանաբանական երկպառակությունները լայն բնույթ չեն ստացել։ Կաթոլիկները կարողացել են որոշ չափով մուտք գործել Ախալցխայում, Արդվինում և Ղարսում, սակայն հնարավորություն չեն ունեցել ինքնուրույն կրոնաթերթեր լույս ընծայելու։ Ինչ վերաբերում է բողոքականությանը, որ մուտք է գործել 1828 թվականին Շուշում, նա էլ հաջողություն չի գտել ժողովրդի մեջ։

Ցարական կառավարությունը թույլ չէր տալիս կրոնների ու դավանությունների մուտքը Ռուսիայի սահմաններում, որովհետև ռուսադավաններ զրկված են եղել կրոնափոխ լինելու իրավունքից։

Մյուս կողմից՝ ուժեղ է եղել Էջմիածնի ազդեցությունը։ Ս. Էջմիածնի և բազմաթիվ այլ վանքերի ու մենաստանների մոտիկությունը խոշոր չափով ազդել է ժողովրդի վրա և սերտ կապերով շաղկապել Հայ Եկեղեցու հետ։

Հ. Դ. ԽԱԼԻՓԱԽՉՅԱՆ

(Ճարտարապետական գիտությունների թեկնածու)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅՈՒՄ*

Արձանագրությունները փորագրվում էին կա՛մ հուշարձանի կառուցման աշխատանքների ընթացքում, կա՛մ զգալիորեն ուշ։ Կառուցման ժամանակվա արձանագրությունները միշտ օրգանապես ձուլվում էին ձևավորման և կապվում հուշարձանի կառույցի հետ։ Ուշ ժամանակներին վերաբերող արձանագրությունները հազվագյուտ դեպքերում են ունենում օրենք ճարտարապետական-գեղարվեստական նշանակություն, որովհետև մեծ մասամբ նրանք խախտում էին շենքի այս կամ այն մասի կոմպոզիցիոն միասնությունը։

Որպես կանոն, արձանագրությունների դասավորվում էին տեսանելի տեղում և շատ քիչ դեպքերում միայն այլից թաքնված անշուք տեղերում։ Վերջինների թվին պատկանում են այն արձանագրությունները, որոնք համեստորեն հայտնում են կառուցողի կամ վարպետի անունը։ Հավանական է, որ այդպիսի արձանագրությունները կատարվում են առանց պատվիրատուի գիտության, որը արգելում էր հիշելու վարպետի անունը։ Նման արձանագրություններին է վերաբերում փորագրիչ Պավկոսի անունը, որը վարպետորեն հյուսված էր Նոր-Գետիկի ԺԳ դարի խաչքարի ձախ ներքևի անկյունը զարդարող ութանկյուն աստղի նախշի մեջ։ Հաղարծնի տեղանատան կառուցող (ԺԳ դ.) վարպետ Մինասի անունը գտնվում է արևմտյան երդիկի հարավ-արևելյան անկյունում վերից վար։ «Մ» գլխատառով են նշված սեղանատան շարվածքի քարերից շատերը։ Գեղարդի Այրիվանքի «Ավագան»-ի (1283 թ.) երդիկը ձևավորող քիվի ստալակտիտների և կամարը երիզող բարձրաքանդակ պտուղներով ու նոներով կազմված հարդարանքի միջև ստվերի տակ է փորագրված Գայլաձագ անունը։

Արձանագրությունները փորագրվում էին հարավային, արևմտյան և արևելյան ճակատների վրա։ Հյուսիսային՝ արևով չլուսավորվող ճակատների վրայի արձանագրությունները հազվադեպ էին։ Ռելիֆի ոչ մեծ խորություն ընթեռնելի էր դարձնում արձանագրությունը շնորհիվ արևոտ օրերի շատության, արևի բարձր դիրքի, երկնակամարի պայծառության և օդի թափանցիկության։

Որպես օրենք արձանագրությունները անքակտելիորեն կապվում էին ճարտարապետական մանրամասների՝ քիվերի, դոնների և լուսամուտների եղրակալների և առանձին դասավորված դեկորատիվ զարդերի հետ, որոնք շատ լավ աչքի էին ընկնում արևով ողողված պատի հարթության վրա։

Ըստ իրենց գեղարվեստական որակի և հուշարձանի ճարտարապետական ձևավորման մեջ կատարած դերի, արձանագրությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

---

* *Շարունակվում «Էջմիածին» ամսագրի 1959 թվականի № 8-ից։*

1. Արձանագրություններ, որոնք կապված են կառուցվածքի տեկտոնիկայի հետ։
2. Արձանագրություններ, որոնք մտցված են ճարտարապետական տարրի մեջ։
3. Արձանագրություններ, որոնք մտցվել են զարդաքանդակի մեջ, կամ որոնք կատարում են այդ դերը։

Արձանագրությունների գեղարվեստական բնույթի համապատասխան, ընտրվում էր նաև տառերի ռելիեֆը՝ խորացված կամ ուռուցիկ. մեկը միշտ կիրառվում էր առաջին երկու խմբերում, մյուսը՝ բացառապես միայն զարդանկարային փորագրություններում։

Առաջին խմբի արձանագրությունները, որոնք կապված են կառուցվածքի տեկտոնիկայի հետ, ընդգծում են պատի մակերևույթի նշանակությունը։ Խորացված տառերի բարակ գծագրության և ոչ խոր ռելիեֆի առկայությամբ, ինչպես նաև տառամիջի տարածությունների բացակայության դեպքում, արձանագրությունները խիտ կերպով ծածկում էին մակերևույթը և քարերի միջև եղած կարերը։ Այսպիսով միասնական մակերեսի տպավորություն ստեղծելով, ուժեղացնում էին պատի տվյալ մասը, տալով նրան հզորության և միաձուլության կերպարանք։ Որպես օրենք, այդ արձանագրությունները տեղավորվում էին պատի այն մասում, որն անմիջապես վերը գտնված էլեմենտի բեռը վերցնում է իր վրա։ Այդպիսի էլեմենտներ են պսակող քիվը և գոտին։ Այս էլեմենտների հետ կապված արձանագրությունները, նեմացնելով նրանց երկարաձիգ բնույթը՝ իրենք ևս ստանում են ժապավենի տեսք։

Երկարաձիգ արձանագրությունները գոտկում էին շենքը բարձրության կեսի վրա և կոմպոզիցիոն կերպով կապված լինելով որևէ դեկորատիվ մանրամասի՝ դռան կամ լուսամուտի եզրակալի հետ, պատի ուժեղացման տպավորություն էին թողնում նրա միջին, առավել խոցելի մասում։

Կառուցվածքի տեկտոնիկայի հետ կապված արձանագրությունները լինում էին և՛ մի տողանի, և՛ բազմատող։

Շենքը գոտկող միատող արձանագրություններում, մասշտաբը պահպանելու և անհրաժեշտ տպավորության հասնելու համար, տառերը անում էին մինչ 20 սմ. բարձրության, իսկ շենքը գոտկող բազմատող արձանագրություններում, տողերի քանակից ելնելով, տառերի բարձրությունները մի քիչ փոքրացնում էին։

Եղվարդի բազիլիկայում (Զ դար) շենքը գոտկող միատող շինարարական արձանագրությունը անցնում է պատի երրորդ շարքի տակից, շարքերը հաշվելով պատվանդանի ամենավերի գծից (նկար 7)։

Հատվելով դռան պորտալի հետ, արձանագրությունը պարուրելով որմասյուների գլուխները, կենդանացնում է նրանց յուրահատուկ զարդով։ Իր բարձրությամբ մոտավորապես համապատասխան լինելով պատվանդանի ելուստին (մինչև 20 սմ.), անընդմեջ ձգվող արձանագրությունը քիվի և պատվանդանի հետ մեկտեղ, ընդգծում է շենքի երկարաձիգ լինելը և կամարի հենարաններին տալիս է ուժեղ տպավորություն։

Նույնանման դասավորություն և նշանակություն ունեն Աշտարակի Կարմրավոր (է դար) և Կարսի շրջանի Նախճվան գյուղի (է դարի վերջը) եկեղեցիների միատող արձանագրությունները[24], Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցու (624—681 թ. թ.) միատող արձանագրությունը, որը պարուրում է բազմանկյան արսիդային ելուստները, դասավորված է զգալի բարձրության վրա քիվի տակ։ Արձանագրությունը չի մասնատվում, այլ ժապավենաձև ձգվում է փաթաթելով շենքը նույնպես, ինչպես քիվը։ Արձանագրությունն ու քիվը լրացնում են միմյանց։ Արձանագրությունը դասավորված լինելով քիվից ընկնող ստվերի սահմաններից դուրս, շնորհիվ տառերի նրբագեղ գծագրության, մանավանդ արևի լուսավորության ժամանակ, կարծես թե կազմում է ոչ մեծ, բայց իր պրոֆիլով գեղեցիկ քիվի շարունակությունը։

Խծկոնքի Ս. Աստվածածին եկեղեցու (ԺԱ դար) քառատող արձանագրությունը պարունակում է բազմակող պարագիծ ունեցող եկեղեցու առնվազն հինգ կողք խորանների լուսամուտների բարձրության վրա։ Փոքր ելուստավոր դեկորատիվ գոտու տակը փորագրված արձանագրության տառերը նույնպես ներդաշնակվում են գոտու քանդակի դեկորի հետ։

Նորավանքի Սմբատի դամբարանի (1275 թ.) հյուսիսային պատի վրա գտնվող քառատող արձանագրության մեջ հաշվի են առնված այդ պատի կողմնորոշման բոլոր առանձնահատկությունները։ Քիվից ընկնող ստվերի բացակայությունը հնարավորություն է տվել արձանագրությունը դասավորելու անմիջապես նրա տակ, և որպեսզի խորացված տառերը առավել հստակ և ընթեռնելի լինեն, նրանց ռելիեֆի հատվածքը ավելացված է տեղ-տեղ մինչև 8—10 մմ., իսկ բարձրությունը մինչև 15 սմ.։

24 Հ. Ա. Օրբելի, «Կամսարական իշխանների երկու շինարարական արձանագրությունները», «Քրիստոնեական Արևելք», Պետրոգրադ, 1915 թ., հատ. 3-րդ, 2-րդ հրատ., էջ 297—298 (ռուսերեն)։

Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու վեց տողանի մեծ արձանագրությունը, որը փորագրված է շենքի կառուցումից հետո 1051 թվականին, նույնպես ժապավենի նման բռնում է հարավային ճակատի բարձր մասի ողջ լայնությունը։ Նա դասավորված լինելով վերի լուսամուտների ցածի մասում, օրգանապես կապված չէ կոմպոզիցիայի հետ, ժապավենը կտրտված է լուսամուտի քարերի կարանները, ամբողջությամբ ծածկում էին ողջ մակերեսությունը։ Այստեղ արձանագրությունը կարծես միավորում է շարվածքի քարերը, տալով պատի այդ հատվածին միաձույլ զանգվածի մեծ տպավորություն։ Ստեղծելով յուրահատուկ ձևի մանր նախշ՝ արձանագրությունը առանձնացվում է ճակատի այլ ճարտարապետական մանրամասներից։



Նկար 7
ՆՂՎԱՐԴԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱՅԻ ՄԻԱՏՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

բացվածքներով, որի հետևանքով խախտված է նրա տեկտոնիկական իմաստը։

ԺԱ-ԺԲ դարերի միջև ընկած ժամանակամիջոցում մեծ արձանագրությունները հաճախ բազմատող էին արվում, որոնց երկարությունը, որպես կանոն, պայմանավորված էր լինում աղյուսի տարածությունների չափերով, իսկ վերջիններս էլ կախում ունեին ճարտարապետական մանրամասների դասավորումից։ Այդպիսին է, օրինակ, Մարմաշեն վանքի կաթողիկեի շինարարական արձանագրությունը (986—1029 թ. թ.) (նկար 8), որը փորագրված է հարավային ճակատի լուսամուտի տակ, դեկորատիվ կիսասյուների միջև։ 18 տողանի արձանագրության ոչ մեծ ու խորը տառերը, որոնք դասավորված են առանց հաշվի առնելու Մակերևույթը տեքստով համատարած ծածկելը բնորոշ է նաև խաչքարի տիպի դամբանաքարերի համար։ Առանձին կանգնած խաչքարերի վրա (ինչպես օրինակ Տուտեորդու խաչքարը Սանահնում, 1184 թ.), արձանագրությունները բռնում են ուղղաձիգ քարի ողջ ետևի մասը, իսկ երեսի կողմը զարդարված է քանդակով, որի կենտրոնում գետեղված է մեծադիր խաչ։ Ուրարտական ստելաների նման, քարի ամբողջ մակերևույթը ծածկված է մանր մակագրություններով (համեմատել նկար 9-ը նկար 1-ի հետ)։

Եթե խաչքարի հետևի մասը դիտելու հնարավորություն չէր լինում, օրինակ, երբ խաչքարը դրվում է կառուցվածքի պատին ընդհուպ (Սանահնի գրադարանի մոտի խաչ-

բարը), այդ դեպքում արձանագրությունը դասավորում էին խաչքարի վերի պսակող մասի հարթության, կամ պատվանդանի վրա, անդամ խաչի շուրջը։ Այս վերջին դեպքում արձանագրությանը տրվում էր երկրորդական, հուշարձանի գեղարվեստական ձևավորման մեջ ենթակա դերը։

լու, և ապահովում են արձանագրության պահպանումը։ Դասավորվելով հորիզոնական տողերով, խորացված ռելիֆով արձանագրությունները ուժեղացնում էին դռան բացվածքի ծածկող քարավորի մակերևույթի միասնությունը։ Որպես օրինակ կարող են ծառայել Տեկորի տաճարի (Ե դար, նկար

Նկար 8

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՏԱԿԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ խմբի արձանագրությունները, որոնք կապված էին ճարտարապետական էլեմենտների հետ, որպես կանոն, դասավորվում էին հիմնական մանրամասների՝ դռան պորտալների, լուսամուտների (աղեղնակալներ), կամարների և սյուների վրա։ Այդպիսի արձանագրությունները օրգանապես մտնում էին հուշարձանի գեղարվեստական ձևավորման մեջ։ Իրենց դասավորմամբ մակագրությունները հարմարվում էին այն մանրամասի ձևին, որով և ընդգծում և ուժեղացնում էր տվյալ ձևի ճարտարապետական արտահայտությունը նրա տեկտոնիկ իմաստը։

Արձանագրությունները դասավորելու համար սիրված տեղեր էին ուղղանկյուն գրոների կամարակապ եզրակալների քարավորները։ Այդ տեղերը տեսանելի են շենքը մուտք գործողներին, հարմար են կարդալու։

10), Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու (1033 թ.) պորտալները և այլն։ Զաքարյանների՝ Սանահնում գտնվող դամբարանի (1189 թ.) ոչ խորը պորտալում արձանագրությունը անցնում է կամարի ուղղությամբ, որով նա ընդգծել է քարավորի ձևը և անցում է ստեղծել դեպի նրա կամարային երիզավորումը։

Շատ հաճախ արձանագրությունները դասավորվում էին կամարների և դռների պորտալները երիզող ուղղանկյուն շրջանակների վրա։ Հաղարծնի ԺԳ դարի թաղակապ մատուռում մակագրությամբ է պատած ոչ միայն արևմտյան դռան քարավորի մակերևույթը, այլև զուգակցված կիսասյուների վրա հենվող, նրանց երիզող կամարը։

Նույն ճարտարապետական խմբի գավթի (ԺԲ—ԺԳ դ. դ.) պորտալում արձանագրությամբ է պատված համարյա ողջ մատչելի մակերևույթը։



Նկար 9
ՏՈՒՏՍՈՐԴՈՒ ԽԱՉՔԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՆԱՀՆՈՒՄ



Նկար 10
ՏԵԿՈՐԻ ՑԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊՈՐՏԱԼԻ ՊԱՐԱՎՈՐԻ
ՎՐԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կամարի բարավորի և նրա եզրին գետեղված շենքին ժամանակակից արձանագրությունները հարստացնում են պորտալի ճարտարապետությունը, իսկ առավել ուշ ժամանակներինը, որոնք դասավորված են պատահական կերպով և չեն համակերպված ճարտարապետական մանրամասների ձևերին, խախտում են պորտալի գեղարվեստական միասնությունը։

Արձանագրությունների գետեղումը լուսամուտների ազեղնակալների վրա գլխավորապես կիրառվում է է—Ը դարերի ժամանակամիջոցում։ Այդ ժամանակների ազեղնակալները զարդաքանդակներով հարդարում էին, որով և հնարավորություններ ստեղծում արձանագրությունները տեղավորելու։

Մաստարայի Ս. Հովհաննես (է դար) եկեղեցու հարավային ճակատի լուսամուտի վրայի արձանագրությունը ոչ միայն պատում է ազեղնակալի ելուստավոր մասն ու լուսամուտի ազեղի սեպաձև քարերը, այլև պատի՝ նրանցից վեր դասավորված քարը (նկար 11), *ընդորում զրերի փորվածքի խո-*

Նկար 11
ՄԱՍՏԱՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ
ՎՐԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ությունը տարբեր է։ Աղեղնակալի և սեպաձև քարերի վրայի տառերի փորվածքը խորը չէ, և ուրվագծերը նուրբ են։ Այս պարագան ուժեղացնում է տառերի միջև քանդակված խաղողի ողկույզի ռելիֆի արտահայտությունը։ Իսկ պատի քարի վրայի արձանագրությունը փորված է ավելի խոր ռելիֆով, որն անհրաժեշտ է՝ կապելու համար նրան աղեղնակալի ընդհանուր ձևի հետ։

Մոտավորապես Ժ դարից սկսված, երբ լուսամուտների աղեղնակալները ընդունեցին առավել մանրացված ձևեր, արձանագրությունները սկսեցին փորվել լուսամուտի պռնկին, քարի հարթ մակերևույթի վրա։ Օրինակ՝ Սանահնի Ս. Ամենափրկիչ եկեղեցու հյուսիս-արևմտյան խորանի առաջին հարկի լուսամուտի աղեղնակալի մանրացված պրոֆիլը արձանագրություն տեղավորելու համար պիտանի չի եղել։ Հորիզոնական տողերով դասավորված արձանագրությունը, ընդգծելով թաղակապ քարի ձևը, լուսամուտի գեղարվեստական ձևավորման մեջ աշխուժություն է մտցնում։

Ներսի սյուների բների վրա արձանագրություններ փորագրելը լայն տարածում ստացավ մոտավորապես ԺԱ—ԺԲ դարերից սկսած, երբ Հայաստանում երևան եկավ կառուցվածքի մի նոր տիպ՝ քառասյուն ժամատունը կամ գավիթը։ Սանահնի ժամատան (1185 թ.) և Գեղարդի այրամեջ դամբանատան (1288 թ.) սյունների բները համարյա ամբողջությամբ պատող փորագիր արձանագրությունները, իրենց դասավորությամբ ու տառերի ձևերով, ստեղծում են մի ուրույն դեկորատիվ նախշ։ Այդ նախշը ունենալով քիչ խորություն, ուժեղացնում է սյան գեղարվեստական հարդարանքը, անխախտ պահելով նրա կոնստրուկտիվ նշանակությունը։ Արձանագրությունները դասավորվում էին նաև գավթի ծածկը պահող կամարների կողերի և աղեղնակալների վրա։

Այդպիսի օրինակներով հայտնի են Հռոմոսի վանքի, Հովհաննավանքի, Հաղբատի վանքի և այլ տեղերի հուշարձանները։

Կեչառիսի գավթում (ԺԳ դար) վեց տողանի արձանագրությունը զարդարում է կենտրոնական ծածկի ուժակող պարփակ թաղը կրող արևելյան աստիճանավոր կամարի մակերևույթը։ Իր դասավորմամբ ընդգծելով կամարի ձևը, արձանագրությունը փորված է ներսի առավել տեսանելի և լավ լուսավորված մասում։

Լինում է նաև այնպես, որ արձանագրությունը չի կապվում որևէ ճարտարապետական մանրամասի հետ, այլ մեկնաբանվում է որպես ինքնուրույն ճարտարապետական-գեղարվեստական լարար։ Այդպիսիների թվին է պատկանում Անիի Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան ճակատի արձանագրությունը (Ժ դարի երկրորդ կես) (նկար 12)։

Մատուռաբայի Ս. Հովհաննես եկեղեցու արևմտյան ճակատի արձանագրության ձևավորումը հաջող կերպով կապված է շրջապատի մանրամասների հետ։ Արձանագրու-

Նկար 12
ԱՆԻԻ ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎՐԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

թությունը դասավորված է երկու քարերի վրա (նկար 13)։ Ցածով ավելի փոքր, վերևինի կենտրոնում քանդակված է խաչ, ներքևում ոճավորված բուսական զարդաքանդակով, շրջանակները երիզող դեկորատիվ կամարիկը միավորված է լուսամուտի աղեղնակալի հետ։ Կամարիկի, շրջանակների և լուսամուտի աղեղնակալի մանրաքանդակումը միավորում է արձանագրության կոտորակված գծանկարը՝ նրբագեղ պսակող քիվի հետ։ Արձանագրությանը դուրեկան ձևավորում է տվել նրա հիմնական, դեկորատիվ նշանակությունը ճակատի կոմպոզիցիայում։

Առավել պարզ է ձևավորված Արուճի եկեղեցու արևելյան պատի անմիջապես արտաքին կենտրոնական լուսամուտի վրայի արձանագրությունը։ Այն փորագրված է մի փոքր թեքություն ունեցող շրջանակով երիզված ուղղանկյան մեջ։ Նման երիզավորում կիրառվում էր Հայաստանում դեռևս Բ դարից (մ. թ. ա.) մինչքրիստոնեական հուշարձանների վրա։



Նկար 13
ՄԱՍՏԱՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Այս խմբի արձանագրություններին հարում է արևի ժամացույցի ձևավորումը, որը երբեմն զարդարել է Զվարթնոց տաճարի հարավային ճակատը։ Պրոֆիլացված շրջանով սահմանափակված ժամացույցի վարդը հորիզոնական գծով բաժանված է երկու կեսի, որոնցից ներքևի կեսը պարունակում է ժամանակը ցույց տվող նիշը, իսկ վերինը լրացված է մակագրություններով։ Ժամացույցը ճակատի վրա ստեղծում էր բավականին արտահայտիչ դեկորատիվ պատ։ Ներսում արձանագրությունները հաճախ ձևավորվում էին որպես ինքնուրույն գեղարվեստական տարր, որն էական դեր էր կատարում սենյակների դեկորատիվ հարդարման գործում։ Օրինակ կարող է ծառայել Գեղարդի «Ավազան» կոչվող ժայռափոր տաճարի հարավային պատի վրա հատուկ ձևավորված և խորշում փորագրված Պողոս խաղբակյանցի արձանագրությունը (1283 թ.) (նկար 14):

Երեքդ խմբի արձանագրությունները, որոնք մտցվում էին զարդաքանդակի մեջ, *կամ կատարում էին զարդաքանդակի դեր, արվում էին բացառապես ուռուցիկ և ունեին զգալի ռելիֆ։*

Իրենց ծագմամբ այդ արձանագրությունները սերտորեն կապված են գրչագրության արվեստի և մանրանկարչության հետ։ Ինչ բնույթի զարդաքանդակի պիտի փոխարինեին արձանագրությունները՝ երկրաչափական թե բուսական, դրան համապատասխան էլ նրանք լինում էին ավելի կամ պակաս ոճավորված կամ նախշված։

Նկար 14
ԳԵՂԱՐԴԻ ՎԻՄԱՓՈՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱՅԻ ԽԱՉԱԿՅԱՆՑ ՊՈՂՈՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրություն-զարդաքանդակի բնորոշ օրինակ կարող է ծառայել Հառիճի գլխավոր տաճարի արևելյան ճակատի քիվի ուռուցիկ արձանագրությունը (1201 թ.)։ Նա գետեղված էր երկու կիսագլանների միջև գտնվող թեք շերտի վրա (նկար 15): *Արձանագրության ռելիֆի դուրեկան հատվածքը և տառերի ուղղաձիգ գծերի գերակշռությունը համապատասխանում են ուրիշ քիվերի նույնանման տեղերում արված երկրաչափական հյուսվածքային քանդակին։ Շնորհիվ այդ բանի՝ 6—7 մետր բարձրության վրա դասավորված մակագրությունը*

Նկար 15
ՀԱՌԻՃԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՔԻՎԻ ՎՐԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

համարյա ոչնչով չի զանազանվում ուրիշ քիվերի զարդաքանդակներից։

Ճիշտ այդպես է մեկնաբանված նաև Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատի ներքևի լուսամուտի գլխի վրա փորված արձանագրությունը (նկար 16)։ Տարբեր բարձրության աղատ դասավորված ուռուցիկ տառերի միացությունը ոլորագիծ բուսական զարդաքանդակի հյուսվածքի հետ՝ բովանդակությանը տվել է երկրորդական նշանակություն. գլխավոր նշանակությունը, ինչպես նաև նախորդ օրինակում, ստացել է դեկորատիվ կողմը։ Արձանագրությունը, այլ քանդակի ու պատկերի բնույթով համանման զարդաքանդակի հետ մեկտեղ ստեղծել են լուսամուտի բացվածքի գեղանկար ձևավորում։

Գեղարվեստական ձևավորում է տված եղել նաև Անիի Ս. Գրիգոր եկեղեցու (ԺԳ դար) արևաքանդակի ճակատային մասի վրայի արձանագրությանը, որի մի դրվագը գտնվում էր Անիի միջնաբերդի հնագարանում[23]։



Նկար 16
ՆՈՐԱՎԱՆՔԻ ԲՈՒՐԹԵԼԱՇՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

23 Գ. արհեպիսկոպոս Հովսեփյան, «Դրության արվեստը Հայոց մեջ», էջ 17, աղյուսակ 13, նկար 24։

(Շարունակելի)

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄՇԱԿԱՎԱՆՔ

Մշակավանքը գտնվում է Հայաստանի հյուսիսում, պատմական Գուգարքի Կողբափոր գավառի Կողբ գյուղի հարավային մասում, անտառապատ մի մեծ բլրի վրա։

Մշակավանքից պահպանվել են ոչ այնքան մեծ, Աստվածածին անուն կրող եկեղեցին, մատուռը և եկեղեցուն կից գավիթը։

Մշակավանքի կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ, չնայած, որ եկեղեցու մուտքի վրա կա 1247 թվականը կրող նվիրատվական մի արձանագրություն։

Մշակավանքի մասին պատմական տեղեկություններ համարյա չկան։ Միակ տեղեկությունը հայտնում է Վարդան Արևելցին։ Նա գրում է, որ «...Ի վեց հարիւր վաթսուն և ինն թուին... եղև շարժ ահագին և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ ի Մշակավանս, ի մեծասանն յունուարի, ի ժամ ճաշոյ, և չորս պատարագող ընդ մեծ դենմանն նուիրեցան»[1]։

Վարդան Արևելցու վկայությամբ Մշակավանքը երկրաշարժի հետևանքով փլված պետք է լինի 1220 (669+551) կամ 1221 թվականին։

Հավանական է, որ այս շրջանում դեռևս գավիթը չի եղել և այն կառուցվել է երկրաշարժից հետո, եկեղեցու վերականգնման հետ միասին, որ եկեղեցու վերականգնումը վերջացրել են 1246—1247 թվականներին (որի մասին կարող է հաստատել եկեղեցու մուտքի վրա գտնվող արձանագրությունը), ապա կառուցել են գավիթը, որի շինարարությունը վերջացած պետք է լիներ 1253 թվականին (սրա մասին է վկայում գավթի հարավային պատի վրա գտնվող էՃԲ թվակիր (702+551=1253) արձանագրությունը։

Այսպիսով կարելի է ասել, որ Մշակավանքը ԺԲ—ԺԳ դարերի հուշարձան է։

Եկեղեցին արտաքինից շատ հասարակ է։ Սա ոչ այնքան մեծ, բայց բարձր քառակուսի սրահ է, որի արևելյան մասում բարձրանում է կիսաշրջանաձև աբսիդ, երկու կողմից ունենալով նեղ, երկհարկանի խորաններ։ Աբսիդից դեպի վերին խորաններն է բարձրանում մի եռաստիճան սանդուղք։ Եկեղեցու քառակուսի շինությունը ծածկված է կիսաշրջան կամարով և մեկ միացնող կամարով, հենվելով երկուական կիսասյուներ ունեցող պիլաստրի վրա։ Եկեղեցու բոլոր անկյունները զարդարված են նույնը կիսասյուներով։ Ամբողջ կառուցվածքի տեսակետից առանձնապես հատկանշական է աբսիդային մասը։ Աբսիդի կիսաշրջանը եզերվում է եռանիստ կիսասյուներով։ Ներքին խորանների մուտքը զարդարանքներով է։ Հյուսիսային կողմում գտնվող ստորին խորանի մուտքը զարդարված է տարբեր գույներ ունեցող շեղանկյուն քարերով։ Դրսի կողմից, հարավային և հյուսիսային պատերի վրա, տեղավորված են կլոր պատուհաններ, արևելյան մասում՝ խորանների կիսակլոր պատուհանները։ Իրականում զարդարված է արևելյան պատի կենտրոնական մասը։ Թեմի պատուհանն ունի իոր պարակող, որն ամփոփված է ոչ լայն շրջանակի մեջ, եռաշարք շղթաներով։ Պատուհանի վրա բարձրանում է քառաթև որմնաբանդակ խաչ, որի ներքևի

[1] Վարդան վարդապետ Բարձրբերդցի. «Պատմութիւն տիեզերական». Մոսկվա, 1861 թ., էջ 186։

մասում կազմված է շղթա հինգ հնգաթև աստղերի պարունակությամբ, իսկ խաչի թևերի անկյուններում քանդակված են օղակներ։ Այս պատկերի մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում խաչի վերևի մասում գտնվող ցուլի գլխի որմնաքանդակը։

Գազանների պատկերների քանդակումը շինությունների վրա հատկանշական է հայկական ճարտարապետությանը։ Գազանների, հատկապես ցուլի որմնաքանդակ է հանդիպում Գեղարդում, Սուլեյմանի քարվանսարայում, Մակարավանքում և այլ վայրերում։

Կարևոր է նշել, որ Խորանաշատի (Հայաստանի հյուսիսում) գավթի արևմտյան մուտքի աղեղնավոր կամարը իրենց վրա պահում են երկու կենդանիներ, որոնք նստած են չորս ոտքերի վրա, ընդորում կենդանիներից մեկն անվիճելիորեն ցուլ է։ Այս պատկերն ունի իր նշանակությունը։ Նա հավանաբար դիտվել է որպես շինության հենարանը։ Բացի այդ, կենդանիների պատկերները հանդիսացել են նախարարական տների սիմվոլիկ զինանշանները։

Հատկապես հետաքրքրական է գավիթը։ Նրա հիմքը նույնպես անսյուն սրահ է, որը ծածկված է հատվող կամարների երկու զույգերով։ Սակայն սրահի ծայրում, հենց մուտքի մոտ, բարձրանում են երկու կլոր մեծ սյուներ, որոնց կամարները միանում են

ՄՇԱԿԱՎԱՆՔ.— ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԽԱՆԳԵԼՅԱՆ ՃԱՆԱՊԸ

նույն ուղղությամբ (այսինքն՝ գավթի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյունները) գտնվող կիսասյուներին։

Սրահի հիմնական կամարները հենվում են հարավային կողմում մասսիվ կիսասյուների վրա, հյուսիսային և արևելյան կողմերից պատի վրա գտնվող ուղղանկյուն ելուստների վրա, իսկ արևմտյան կողմից՝ հիշատակված շրջանաձև սյուների վրա։

Կենտրոնական սրահի ծածկը չնայած չի պահպանվել, սակայն նրա ամեն մի կողմում պարզ երևում են երկու նեղ կամարների հիմքերը, որոնք ձգված են եղել այդ փոքրիկ քառակուսու վրայով։

Մշակավանքի գավթի այսպիսի կառուցվածքը, չնայած փոքրացրած չափսերով, ամբողջապես կրկնում է Հաղպատի վանքի մեծ գավթի կառուցվածքը։

Գավթի հարավային և հյուսիսային կողմերում, պատերի ամբողջ հարթության վրա նշմարվում են պատուհանների շրջակալները։ Արևմտյան ֆասադը զարդարում է մուտքը, որի երկու կողմերում բարձրանում են երկու զույգ կիսասյուներ, որոնք միանում են երկակի կամարներով։

Մուտքը զարդարված է վերդիր խաչերով և ութանկյուն վերջավորություն ունեցող աստղերով, ընդորում խաչերը դեղին քարից են, աստղերը՝ կարմիր։

Բազմազույն վերդիրների օգտագործումը շատ տարածված է եղել միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ։

Վերդիր զարդեր ունեն Անիի հուշարձանները (Պարոնի պալատը և հյուրանոցը)։

Գավթի մուտքը շատ նման է ներսում գտնվող եկեղեցու մուտքին, որտեղ նույնպես հանդես են գալիս երկու զույգ կիսասյուներ՝ երկակի կամարներով։



ՄՇԱԿԱՎԱՆՔ.— ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՂԱՆԻ ԱՌԱՋԱՄԱՍԻ ՖԱՆԴԱՆՆԵՐԸ

Գավթի մեջ կան երեք մահարձաններ, որոնցից մեկը եկեղեցու արևելյան պատի մեջ պատրաստված խորշի մեջ է և գրված է պատվանդանի վրա։

Մահարձանը պարունակում է սրբապատկերներ և երկրաչափական զարդեր ու ՉԽԹ. (740+551=1291) թվականը կրող արձանագրություն։ Երկրորդ մահարձանն արձանագրություն չունի։

Երրորդի վրա կարդացվում է Ավետիք անունը և մահարձանի կանգնեցման թվականը՝ ՌՃԱ (1101+551=1652)։

ՄՇԱԿԱՎԱՆՔ.— ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՉՔԱՐԵՐԻՑ ՄԵԿԸ. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՏԱԿ

Գավթում կան գերեզմաններ, որոնց տապանաքարերը կիսով չափ թաղված են հողի մեջ։

Մատուռ.— *Գտնվում է եկեղեցու հյուսիս-արևմտյան մասում, որի հիմքը ուղղանկյուն է։ Պատերը սրբատաշ են։ Օգտագործվել է սպիտակ կրաքար։ Մուտքն արևմտյան կողմից է։ Արևելյան կողմում կա մեկ պայտաձև պատուհան և փոքրիկ կիսակլոր աբսիդ։ Ծածկը թաղակապ է։ Մուտքի երկու կողմերում բարձրանում են կիսասյուներ։ Մատուռը քանդվել է երկրաշարժի հետևանքով։*

Մշակավանք անունը կրող գյուղատեղի մոտ պահպանվել են մի հին շենքի պատերը և հիմքը՝ խոր փոսի ձևով, որտեղ գտնվում է յուղատու բույս տրորող կլոր մեծ քար։

Մշակավանքը հարուստ է նաև արձանագրություններով։ Արձանագրություններ կան եկեղեցում և գավթում, որոնց թիվը հասնում է հիսունի, բոլորն էլ նվիրատվական բնույթի։ Արձանագրություններից իրենց վրա թվական ունեն չորսը։

Նշված արձանագրություններից ամենահները պատկանում են ԺԳ դարին (1247 թ., 1253 թ., 1291 թ.), իսկ ամենաուշը՝ ԺԷ դարին (1652 թ.)։

Արձանագրությունները ցույց են տալիս, որ հող, այգի և այլ թանկարժեք իրեր են նվիրվել վանքին, նվիրատուների ծնողների հիշատակի համար, և սահմանվել են պատարագի հատուկ օրեր։

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Խաթուն և Վասակ անունները կրող արձանագրությունները։

Արձանագրություններից պարզվում է նաև, որ վանքի միաբանության առաջնորդն է եղել Գրիգոր անունով մի հոգևորական։

Մշակավանքի արձանագրություններն ունեն պատմական կարևոր նշանակություն հասարակական-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար։

Հարկ ենք համարում այստեղ բերել այդ արձանագրություններից մի քանիսը, որոնք ընդհանրապես առաջին անգամ են հրապարակվում, այն ձևով, ինչ ձևով որ փորագրված են, ձգտելով պահպանել իսկական տեքստը։

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ՝ ԴՐՍԻՑ.

1 ՅԱՆՈՒՆ ՅԱՅ ԵՍ ԸՌԸ-
2 ՍՏԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔ
3 ՀԱՍՏԱՏԵՑԱՔ Ի ՏԱՐԻՆ
4 :Գ: ԺԱՄ՝ ՎԱ[Ր]ԴԱՆԱ. ՅՈՀԱՆՈՒ
5 ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՒՆԻՆ ՈՐ ԽԱ-
6 ՓԱՆԵ ԴԱՏԻ Ի ՏՆ:

2) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ՝ ՆԵՐՍԻՑ.

1 ԵՍ ՀԱՍԱՆ ՄԻԱԲԱՆ-
2 ԵՅԱ ՅԱՄ ԵՒ ԱՌԱՋՆ-
3 ՈՐԴ ՀԱՍՏԱՏԵ[Ա]Յ Ի Տ-
4 ԱՐԻՆ :Ա: ԺԱՄ Ի ՎԱՐԱԳ[ԱՅ]
5 ԽԱՉԻՆ ՈՎ ԽԱՓԱՆԻ Մ[ԵՐ]
6 ՄԵՂԱՅՍ ՏՐ

3) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻՆ՝ ԴՐՍԻՑ. ՄՈՒՏՔԻ ՎՐԱ.

1 ԵՍ ԴԸՍՏԱԿԱՅՍ ԵՒ ԱՅԼ
2 ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ
3 Ի ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ :Ա: ԱՐԵՍԱ-
4 ԻՏԻՆ :Ա: ԱԶԸԶԻՆ Ի ՏԱԻՆԻ
5 ՄԻ ՔԱՌԱՍՆԻՑ ՈՐ ԽԱՓԱՆԷ
6 ՄԵՐ ՄԵՂԱՅՍ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՑ

4) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻՆ՝ ՆԵՐՍԻՑ.

1 ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ՍԻՐԱՅԴԵՂ-
2 Ս ԵԿԻ Ի ԴՈՒՌՆ ՍՐ ԱՄԱԾՆԻՍ
3 ՄԻԱՅԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ՀԱՍ-
4 ՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ:Դ: ԱԻՐ ԺԱՄ
5 ԲՈՒՆ ԲԱՐԱՅԿԵՆԴԱՆԻՆ ՍԱՐՔՍ-
6 ՈՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԿԵՆԱՅԿՑԻՆ ՈՐ ԽԱՓԱՆ-
7 Է ՄԵԸՂՍ ԱՌՅԷ

5) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻՆ, ԽԻՍՏ ՄԱՇՎԱԾ.

1 ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ . . . Ն ՈՐԴԻՍ Թ...
2 Ե ՇԻՆԵՑԻ ԶՄԱՏՈՒՌՍ Ի....
3 ԻՑ ԻՄ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ[Ք ՍՈՐԱ]
4 ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ...
5 ԱՒՆ . . . . . .
6 ՅՐ . . . . . .
7 ԵՒ . . . . . .

6) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻՆ՝ ՆԵՐՍԻՑ.

1 ԿԱՄԱԻՆ ԱՑ ՀԱՍՏԱՏԵՑ-
2 ԱԻ Ի ՏԱՐԻՆ:Բ: Ա Ի ԺԱՄԻ ՏԱԻՆԻ
3 ԲԱՐՍՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ :Ա: ՎԱՐԴ-
4 ԵԳՈՅՆԻՆ :Ա: ԲԱՆՈՊ . . . .
5 . . . . . .

7) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊԱՏԻՆ՝ ՆԵՐՍԻՑ.

1 ԿԱՄԱԻՆ ԱՑ ՀԱՍՏԱՏԵՑԱԻ
2 Ի ՏԱՐԻՆ :Բ: Ա Ի ԺԱՄ ԱԶԸԶԻՆ
3 Ի ՏԱԻՆԻ ՓԻԼԻՊՈՍԻ ԱՌԱՔԵԼ-
4 ՈՅՆ ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՑ

8) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ՝ ՆԵՐՍԻՑ.

1 ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ԱՆՏ-
2 ՐԻԱՍ ՔԱՀԱՆԱ ԵՒ ԱՄՈՒ-
3 ՍԻՆ ՄԻԱԲԱՆԵՑԱ
4 ՍՐ ԱՄԱԾՆԻՍ ԵՒ Ս-
5 ՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ՀԱՍ-
6 ՏԱՏԵՑԻՆ :Բ: ԺԱՄՆ
7 ՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ԱՆԽԱՓ-
8 ԱՆ ՈՎ ՁԱՌՆԷ ՄԵՐ
9 ՄԵՂԱՅՍ ՏԷՐ Է

9) ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻՆ՝ ԴՐՍԻՑ. ԽԻՍՏ ՄԱՇՎԱԾ ԵՎ ՅԵՂ-ՅԵՂ ԱՆԸՆԹԵՌՆԵԼԻ.

1 Ի: Զ ԵՍ ՇԵՐԱՆՇԱՀ ԵՒ . . .
2 [ԵՂԲ]ԱՐՔՍ ԷՏՎԱՔ ՁԱՅԳԻ . . .
3 . . . . ՍՐ ԱՄԱԾՆԻՍ ԵՒ Մ[Ղ.]-
4 [Թ]ԱՆԲՍ ՏՎԱՔ ԱԾ...
5 . . . . . ՅԺԸՐԻՑՆ ԳՐ

10) ԽԱՉՔԱՐ-ՄԱՀԱՐՔԱՆ, ՈՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹՈՒՄ.

1 ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱՅ ԹԱՇՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՅ
2 ՈՐ ՁԽԱՉՍ ԿԱՆԳՆԵԱՅ Ի ԹՎԻՍ
3 ՀԱՅՈՑ ՁԽ

ՆԿԵՐԻՉ ԲՈԳԴԱՆ ՍԱԼԹԱՆՈՎԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ԶԻՆԱՊԱՏՈՒՄ*

Ռուսաստանի և Հայաստանի միջև մշակութային կապերի մասին վկայող փաստեր ունենք ԺԷ դարից սկսած։ Հատկապես ուշագրավ է ԺԷ դարի Մոսկովյան Ռուսաստանում հայ նկարիչների մի ամբողջ խմբի գոյության փաստը։ Սակայն տվյալները քիչ են։ Այնուամենայնիվ որոշակի է այդ նկարիչներից մեկի՝ Բոգդան Սալթանովի գործունեությունը. նա եղել է պալատական նկարիչ ԺԷ դարում։ Նրա անունը հայտնի դարձավ Ի դարի մասնագետների նեղ շրջանին՝ շնորհիվ Ալեքսանդր Ուսպենսկու ուսումնասիրությունների։

Բոգդան Սալթանովը հայ նկարիչ էր, Ռուսաստան եկած Պարսկաստանից և երեսուն տարի շարունակ աշխատում էր Զինապատում որպես նկարիչ և սրբապատկերագիր։

Ռուսական արվեստի հին շրջանի ուսումնասիրությունները հատուկ տեղ են հատկացնում նրան ռուսական նկարչության պատմության մեջ և խոսում են Սալթանովի մասին որպես ԺԷ դարի Մոսկովյան խոշորագույն նկարիչ-սրբապատկերագրի։

ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ ԵՐԿՈՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ

(Բ. Սալթանով)

Սալթանովի անունը մոռացված էր բոլորովին և վերստին հայտնի դարձավ, երբ 1907 թվականին Ա. Ի. Ուսպենսկին մամուլում հանդես եկավ Սալթանովին նվիրված հոդվածով։

Այն ժամանակվա ռուսական պալատական նկարիչների ազգությունը հաճախ շատ դժվար է լինում որոշել, որովհետև նրանցից շատերը ռուսական հպատակություն էին ընդունում, ինչպես նաև՝ ռուսական ուղղա-

---

* *Քաղված Կ. Գրիգորյանի ռուսերեն համանուն աշխատությունից։— ԽՄԲ.։*

փառ հավատ ու փոխում իրենց նախկին անուն-ազգանունը։ Դրանից հետո, նրանք պաշտոնական փաստաթղթերում անվանվում էին Վասիլի Իվանով, Իվան Կիրիլով, Իվան Միկոլան և այլ անուններով։ Եվ այսպիսով այդ նկարիչներից շատ-շատերի իսկական ազգությունն ու անունը կորչում էին։

Սալթանովի վերաբերյալ այդ ասել չի կարելի, մի շարք պաշտոնական փաստաթղթերում նա ստորագրած է հայերեն։

Ստույգ հայտնի չէ ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Սալթանովը։ Ենթադրաբար կարելի է համարել, որ նա ծնվել է ԺԷ դարի 20—30-ական թվականներին Պարսկաստանի Սպահան քաղաքում։ Դժվար չէ գուշակել այն պատճառը, որ ստիպել է նրան թողնել հայրենի անկյունը և թափառելով հասնել մինչև Ռուսաստանի սիրտը և իր բախտը փորձել ռուսաց ցարի պալատում։ Բավական է հիշել միայն, որ պարսկական ստրկական լծի տակ ինչպես էր տառապում հայ ժողովուրդը ԺԷ դարում։

Սալթանովը Ռուսաստան եկավ արդեն որպես հմուտ նկարիչ։ Նա գրագետ մարդ էր. ազատ գրում-կարդում էր հայերեն. մի բան, որ հիմք է տալիս ենթադրելու, որ սովորել է հայկական վանքերից մեկում, որոնք այն ժամանակ մշակույթի և լուսավորության յուրօրինակ կենտրոններ էին։ Սալթանովը եկած էր Սպահան քաղաքից, որտեղ մանրանկարիչ-կենդանագիրների դպրոցը լայն հռչակ ուներ։ Այդ դպրոցի նկարիչների աշխատանքի նմուշները պահպանված են և քիչ չեն։ Մինչև օրս աչքի է ընկնում Նոր-Ջուղայի նկարչությունը եկեղեցում։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ, մեծ փառք էր վայելում այդ դպրոցի նկարիչ Մինասը։ Նա նկարազարդում էր հարուստ հայերի տները։ Հիմք կա ենթադրելու, որ նա մասնակցել է նաև եկեղեցիների նկարազարդմանը։ Ջուղայում եղել են նաև մանրանկարիչներ։ Առանձնապես պետք է նշել Հակոբ Ջուղայեցուն, որից մեզ է հասել մի քանի ձեռագիր։

Լիովին կարելի է ենթադրել, որ Սալթանովը պատկանել է այդ հայ նկարիչների շարքին։ Դժբախտաբար նրա մանրանկարչական աշխատանքներից ոչ մեկը մինչև օրս հայտնաբերված չէ, սակայն փաստաթղթերից հայտնի է, որ նա զբաղվում էր ոչ միայն նկարչությամբ, այլ հմուտ էր նաև գրքեր զարդարելու արվեստի մեջ, եղել է մանրանկարիչ։

Այն ժամանակվա Մոսկվայի թագավորական Զինապալատը հսկայական մի արվեստանոց էր, որտեղ կենտրոնացված էր ոչ միայն զինագործությունը, այլ նաև նկարչության, սրբապատկերանկարչության, դրոշների, գրքերի, հրովարտակների զարդարման աշխատանքը։ Նույն տեղում տեղավորված էին նաև դարբնոցը, հյուրանոցը, կառանոցը և այլ արհեստանոցներ։

Սալթանովը արքունիքից ստանում էր բարձր ռոճիկ։ Նա Մոսկովյան ազնվականի կոչում ուներ։ Նա եղել է հիանալի նկարիչ և կատարել է միշտ ամենապատասխանատու պատվերներ, ռուսաց ցարի պալատի և եկեղեցիների համար։

Պահպանվել է Սալթանովի ստեղծագործությունների մի ընդարձակ ցուցակ, որտեղ նշվում են աշխատության տեսակը, տարեթիվը և ավարտման ամսաթիվը։ Այդ ցուցակը շատ կարևոր է մեզ համար, քանի որ Սալթանովի աշխատանքների մեծ մասը անհետ կորել է։ Ձեռագրերում Սալթանովը կոչվում է սրբապատկերների նկարիչ։ Ուրեմն բազմապիսի աշխատանքների մեջ գերակշռում էին սրբապատկերները։ Նրա սրբապատկերներից շատերը պահպանվել են և այժմ գտնվում են Մոսկվայի Կրեմլի պալատի Խաչելության եկեղեցում, ինչպես օրինակ Կենարար Խաչի պատկերը, Տիրոջ Համբարձումը, Աստվածամայրը երկու հրեշտակների հետ, Հովհաննես ավետարանիչ և Աստվածամայրը։

Զինապալատում Սալթանովը աշխատել է երկար ժամանակ՝ ավելի քան 35 տարի։ 1702 թվականից սկսյալ փաստաթղթերում այլևս չի հիշատակվում Սալթանովի անունը։ Թե ի՞նչ է պատահել նրան, որտե՞ղ և ի՞նչ պարագաներում անցկացրել է իր կյանքի վերջին տարիները, այդ հայտնի չէ։

ԺԷ դարի ռուսական սրբապատկերանկարչության ընդհանուր ֆոնի վրա Սալթանովի նկարները աչքի են ընկնում յուրահատուկ ոճով և կերպարներով։

Ա. Ի. Ուսպենսկին գրում է. «Սալթանովը հսկայական օգուտ բերեց ռուսական արվեստին նրանով, որ նրա մեջ մտցրեց նոր, կենարար, թարմ շունչ։ Նա բոլորից շատ և բոլորից երկար աշխատեց Զինապալատում և բազմաթիվ ռուս մարդկանց սովորեցրեց նկարչություն։ Եղել է ժամանակ, երբ մեր ռուսական պալատներում, ի թիվս այլ թանկագին զարդերի, կային նաև Սալթանովի նկարները»[1]։

[1] Ուսպենսկի. «Թատրան», էջ 245։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՍՏԵՂ, «ԵՂՈԹԵՐՆ»

(Թեյրուր ,1957 թ.)

Այս խորագիրն ունի այն փոքրիկ հատորը, որ 1957 թվականին լույս է ընծայել «Համազգային» մատենաշարը։ Հատորի հեղինակը՝ Համաստեղը, արևմտահայ արձակի ականավոր ներկայացուցիչներից մեկն է, որն ուղիղ գծով կարողացավ շարունակել մեր լավագույն գյուղագիրների՝ Թլկատինցու և Զարդարյանի գրական լավագույն ավանդությունները՝ համեմատաբար ավելի արդիական տարազով։ Քսանական թվականներից սկսյալ նրա հրատարակած հատորները («Գյուղը» 1924 թ., «Անձրև»-ը 1929 թ., «Սպիտակ ձիավորը»-ը 1952 թ. և «Քաջն Նազար և 13 պատմվածքներ» 1955 թ.) արժանացան սփյուռքահայ գրասերների ջերմ ու խանդավառ ընդունելության։ Արևմտահայ գրաքննադատությունը իրավամբ իր ժամանակին Համաստեղի մեջ ողջունեց մի այնպիսի գրողի, որը սեղմ և պատկերավոր լեզվով, դիպուկ, յուրահատուկ մանրամասներով տալիս էր ոչ միայն արևմտահայ գյուղի հարազատ պատկերը, այլև գյուղի մարդկանց հոգեբանությունը, գյուղական կենցաղի արժեքն ու խորհուրդը։ Արդարև, որպես գյուղագիր Համաստեղը ոչ թե սոսկ բավարարվեց գյուղական բարքն ու կենցաղը նկարագրելով, այլ նաև գյուղական միջավայրից վերցրած գեղեցիկ պատկերներով, հերոսների ու նրանց կյանքի պատկերումով իսկապես համամարդկային հարցեր կարողացավ առաջ քաշել և մարդկային հոգեբանության մասին ընդհանրացումներ անել։

Բնանկարի մեծ վարպետ է Համաստեղը։ Գյուղագիր արվեստագետի նուրբ խառնվածքով օժտված մի այնպիսի գրող է նա, որն ամենայն համոզչականությամբ կարողանում է արտահայտել այն հոգեհարազատությունը, որ կա գյուղացի մարդկանց և բնության միջև։ Նրա լավագույն պատմվածքներից «Տափան Մարգարը», «Ներնեկ էն օրերուն», «Ջալոն», «Միլոն» պատկանում են արևմտահայ արձակի խոշոր նվաճումների թվին և միշտ էլ մեծ սիրով պիտի կարդացվեն մեր տոհմիկ կյանքի գեղեցկություններին սիրահար հայ ընթերցասեր հասարակության կողմից։

Նրա վերջին գործը՝ «Աղոթարան»-ը, արտահայտությունն է նոր մտահոգություններին, որոնք նոր էջ են և՛ Համաստեղի ստեղծագործությունների մեջ, և՛ ընդհանրապես հայ արդի գրականության մեջ։ Իր այս գործով գյուղագիր Համաստեղը հանդես է գալիս որպես արձակագիր բանաստեղծ՝ իր հոգին լցնող նորանոր մտահոգություններն ու հույզերը մեզ ներկայացնելու նպատակադրումով։ «Աղոթարան»-ը 22 գլուխներից բաղկացած աղոթքների մի շարք է, որոնք կարդացվում են հետաքրքրությամբ, հաճույքով և երբեմն էլ հուզումով։ Ահա մի քանի սքանչելի տողեր.

«Տեր, Քու շունչովն է, որ կրորրոքին իմ երազները, և անոնց բոցերուն մեջեն Քու ձայնը կլսեմ» (էջ 11)։

«Ես մաքուր պիտի պահեմ այդ տաճարը։ Պիտի վառեմ կանթեղներն ու ջահերը։ Խընկամանին խունկն անպակաս պիտի ընեմ, Տեր, որ չըլլա, չըլլա օր մը հեռանաս ու լքես զիս» (էջ 6)։

«Առաջին անգամ խաղաղության մեջ լսեցին Քու ձայնը» (էջ 21)։

«Վայ ինձ, որ նվագարան ունեցա ու չկրցի երգեր հորինել անոր լարերուն վրա։ Վայ ինձ, Տեր, որ վիշտ ունեցա, սակայն արցունք չգտա։ Վայ ինձ, որ հաճախ անցար իմ քովեն, ու ես չճանչցա Քեզ, Տեր» (էջ 22)։

«Իմ գոյության մեջ է, Տեր, որ կամքդ ըլլա Քու կերպարանքը ու իմ հավատքին մեջ՝ Քու հավիտենականությունը...» (էջ 88)։

Սակայն աչքի առաջ ունենալով ամբողջ գործը, պիտք է հարց տալ, թե արդյոք հեղինակին հաջողվե՞լ է աղոթել այնպես, ինչպես պիտի աղոթեր իր հոգու զգացողությամբ համագույքը ընկալող, սրտով մտածող մարդը։ Մեր կարծիքով Համաստեղի աղոթքները, բացի մի քանիսից, ընդունված իմաստով աղոթքներ չեն, այլ ուրիշ մտահո-

գությունների արտահայտություն, որոնք իրենց արծարծած մտքերով և զգացումներով դուրկ չեն անշուշտ շահեկանությունից և վկայում են հեղինակի հոգեկան աճի և ընդարձակման մասին։ Դժվար է որոշակի և հստակ դարձնել այն անտեսանելի ուժը, մտատիպարը, այն գերկատարյալ էակը, որին ուղղված են հեղինակի աղոթքները։ Ո՞րն է Համաստեղի ներշնչման աղբյուրը. արդյոք բրիստոնեական Աստվա՞ծը։ Երբեմն կարծես այո՛. Համաստեղի իմացական և բարոյական մտահոգությունները համընկնում են քրիստոնեական վարդապետության և մարդասիրական բարոյականի հետ. երբեմն կարծես ո՛չ. ժխտվում է Աստուծո գոյությունն անգամ։ Համաստեղը Աստուծո գոյությունը պայմանավորում է իր իսկ մարմնական գոյությամբ, այլ խոսքով՝ Աստված նրա «մարմնին և զգայարանքներուն» տենդի արտացոլումն է։ Ժէ գլխում կարդում ենք. «Թե քեզ կփառաբանենք, Տեր, կփառաբանենք մեր զգայարանքները, որ այնքան իմաստուն են Քեզ զգալու, Քեզ տեսնելու, Քեզ լսելու և իրականության մը պես Քեզ շոշափելու մեր մարդկային ու մահկանացուի կերպարանքին մեջ»։

Անորոշ և հակասական է Աստուծո գոյության կերպարը և գոյությունն իսկ։ Մեր կարծիքով այս է պատճառը, որ Համաստեղի աղոթքները դեպի երկինք չեն բարձրանում, չեն տալիս մեզ հոգեկան այն խորունկ խռովքը և սարսուռը, որ հատուկ է ճշմարիտ աղոթքին։ Իսկ զուտ գրական տեսակետից, նույն պատճառով «Աղոթարան»-ին պակասում է ներքին միաձուլումը, ամեն ինչ միաձուլող, ամեն ինչ նույն ապրումին մեջ միավորող ուժը, որով պայմանավորված է բանաստեղծական ամեն ստեղծագործություն։

Աղոթքները, թե՛ իբրև մտածում և ապրում, թե՛ իբրև բանաստեղծական հորինվածք, արտահայտության կերպ, անհավասար են և իրար հետ ոչ միշտ ներդաշնակ։

«Աղոթարան»-ի մեջ ծիածանվում են գույներ և լույսեր Աստվածաշնչից, Նարեկից, պանթեիստ Արևելքից, Ռարինդրանաթ Տագորից։ Կան պատկերներ, որոնք հիշեցնում են Մեծարենցին, Վարուժանին և ուրիշներին։

Աղոթքների մեջ շոշափված են ընդհանրապես կենսական մեծ նշանակություն ունեցող շատ հարցեր. արտահայտված են հոգու բարձրագույն վիճակներ, ճիշտ մտքեր, սակայն այդ վիճակները չունեն ներշնչող ուժ, որովհետև բացակայում է այն տարերքը, որն այդ բոլորը պիտի կենդանացներ, վերածեր միաձույլ հույզի և ապրումի։ Ամեն ինչ մտքով է միայն ընկալված, պարուրված բանականության թաղանթով։ Հեղինակը ավելի նկարագրում է, վերլուծում և թարգմանում իր խոհերը, քան հրճվում, հուզվում, տառապում։

Ինչո՞վ է պայմանավորված մեր ամենավավերական, միստիկ բանաստեղծի՝ աղոթասաց Նարեկացու աղոթքների հմայքն ու վարակիչ ներգործությունը. նրանով, որ Նարեկացին զգում է Ամենակատարյալի անհասանելի իրական գոյությունը և զգալով՝ անկատարությունը իր անձի ու ողբերգությունն իր կյանքի, ալեկոծվում է սարսափազդու տեսիլքներով և մի վերջին հույսով՝ խենթացած՝ ուզում է մոտենալ ու խոսել Աստուծո հետ երգելով, արտասվելով, այրվելով սուրբ ապրումների բոցերի մեջ։ Համաստեղը շատ հանգիստ է, դրեթե տառապանք չունի. ընդհակառակը, նա Աստուծուն զգում է իր «մարմնին ըշիշներուն և զգայարանքներուն մեջ», նա իր «մարմնեն և զգայարանքներեն դուրս» չի ուզում «փնտռել իր Աստվածը»։ Չկա հեռավորություն, չկա բարձրություն իր և Աստուծո միջև։

Այնուամենայնիվ, հակառակ մեր բոլոր նկատառումներին, կարելի՞ է արդյոք եզրակացնել, որ «Աղոթարան»-ը հեղինակի ստեղծագործությունների մեջ ձախողված գործ է։ Իհարկե ո՛չ։ Ինչպես հոդվածի սկզբում նշեցինք, «Աղոթարան»-ում կան զգայուն և գեղեցիկ էջեր, որոնք վկայում են հեղինակի հասուն, նուրբ ճաշակի, հոգեկան աճի և ընկալչական կարողությունների ընդարձակման մասին։ Բարձրարվեստ ընթերցումների ազդեցության, ինչպես նաև, ինչո՞ւ չէ, իր անձնական փորձառության շնորհիվ, Համաստեղը հասել է մի այնպիսի հոգեկան զարգացման աստիճանի, որ նրան հաղորդակից է դարձնում բարձրագույն ճշմարտությունների և գեղեցկությունների։

Արվեստագետ Համաստեղի հատկությունները այս գործում նույնպես զգացնել են տալիս իրենց։ Վերացական, անշոշափելի,

նուրբ ու խուսափուկ վիճակներն ու մտքերը Համաստեղը գիտե թանձրացնել ու մատչելի ընծայել՝ բնությունից, կյանքից վերցրած գեղեցիկ, ցայտուն պատկերներով և դիպուկ համեմատություններով։ Աղոթքները գրված են ընտիր արևմտահայ չափական արձակով, որի մեջ զգացվում է բանաստեղծական նուրբ ճաշակ։ Լեզուն մշակված է, ողորկ, անսեթևեթ և իր պարզության մեջ գեղեցիկ։ Պատկերավորությունը նրա լեզվի առաջին հատկանիշն է։ Ամեն էջի մեջ հանդիպում ենք բազմաթիվ գեղեցիկ, բնորոշ մակդիրների, փոխաբերությունների և այլ պատկերավոր արտահայտությունների, ինչպես, օրինակ՝ «կենարար արցունք», «մարմնեղեն ժպիտ», «գուեավոր երազներ» և այլն, որոնք միշտ հրապուրիչ են իրենց թարմությամբ, ինքնատիպ և մեզ ընտանի զգայնությամբ ու գրեթե միշտ համապատասխան արտահայտած գաղափարին ու զգացման։ Կան նաև վրիպումներ, անարտահայտիչ ձևեր ու բառակապակցություններ. այսպես՝ «ծաղիկներու և մեղուներու իմացական խոովքը», «մարմարի իմացականություն», «ծաղիկները կժպտեին իմացական ժպիտով» և այլն։

Ուշագրավ է այս գործի մեջ նույնպես Համաստեղի ոճը, որը զուսպ է, պայծառ, կարճաբան և հիշեցնում է աստվածաշնչական ոճի պարզությունը։

Մենք սիրով ենք ողջունում սփյուռքահայ լավագույն գրագետներից Համաստեղի «Աղոթարան»-ի հրատարակությունը և նրա վավերական տաղանդից սպասում ենք հետագա նոր ստեղծագործություններ՝ նոր ներշնչումներով և նոր տեսիլքներով, արգասավորված մեր վերածնված Մայր Երկրի ու մեր հարազատ ժողովրդի կենդանության աղբյուրներից։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆՑ
(1878—1959)

Փետրվարի 12-ին, խոր ծերության մեջ, Թբիլիսիում ի Տեր հանգավ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Տեր-Հարությունյանի Պողոսյանցը։

Հանգուցյալը ծնվել էր Սպիտակում, 1878 թվականի ապրիլին։ 1895—1897 թվականներին սովորել էր Գևորգյան ճեմարանում, և ապա 1900—1905 թվականներին ծառայել Բաքվի և Թբիլիսիի հայ եկեղեցիներում՝ որպես դպիր։

1905 թվականին ձեռնադրվում է քահանա Սևանի առաջնորդ Տ. Սարգիս եպիսկոպոս Փիլոյանից և քահանայագործում մինչև 1917 թվականը, իր ծննդավայրը գյուղում, զբաղվելով նաև ուսուցչությամբ։

Հանգուցյալը հավատավոր, պարտաճանաչ, Հայ Եկեղեցու կարգ ու կանոնին նախանձախնդիր հոգևորական էր և իր արդյունավետ պաշտոնավարության համար սիրված իր ժողովրդից և Գևորգ Ե կաթողիկոսի կողմից պարգևատրված՝ ծաղկյա փիլոնով և լանջախաչով։

Հանգուցյալը զբաղվում էր նաև գրականությամբ։ Նա ունի բանաստեղծություններ, պատմվածքների, առածների, հեքիաթների և քարոզների ժողովածուներ։ Այս բոլորի հետ միաժամանակ հանգուցյալը հայ հողի զավակ էր, սիրում էր իր ազատ ժամերին զբաղվել այգեգործությամբ, մեղվապահությամբ։

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվեց փետրվարի 15-ին Թբիլիսիում, հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի նախագահությամբ, որը դամբարանական խոսեց հանգուցյալի դագաղի վրա, ծանրանալով նրա եկեղեցական և ժողովրդին նվիրված հոգևորականի գործունեության վրա։

Հանգի՛ստ նրա հոգուն։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։